Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում լեզվաբանական և հոգեբանական մի այնպիսի երևույթի, որպիսին գունանվանման և գունընկալման փոխհարաբերության խնդիրն է: Հենվելով լեզվաբանական և լեզվահոգեբանության տեսությունների վրա՝ քննության է առնվում տարբեր հանրություններում գունանունների կենսաբանական ընկալումների ընդհանրության և դրանց քանակական տարբերությունների լեզվահոգեբանական մեխանիզմը: Սասնավորապես քննությունը տարվում է լեզվական հարաբերականության և լեզվական համընդհանրության տեսությունների շրջանակներում: Նշյալ տեսությունների համատեքստում հաշվի են առնվում նաև հայերենի առանձնահատկությունները:

Բանալի քառեր. լեզվական հարաբերականություն, լեզվական մեխանիզմ, պատճառաբանվածություն, լեզվական կարգ, հանրույթ, լեզվական համընդհանրություն, գունային գեղագիտություն, քառաբաղադրիչ համակարգ, գունաբառապաշար, լեզվամշակույթ, կարգայնացում

Ժամանակակից գիտության տվյալներով հաստատված է, որ մարդու զգայական օրգանները /այդ թվում նաև տեսողական/ անկախ էթնիկական պատկանելությունից, ունեն նույն կենսաբանական կառուցվածքը: Այստեղից հետևում է, որ աշխարհի իրերն ու երևույթները /այդ թվում նաև գույները/ նույն կերպ են արտապատկերվում մարդու գիտակցության մեջ, սակայն տարբեր լեզուներով խոսող մարդիկ տարբեր կերպ են հատվածավորում և անվանում արտալեզվական աշխարհը: Տարբեր են նաև իրերի և երևույթների մեկնաբանման հոգեբանական և լեզվական մեխանիզմները այս կամ այն հանրությունում: Նշյալ իրողությունների փոխհարաբերություններին են առնչվում լեզվաբանական բնույթի բազում հարցադրումներ, որոնցում առանցքային նշանակություն է ձեռք բերում լեզուներում համընդհանուր օրենքների գոյության/չգոյության խնդիրը, որի քննության շրջանակներում էլ գույն-գունընկալում-գունանվանում-գունիմաստ քառանդամը դարձել է լեզվաբանների գիտական հետաքրքրությունների կենտրոնական առարկաներից մեկը: Այս համատեքստում ձևավորվել են երկու իրարամերժ տեսություններ՝ լեզվական հարաբերականության և լեզվական համընդհանրության:

Համաձայն Սեպիր-Ուորֆի հարաբերականության տեսության՝ մտածողությունը և աշխարհաճանաչումը էապես պայմանավորված են լեզվական համակարգով: Նման վարկածի համար հիմք է ծառայել այն փաստը, որ տարբեր լեզուներում առկա են *գույն* արտահայտող տարբեր քանակի բառամիավորներ /պարզ և բարդ/, որոնք մատնանշում են գունային սպեկտրի հատվածները: Այստեղից էլ արվում է այն հետևությունը, թե մարդն աշխարհը ճանաչում է այն

չափով, որ չափով տվյալ լեզվում առկա են /կամ առկա չեն/ համապատասխան լեզվական կարգերը: Ահա, թե ինչ է գրում այս մասին Ուորֆը. «Մենք հատվածավորում ենք աշխարհն այնպես, ինչպես մեզ հուշում է մեր մայրենի լեզուն»: Երևույթների շարքում մենք առանձնացնում ենք այս կամ այն կարգը, տիպը ոչ թե այն պատճառով, որ նրանց գոյությունն ինքնին ակնհայտ է, այլ այն, որ դրանք մեզ ներկայանում են որպես գեղագիտական տպավորությունների հոսք, որը պետք է կարգավորվի /կազմակերպվի/ մեր գիտակցության մեջ՝ այսինքն լեզվական համակարգի կողմից /Sapir, Whorf, 1999/:

Եթե ասվածը վերագրենք աշխարհի գունային լեզվական պատկերի ստեղծմանը, ապա պետք է արձանագրենք, որ մարդն ընկալում է միայն այն գույները, որոնց անվանումները առկա են իր մայրենի լեզվում: Այս վարկածի քննադատները գտնում են, որ նման եզրակացությունը չափազանցված է և արդյունք է հետազոտական լեզվական նյութի ոչ մեծ ծավալի: Գի Դոյչերի կարծիքով, եթե լեզվում բացակայում է որևէ հասկացություն, ապա դա ամենևին չի նշանակում, որ տվյալ հասկացությունը գոյություն չունի մտածողության տիրույթում: Հակառակ դեպքում ստացվում է, որ *ազատություն* բառի բացակայության պարագայում ստրուկները կարող են հրաժարվել ապստամբությունից: Գերմաներենի *schadenfreude /չարախնդրություն/* բառի բացակայությունը ֆրանսերենում ամենևին չի նշանակում, որ ֆրանսիացիներին հատուկ չէ *se réjouir des malheurs d'autrui* հոգեվիճակը /Deutscher, 2010/:

Լեզվական համընդհանրության տեսության ներկայացուցիչներ Բ. Բերլինը և Պ. Կեյը հեղինակել են մի ստվար աշխատություն՝ նվիրված գունանվանումների խնդրին, աշխարհի մի քանի տասնյակ լեզուներում: Փորձարարական ճանապարհով, քննության ենթարկելով այս կամ այն տարբեր լեզվաընտանիքին պատկանող շուրջ ութսուն լեզուների տվյալներ, հեղինակները գալիս են հետևյալ եզրակացության. աշխարհի լեզուներում գունանունների զարգացումը ենթարկվել է որոշակի համընդհանուր օրինաչափությունների և ընթացել հետևյալ փուլերով.

- *առաջին* փուլում գործածության մեջ են դրվում նախ *սև* ու *սպիտակ* կամ *բաց* և *մուգ* գունանունները,

- *երկրորդում* ի հայտ են գալիս *կարմիրը, կանաչը, դեղինը, կապույտը, գորշը,*

- *երրորդում* տարբեր հաջորդականությամբ՝ *վարդագույնը, նարնջագույնը, մոխրագույնը,* որոնք կազմում են տասնմեկ հիմնական գույների համակարգը:

Գիտնականների համոզմամբ՝ գունանունների քանակը տվյալ ժամանակահատվածում կախված է լեզվի պատմական զարգացման մակարդակից: Այլ կերպ ասած՝ քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց մեծանում է գունանունների քանակը /Berlin, Kay, 1969/: Գունանունների փուլային զարգացմանը անդրադարձել են նաև այլ հետազոտողներ՝ նկատելով դրանց ձևավորման այլ հերթականություն: Այսպես, Է. Օնոլը գունընկալման և գունանվանման պատմությունը բաժանում է երեք փուլի: Առաջինում, ըստ նրա,

տարբերակվել են միայն սևն ու սպիտակը /նկատենք, որ այս կարծիքը համընկնում է Բերլինի և Կեյի տեսակետին/, երկրորդում՝ կարմիրն ու դեղինը, երրորդում՝ ի հայտ են գալիս այսպես կոչված *սառը* գույները /կանաչը, կապույտը և այլն/ և դրանց երանգները /Онол, 2005/:

Հարկ է նշել, որ գունանունների պատմական զարգացման օրինաչափությունների ուսումնասիրության համար որպես հարուստ նյութ են ծառայել գրական ստեղծագործությունները, սակայն միևնույն փաստի հիման վրա արվել են տարբեր, երբեմն էլ իրարամերժ եզրահանգումներ, մասնավորապես գունընկալման և գունանվանման փոխհարաբերության հարցում: Որպես ասվածի վառ ասպացույց բավական է միայն մեջբերել արդեն դասական դարձած, այսպես կոչված *Հոմերոսի* օրինակը: Նշյալ տեսությունների կողմնակիցներից ոմանք Հոմերոսի ստեղծագործությունը վերագրում են գունանունների զարգացման երկրորդ փուլին: Այս վարկածի հեղինակ Գլադստոնին մման եզրահանգման է մղել այն փաստը, որ Հոմերոսը շատ տարօրինակ կերպով է նկարագրել որոշ առարկաների գույները: Ասենք ծովը՝ գինու գույն, երկինքը՝ մուգ մանուշակագույն և այլն: Այլ կերպ ասած՝ գունանվանումները չեն համապատասխանել առարկաների իրական գույներին: Այստեղից էլ եզրահանգել է, որ տվյալ ժամանակաշրջանում հույները պարզապես անտարբեր են եղել որոշ գույների նկատմամբ /տվյալ դեպքում կապույտի և կանաչի/ և լեզվում չեն ունեցել համապատասխան գունանուններ /Gladstone, 1858/: Գլադստոնի այս վարկածը լայն ընդունելության արժանացավ հատկապես այն տեսաբանների կողմից, որոնք ազգերի բազմազանությունը բացատրում են ոչ այնքան մշակութային, որքան կենսաբանական գործոններով /Deutscher, 2010/: Այս հարցի նկատմամբ գիտնականների հետաքրքրությունը չի մարել մաս մեր օրերում, և գտնվում են ինչպես կողմ, այնպես էլ դեմ արտահայտվողներ: Այսպես, Կլոդ Ռոմանոյի կարծիքով, քանի որ Հոմերոսը կույր էր, նրա գունային ընկալումները չի կարելի նույնացնել հունական լեզվահանրույթի սովորական ներկայացուցչի գունընկալումների հետ: Հաջորդ հակափաստարկն էլ այն էր, որ Հոմերոսը պոետ էր, իսկ պոետներին միշտ էլ հատուկ է իրերն ու երևույթները այլակերպ, գեղարվեստորեն նկարագրելը /Romano, 2010/:

Հոմերոսը չէր կարող կույր լինել, հավաստիացնում է Գի Դոյչերը, այն պարզ պատճառով, որ ստեղծագործության մեջ բոլոր նկարագրությունները շատ կենդանի և իրատեսական են, տարօրինակ են միայն գունանվանումների ձևակերպումները: Դոյչերի կարծիքով Գլադստոնը պարզապես շփոթել է պատճառն ու հետևանքը: Այսինքն՝ հին հույները ոչ թե գուրկ էին որոշակի գույներ ընկալելու կենսաբանական հնարավորությունից, այլ դեռ չունեին տվյալ գույներին համարժեք անվանումներ /Deutscher, 2010/:

Նման դիտարկումներ են կատարվել նաև հին սլավոնական լեզուների նյութի հիման վրա: Հետազոտողները հանգել են այն եզրակացության, որ միջնադարյան գրական ստեղծագործություններում շատ պարզունակ է ներկայացվել գունային ներկայանակը, որում տեղ չեն գտել դեղին, կապույտ, գորշ գույները: Սակայն այս դեպքում մեկնաբանությունները չեն հասնում գուն-

ընկալումների խնդրին, այլ սահմանափակվում են միջնադարյան պոեզիայի առանձնահատկությունների մատնանշմամբ՝ այն է. «Միջնադարյան պոեզիային հատուկ չէր գունային գեղագիտությունը, և գույնը մնացել է գեղարվեստական տեքստից դուրս», սակայն XVI դարից սկսած, ինչպես նշում են շատ գիտնականներ, նկատվում է հակառակ միտումը: Գեղարվեստական գրականության, հատկապես պոեզիայի մեջ. «զանազան գեղարվեստական պատկերների ստեղծման համար անհրաժեշտություն է զգացվում նորանոր գունային անվանումների», որոնք հարստացնում և ընդլայնում են գունանվանումների ցանկը /Бородина, Гак, 1979/:

Գունանվանումների ծագման փուլային տեսությունները քննադատության ենթարկվեցին նախ և առաջ փորձարարական և հետազոտական մեթոդների ոչ կատարյալ լինելու պատճառաբանությամբ /Вежбицкая, 1996/: Բերվեցին նաև այլ հակափաստարկներ, որոնք առավել ամփոփ ձևով շարադրված են Մաք-Նեյլի աշխատություններում: Փորձենք հակիրճ ներկայացնել նաև նրա տեսակետը:

Գունանունների առաջացման համընդհանուր հերթականություն տարբեր լեզուներում գոյություն ունենալ չի կարող, քանի որ դրանց ծագումը նախ և առաջ պայմանավորված է տվյալ լեզվամշակույթում գույների կիրառական գործառնությունների կարևորությամբ, համապատասխան գունակիր առարկաների օգտագործման անհրաժեշտությամբ և հաճախականությամբ: Չէ՞ որ ի սկզբանե գունանունները եղել են առարկաների անվանումներ, իսկ հետագայում աստիճանաբար վերացարկվել են: Այդ իսկ պատճառով ամեն մի լեզվամշակույթ ունի գունանունների ծագման և զարգացման սեփական պատմությունը: Գունանվան ծագումը սերտորեն կապված է նաև տվյալ հանրույթի անհատի ընկալման հոգեբանական առանձնահատկությունների հետ: Որոշ հոգեբանների կարծիքով, կարմիր-կանաչ, երկնագույն-դեղին գունագույգերը անբաժանելի միասնություն են կազմում որոշ մշակույթների պատկանող մարդկանց ընկալման հոգեբանական տիրույթում: Այն իր արտահայտությունն է գտել չինարենի և ճապոներենի հիմնական գունանվանումների քառաբաղադրիչ համակարգում՝ սև, սպիտակ, կանաչակարմիր, դեղնաերկնագույն /McNeil, 1996/:

Ընդունելով, որ լեզուներում գույների համընդհանուր իմաստների գոյությունը արդյունք է պատճառահետևանքային գործընթացի, որոշ հետազոտողներ այդ երևույթի հիմքում տեսնում են կենսաբանական պատճառաբանվածություն /Berlin, Kay, 1969/, ոմանք էլ այլ բնույթի մեկնաբանություններ են հնչեցնում: Մասնավորապես Ա. Վեժբիցկայան *Գույների անվանումները և տեսողական ընկալման համընդհանուր կադասպարը* աշխատության մեջ նշում է, որ գունանվանումները համընդհանուր հասկացություններ չեն, մինչդեռ տեսողությունը իրապես համընդհանուր մարդկային իրողություն է: Նրա կարծիքով անհնարին է գունային տպավորությունները բառերով արտահայտել, հնարավոր է միայն մեր տեսողական կարգերը հարաբերել ընդհանրորեն ընկալվող որոշ կադասպարների: Նա այդ կադասպարների թվին է դասում կրակը, արևը, երկինքը և բուսականությունը: Վեժբիցկայան հայտնում է նաև

այսօր մեծ տարածում գտած այն միտքը, թե գունանունների ստեղծման փուլը բնութագրվում է նույն առանձնահատկություններով՝ բոլոր լեզուների համար: Այն է՝ գունանունների համար հիմք են ծառայում օբյեկտների անունները: Վեժբիցկայայի կարծիքով աշխարհի լեզուների համընդհանուր առանձնահատկություններից մեկն այն է, որ գունանվան նկարագրության համար հիմք են հանդիսացել մարդու բնակության վայրի համար որոշակի կարևորություն ներկայացնող առարկաներ, հանքանյութեր, կենդանիներ, բույսեր և այլն /Вежбицкая, 1996/: Այս տեսակետը կիսում են նաև Գ. Միլը, Գ. Սպենսերը /Милль, Спенсер, 1870/: Որոշ հետազոտողներ էլ գտնում են, որ գունանունների բազմազանությունը ձևավորվում է այսպես կոչված առաջնային գույների /կարմիր, կանաչ, կապույտ, դեղին/ անվանումներից /Геринг, 1870/:

Այս երկու իրարամերժ տեսություններում առաջ քաշված դրույթները քննարկման առարկա են դառնում նաև ժամանակակից հոգեբանության և ճանաչողական /կոգնիտիվ/ լեզվաբանության լույսի ներքո: Է. Ռոշն իր հոդվածներից մեկում նշում է այն միտքը, որ մասնավորապես 90-ական թվականներից սկսած ուրվագծվում է մի հետաքրքիր երևույթ: Ուորֆի լեզվական հարաբերականության վարկածը կարծես թե վեր է հառնում մոխիրներից, փորձ է արվում վերաարժեքավորել այդ դրույթները ժամանակակից լեզվաբանության նոր հայեցակարգային իրողություններին համապատասխան, օրինակ՝ Ռ. Լանգաքերի ճանաչողական քերականությունը, Գ. Պալմերի մշակութային լեզվաբանությունը և այլն /Langacker, 1987, Palmer, 1996/:

Նույն աշխատության մեջ Ռոշը գրում է, որ ամենացավալին այս ամենում այն է, որ Ուորֆի վարկածի քննադատությունը մինչ այսօր գռեհիկ պարզունակեցման փորձ է: Ինչ վերաբերում է Բերլինի և Քեյի տեսությանը, ապա այն քննության ենթարկվեց հոգեբանության տեսանկյունից /Spencer, Rosch, 1978/:

Գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում գույների խորհրդանշանային իմաստների ուսումնասիրությունը լեզվամշակութային համատեքստում ինչպես տարածամանակյա, այնպես էլ համաժամանակյա կտրվածքով: Խորհրդանշանի մասին ամենատարածված պատկերացումը, գրում է Լուրմանը, կապված է որոշակի բովանդակությամբ որևէ գաղափարի հետ, ինչն էլ իր հերթին ծառայում է որպես արտահայտության պլան՝ մեկ այլ՝ մշակութային առավել արժեքավոր բովանդակության համար /Lührmann, 1999/: Յուրաքանչյուր խորհրդանշան, նշում է Արուտյունովան, պատկեր լինելով հանդերձ, ունի ավելի բարձր նշանային կարգավիճակ, ինչով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ այն շատ հաճախ մեկնաբանվում է մշակույթի համատեքստում /Арутюнова, 1999/:

Այս առումով ուշագրավ են անգլիացի ազգագրագետ Վ. Թերների աշխատությունները, որոնցում փաստացի մեծածավալ լեզվական նյութի հիման վրա վերլուծության են ենթարկվել աֆրիկյան մի շարք ցեղերի կյանքում գույների խորհրդանշանային իմաստները: Այսպես, աֆրիկյան *Նդենբու* ցեղի պատկերացման մեջ Աստված գոյություն ունի երեք էություններում, որոնցից յուրաքանչյուրը ներկայացվում է իրեն հատուկ գույնով՝ սպի-

տակ, սև, կարմիր: Թերների կարծիքով, հիմնական գույների խորհրդանշանային իմաստների ակունքները պետք է փնտրել մարդու կենսահոգեբանական փորձի մեջ: Նա գտնում է, որ անժխտելի է սպիտակ գույնի կապը մարդու օրգանիզմի երկու կարևորագույն հեղուկների հետ՝ սերմնային և կաթնային: Այստեղից էլ գալիս է սպիտակ գույնի ընկալումը որպես կեցության, կյանքի, ուժի, առողջության, մաքրության խորհրդանիշ: Բացի այդ, նրա կարծիքով, ակնառու է նաև կապը սպիտակ գույնի և լույսի միջև: Ի տարբերություն գիշերվա /մթի, սևի/, օրվա /սպիտակի, լույսի/ ընթացքում մարդն առավել ակտիվ է, գործունյա, հստակորեն ընկալում է շրջակա միջավայրը, այդ իսկ պատճառով էլ սպիտակը հանդես է գալիս նաև որպես մտքերի և գործողությունների, արարքների մաքրության խորհրդանիշ, մտորում է գիտնականը: Թերներն անդրադարձել է նաև գույների խորհրդանշանային իմաստներին քրիստոնեության մեջ: Վերը նշված խորհրդածություններով է նա բացատրում այն, որ քրիստոնեության մեջ սպիտակը՝ սրբության, անաղարտության և հեզության խորհրդանիշ է, իսկ սևը՝ չարիքի, մեղքի, կարմիրը՝ Քրիստոսի արյան, որ թափվել է մարդկության փրկության համար: Սևը խորհրդանշում է նաև մահը՝ որպես հավիտենական խաղաղություն և դառնում է վանականների հագուստի հիմնական գույնը /Тернер, 1983/:

Հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ գույների խորհրդանշանային իմաստները ենթարկվում են որոշակի փոփոխությունների դարերի հոլովությամբ՝ պայմանավորված սոցիալ-քաղաքական և պատմամշակութային գործոններով: Այս առումով հատկանշական է Բ.Ա. Բազիմբայի *Գույնը և հոգեկան կառուցվածքը* մենագրությունը, որում հեղինակը գույների խորհրդանշանային իմաստների զարգացումը բաժանում է երեք փուլի:

1. *Տիեզերական* - գույները որպես աշխարհի ստեղծման գլխավոր ուժերի ու ակունքների խորհրդանիշ /Արիստոտելի տեսություն/:

2. *Աստվածաբանական կամ կրոնական* - գույները որպես վերին ուժերի, տարերքների առանձին հատկանիշների խորհրդանիշ:

3. *Հասարակական - հոգեբանական* - այս փուլում գույները դառնում են հասարակական-քաղաքական կառուցվածքների և մարդկային հատկանիշների խորհրդանիշ: Ընդլայնվում է գունաբառապաշարը /Базымба, 2001: 43/:

Հարկ է նշել, որ գույների խորհրդանշանային իմաստները տեղ են գտել լեզվական արտահայտություններում՝ ձեռք բերելով լեզվամշակութային արժեք /Верещагин, Костомаров, 1980; Шемякин, 1992; Василевич, 1987/:

Բերենք մի քանի օրինակ տարբեր լեզվամշակույթներից: Լիտվերենում *սպիտակ մարդիկ* արտահայտությամբ բնորոշում են ազնիվ մարդկանց, հունգարերենում թույլ սեռի ներկայացուցիչներին անվանում են *սպիտակ ժողովուրդ*: Լեհերենում *սպիտակի հետ ամուսնանալ* նշանակում է մահանալ, ռուսերենում չափից ավելի ակնոհու օգտագործած մարդկանց վիճակը *սպիտակ տենդ* են անվանում: Չինարենում *կարմիր սիրտ* բառակապակցությունը նշանակում է ազնիվ, անմիջական մարդ, ֆրանսերենում *կապույտ վախ* արտահայտությունը հոմանիշ է *մեծ վախ* արտահայ-

տությանը, հայերենում *կանաչ կարմիր կապել* նշանակում է ամուսնանալ և այլն: Տեղին է այստեղ հիշատակել Սրեզնևսկու դիպուկ արտահայտությունը ազգ – լեզու փոխհարաբերության մասին. «Յուրաքանչյուր ազգ իր ամենասպառիչ և ամենաճշգրիտ ինքնաարտահայտությունն է գտնում լեզվի մեջ» /Срезневский, 1958/:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ գույները գրեթե չունեն համընդհանուր նշանակություններ, վերջիններս փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ՝ վերաիմաստավորվելով տվյալ մշակույթի առանձնահատկություններին համապատասխան: Ակնհայտ է, որ մենք նկատի ունենք ոչ թե գույների վերաբերական /որոնք թերևս նույնպես կարող են հարաբերականորեն ընկալվել կապված շրջակա միջավայրի գուններանգների հետ/ այլ՝ խորհրդանշանային և հարանշանային իմաստները:

Լեզու և մշակույթ փոխհարաբերության ուսումնասիրման համատեքստում մեծ արժեք է ներկայացնում Պաստուրյի՝ գույների խորհրդանշանային իմաստների էվոլյուցիոն զարգացումը փուլերի բաժանելու փորձը արևմտյան քաղաքակրթության կառուցվածքում:

Այսպես, անտիկ աշխարհից մինչև 12-րդ դարը գունային համակարգը հիմնականում եղել է եռանդամ՝ սպիտակ, սև, կարմիր, որոնցից յուրաքանչյուրին տրվել է հասարակական-քաղաքական բնույթի որոշակի խորհրդանշանային իմաստ: Հին Հռոմում այս գույները խորհրդանշել են եռաստիճան դասակարգային շերտավորումը: Կապույտ գույնը չի ներառվել այս արժեքային համակարգի մեջ այն պատճառով, որ այն գուգորդվել է կելտական և գերմանական բարբարոս ցեղերի հետ: Սակայն XI դարից սկսած կապույտ գույնը սկսում է փոխել իր կարգավիճակը: Այն լայն կիրառություն է ստանում սրբապատկերագրության մեջ՝ որպես Սուրբ Մարիամի գլխաշորի գույն, դառնում է գոթական տաճարների լուսամուտների ապակիների գերիշխող գուններանգ, այնուհետև *մուտք է գործում* քաղաքակրթություն՝ *հայտնվելով* թագավորական դինաստիաների զինանշաններում: 15-16-րդ դարերում *սև* և *սպիտակ* գույները աստիճանաբար դուրս են մղվում արժեքային համակարգից, իսկ *կապույտը* սկսում է էլ ավելի ընդլայնել իր *բարոյական բովանդակության* տիրույթները՝ վերածվելով ազնվության, վեհության խորհրդանշի: Եվ վերջապես 18-20-րդ դարերում հաստատվում է կարմիր-կապույտ-դեղին եռանդամ գունային արժեհամակարգը: Հետաքրքրական է, որ Պաստուրյոն իր աշխատության վերջում *կապույտ* բառին վերագրում է ուրույն խորհրդանշանային իմաստ: Նա գրում է. «...ծովը դարձել է կապույտ, իսկ կապույտն էլ՝ սառը, ինչպես այսօրվա արևմտյան քաղաքակրթությունները» /Pastoureaux, 2002/: Աշխատության այս վերջին տողերը վկայությունն են այն բանի, որ գույներն իրենց մեջ ներառում են հոգեբանական ներագդման մեծ ներուժ, ինչն էլ իր հերթին անսպառ *աղբյուր է* գունանուն պարունակող բազում նորանոր լեզվական արտահայտությունների առաջացման, լեզվում աշխարհի գունային պատկերի բազմազանության, տարբեր լեզուներում գունանունների քանակի փոփոխության համար:

Շատ լեզվաբանների հայեցակարգերում *լեզվական պատկեր* հասկացությունը հիմնված է լեզվի ներքին ձևի մասին Հումբոլտի կողմից առաջ քաշված գաղափարների վրա: Աշխարհի լեզվական պատկերը՝ մեզ շրջապատող աշխարհի մասին պատկերացումների ամբողջությունն է, արժեքների և նորմերի մի համակարգ, որ հատուկ է տվյալ լեզվամշակույթին: Ամեն մի բնական լեզու արտացոլում է տվյալ հանրության կողմից աշխարհի ընկալման և կարգայնացման յուրակերպությունը: Լեզվում արձանագրված իմաստները կազմում են աշխարհաքաղաքական մի միասնական համակարգ, հանրային մի փիլիսոփայություն՝ պարտադրված տվյալ հանրույթի բոլոր անդամներին /Вездицкая, 1996/: Աշխարհի լեզվական պատկերը արդյունք է մարդու՝ աշխարհի իմաստավորմանն ու ճանաչմանը ուղղված մտային գործունեության, որում լեզուն հանդես է գալիս որպես միջոց: «Երբ ասում են, գրում է Կոլշանսկին, որ ամեն մի լեզու, ինչ-որ ձևով, բայց ամեն դեպքում յուրակերպ, ներկայացնում է աշխարհն իր միավորների իմաստներում /բառապաշար/, պատկերավոր կաղապարներում /դարձվածքներ/, կարգերի ուրույն կառույցներում /քերականություն/, ապա, որպես կանոն, այս պնդումը բացատրվում է նրանով, որ առանձին լեզվական ձևերի նշանակությունները զգալիորեն տարբերվում են լեզվից լեզու, ինչն էլ իր հերթին հիմք է տալիս խոսելու աշխարհի տարբեր կարգայնացումների, այլ կերպ ասած, տարբեր լեզուների կողմից տարբեր լեզվապատկերների ստեղծման մասին» /Колшанский, 2005/: Վայսբերգերն այս մասին գրում է, որ լեզվի բառապաշարը լեզվական նշանների հետ մեկտեղ, ներառում է նաև որոշակի մտային միջոցների ամբողջություն, որով և պայմանավորված է այն իրողությունը, որ մայրենի լեզվում ուրվագծվում է որոշակի լեզվական պատկեր՝ ընդհանուր տվյալ լեզվական համայնքի բոլոր անդամների համար /Baйцбергер, 2009/:

Դժվար չէ նկատել, որ Վայսբերգերը *լեզվական պատկեր* հասկացության մեջ շեշտադրում է էթնո-աշխարհագրական և ազգամշակութային տարրը, ավելի ճիշտ բնույթը: Նրա կարծիքով աշխարհի գիտական պատկերը լեզվական պատկերից տարբերվում է նրանով, որ գիտությունը ձգտում է իրականությունը պատկերել օբյեկտիվ, համընդհանուր տրամաբանական կարգերի միջոցով, իսկ լեզուն սահմանափակվում է էթնոմտածողության կարգերով, որոնք մարմնավորվում են լեզվական ձևերում:

Գունային պատկերը աշխարհի լեզվական պատկերի մի մասն է միայն և այն ձևավորվում է, ինչպես արդեն նշել ենք, տվյալ ժողովրդի պատմական զարգացման ընթացքում: Այս առումով հետաքրքրական է հիշատակել, որ աֆրիկյան ցեղերից մեկի լեզվում գոյություն ունի ընդամենը երկու բառ՝ գունային պատկերի ողջ բազմազանության անվանման համար: Բոլոր, այսպես կոչված *տաք* /կարմիր, դեղին, նարնջագույն/ և *սառը* /կապույտ, կանաչ, մանուշակագույն/ գույները ունեն համապատասխանաբար մեկական անվանումներ /Панов, 2004/:

Առավել յուրահատուկ է Ֆիլիպիններում ապրող Խանուտ ցեղի լեզվում գունանունների համակարգը, որում առկա են չորս հիմնական գույների ան-

վանումներ /սև, սպիտակ, կարմիր, կանաչ/: *Սպիտակ* բառին են ամրագրված բոլոր *բաց*, իսկ *սևին*՝ բոլոր *մուգ* գույները: *Կանաչ* բառի իմաստային դաշտը ներառում է աճող բույսերի բոլոր գուներանգները, իսկ *կարմիր* բառինը՝ թանաճող /Апресян, 1995/: Նկատելի է, որ նշյալ ցեղալեզուներում մեկ գունանունը ընդգրկում է գրեթե անսահմանափակ քանակի գուներանգներ:

Գիտնականների կողմից արձանագրվել է նաև հակառակ միտումը: Օրինակ՝ թասմանների լեզվում *սև* ընդհանրական իմաստով բառ գոյություն չունի, փոխարենը սևին մոտ յուրաքանչյուր գուներանգ ունի իր առանձին անվանումը /Комлев, 2000/:

Անշուշտ, հետազոտողները չեն բավարարվել միայն տվյալ երևույթների պարզ արձանագրությամբ, այլ փորձել են գտնել նաև որոշակի բացատրություններ, բացահայտել պատճառաբանվածությունը: Այսպես, Սպենսերի կարծիքով, արանդա ցեղի լեզվում *կապույտ* գույնի համար հատուկ բառի բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ցեղի շրջակա միջավայրում կապույտ գույն գոյություն չունի՝ բացառությամբ երկնի կապույտի: *Դեղին* և *կանաչ* գույն արտահայտող բառերը գործածվում են նաև կապույտ գույնի համար /Васильев, 1990/:

Բերված օրինակները ցայտուն կերպով վկայում են բազմիցս նշված այն փաստի մասին, որ որոշակի կապ գոյություն ունի իրերի և երևույթների անվանման և տվյալ լեզվական հանրության կողմից այդ իրերին և երևույթներին տրվող կարևորության աստիճանների միջև: Ի սպացուցումն այս հանրալեզվական դրույթի՝ գիտական գրականության մեջ շատ հաճախ է հիշատակվում էսկիմոսների լեզվում սառույցի կամ արաբական բարբառներում ուղտերի տարատեսակների անվանումների մեծ քանակը /Тер-Минасова, 2000/: Այս մոտեցման շրջանակներում, որոշ գիտնականներ էլ վկայակոչում են տվյալ ժողովրդի աշխարհընկալման մեջ հոգեբանական գործոնը: Վեժբիցկայայի կարծիքով *կարմիրը* բնության մեջ համեմատաբար առավել հանդիպող գույնն է, այդ իսկ պատճառով առավել ցայտուն կերպով է առանձնանում և ավելի կարևորվում անվանման համար /Вежбицкая 1996/: Լեզվում աշխարհի գունային պատկերի ամբողջությունը /համեմատական լիարժեքությունը/ կախված է գունանունների քանակից: Չնայած տարբեր լեզուների բառարաններում արձանագրված են տարբեր քանակի գունանուններ, գրում է Չեյֆը, այդուհանդերձ հիմնական գունանունների քանակը հասնում է տասնմեկի /Чейф, 2003/: Այս կարծիքը կիսում են նաև շատ ուրիշ լեզվաբաններ: Այստեղ կարևոր է նշել, որ հետազոտությունների արդյունքում հայտնի է դարձել, որ սահուն կերպով մեկից մյուսին անցնող գուներանգների քանակը անսահմանափակ է /բաց համակարգ/, մինչդեռ միայն աչքի կողմից ընկալելի գուներանգների քանակը՝ սահմանափակ: Մոտավոր հաշվարկներով մարդու տեսողական ապարատը ի վիճակի է ընկալելու 500000-ից մինչև 2.500.000 գուներանգ, իսկ գունանունների պարզ բառամիավորների թիվը, այնպիսի լեզուների բացատրական բառարաններում, ինչպիսիք են ֆրանսերենը, ռուսերենը, անգլերենը, հասնում է մոտ հարյուրի, բաղադրյալ գունանունները տատան-

վում են երկուսից երեք հազարի միջև /Василевич, 1987/: Մեր հետազոտության շրջանակներում պարզ դարձավ, որ մոտավորապես նույն պատկերն է նաև հայերենում:

Ինչպես տեսնում ենք, ակնհայտ անհավասարություն է նշագծվում աչքով տարբերվող գույների և դրանց անվանումների քանակի միջև:

Եթե փորձենք ամփոփի ձևով ներկայացնել ողջ վերը շարադրվածը, ապա կարող ենք ասել, որ խնդրո առարկա երևույթի շուրջ բոլոր հիմնարար տեսակետները պտտվում են գույն-գուներանգ-գունանվանում-գունիմաստ քառանդամի շուրջ, դառնում առանցքային, հենքային դրույթներ լեզվաբանական ամենատարբեր բնույթի հետազոտությունների համար: Նշենք նաև, որ վերջին շրջանի հետազոտություններում նկատվում է համակարգային մոտեցում, ուսումնասիրվում են լեզուների գունային համակարգերը՝ իրենց ծագումնաբանական և լեզվամշակութային առանձնահատկություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Berlin B., Kay P. Basic color terms. California: University of California, 1969.
2. Deutscher G. Through the language glass. Canada: Heinemann, 2010.
3. Gladstone W. E. Studies on Homer and the Homeric age. Oxford: Oxford University Press, 1858 .
4. Langacker R. Foundations of cognitive grammar // *Theoretical prerequisites*, v. 2. Stanford: Stanford University press, 1987.
5. Lührmann R. Identification of both shared and distinct proteins in the major and minor spliceosomes. Cambridge: Cambridge University press, 1999.
6. McNeil, Color's history. New Brunswick: TPH, 1996.
7. Pastoureau M. Les couleurs de notre temps. Paris: Bonneton, 2003.
8. Romano C. Au cœur de la raison. Paris: Gallimard 2010.
9. Sapir E., Whorf B. La langue comme déterminant de la pensée. Paris: Mille et Une Nuit, 1999.
10. Spencer H., Rosch E. Early contraction against experimental psychology // *Journal of experimental social psychology*, v. 4. Canada: University of Waterloo, Ontario, 1978.
11. Арутюнова Н.Д. Язык и мир человека. М.: Изд. Москва, 1999.
12. Базымба Б.А. Цвет и психика. Харьков, 2001.
13. Бородина М.А., Гак В.Г. К типологии и методике историко-семантических исследований. Ленинград: Наука, 1979.
14. Вежибицкая А. Обозначение цвета и универсалии зрительного восприятия. М.: Русские словари, 1996.
15. Верещагин Е.М., Костомаров В.Г. Лингвострановедческая теория слова. М.: Русский язык, 1980.

16. Василевич А.П. Цвет и название цвета в русском языке. М.: Изд. Ком Книга, 1987.
17. Геринг Э. Теория обратного процесса. Санкт-Петербург: Изд. Чупрун Букс, 1870.
18. Милль Д., Спенсер Г. Общая характеристика ассоциативной психологии. Минск: Изд. МИУ, 2009.
19. Онол Э. Цветообозначения в русском языке (с позиций носителя монгольского языка). Автореф. дисс. ... канд. филол. наук. М., 1996.
20. Тернер В. Цветовая классификация в ритуалах Ндембу: Проблема невербальной классификации // Тернер В. Символ и ритуал. М: Наука, 1983.
21. Чейф У.Л. Значение и структура языка. Перевод с английского. М., 2003.

А. АРУТЮНЯН – Проблема взаимоотношений цветовосприятия и цветоименования в лингвистических теориях. – Данная статья посвящена такой важной лингвистической и психологической проблеме, как взаимоотношение цветовосприятия и цветоименования. В работе в рамках теорий лингвистической относительности и лингвистической всеобщности рассматривается лингвопсихологический механизм единства биологических восприятий цветоименований и их количественной разницы в разных культурах. В контексте вышеупомянутых теорий учитываются также особенности армянского языка.

Ключевые слова: лингвистическая относительность, языковой механизм, мотивированность, лингвистический порядок, лингвистическая всеобщность, цветовая эстетика, цветословарный запас, лингвокультура, упорядочение (категоризация)

А. HAROUTYUNYAN – On the Problem of the Relationship between Colour Perception and Colour Names. – The present paper deals with such an important linguistic and psychological phenomenon as the problem of the relationship between colour perception and colour names. On the basis of linguistic and linguo-psychological theories, the linguo-psychological mechanism of common biological perceptions of colour names and their qualitative differences in different cultures are studied. The analysis is carried out within the framework of the theories of linguistic universality and linguistic relativity. The peculiarities of Armenian are also taken into account within the context of the above mentioned theories.

Key words: linguistic relativity, linguistic mechanism, motivation, linguistic category, linguistic universality, colour aesthetics, colour word stock, linguoculture, categorization

Նարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն հոդվածը նվիրված է համեմատաբար երիտասարդ գիտության՝ միջնակության հաղորդակցության տեսության համառոտ պատմությանը: Այն առանձնացնում է միջնակության հաղորդակցության խնդիրներին նվիրված աշխատանքները, ներկայացնում այս ոլորտի հետազոտությունների հիմնական ուղղությունները, լեզվական դետերմինիզմի և հարաբերականության սկզբունքները, ամերիկյան հաղորդակցաբանության շրջանակներում մշակույթի ուսումնասիրության հիմնական մակարդակները և այլն: Հոդվածում ներկայացվում են միջնակության հաղորդակցության այնպիսի նոր ոլորտներ, ինչպիսիք են՝ մշակության իմպերիալիզմ, մշակույթի գլոբալացում, մեդիա-էկոլոգիա:

Բանալի բառեր. *միջնակության հաղորդակցության, մոնոմշակության, կրոնամշակության, մշակույթների երկխոսություն, բազմամշակութականություն, մեդիա-էկոլոգիա, լեզվամշակութաբանություն*

Միջնակության հաղորդակցության (ՄՀ) տեսությունը հետազոտությունների հարաբերականորեն նոր ոլորտ է, թեև միջնակության շփումներն ինքնին անհիշելի ժամանակների ծնունդ են: ՄՀ-ի պիոներներ են համարվում Ալեքսանդր Մակեդոնացին, Չինգիզ Խանը, Հուլիոս Կեսարը, Մարկո Պոլոն, Քրիստափոր Կոլումբոսը և այլք, ընդ որում, ինչպես հայտնի է պատմությունից, միջնակության տարբերությունների հաղթահարման համար հաճախ գործադրվել են բռնի միջոցներ:

Մշակույթների փոխգործակցության ու փոխազդեցության հիմնախնդիրները, մշակույթի ու լեզվի հարաբերակցությունը, ինչպես նաև միջնակության հաղորդակցման օպտիմալ ձևերի փնտրտուքը միշտ եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Շատ ավելի վաղ, քան ՄՀ-ն կձևավորվեր որպես գիտելիքի առանձին բնագավառ, բազմաթիվ գիտնականներ, ինչպես Արիստոտելը, Լայբնիցը, Վոլտերը, Հերդերը, Կանտը, Հեգելը, Հումբոլդտը, Շպիտցերը, Ֆոլերը, Բոսար և ուրիշներ, շատ հարցերի վերաբերյալ արդեն տեսակետներ էին արտահայտել, որոնք էլ արդյունքում դարձան ՄՀ-ի հիմքը: Ստորև մենք կդիտարկենք այն հեղինակների դիրքորոշումները, ովքեր, մեր կարծիքով, առավել զգալի ներդրում են կատարել ՄՀ-ի տեսության մեջ, և ում եզրակացությունները առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում դրա հետագա զարգացման համար:

Հաղորդակցության բնագավառի ժամանակակից յուրաքանչյուր մասնագետի «մշակության գրագիտության» անբաժանելի մասն են Վիլիելմ ֆոն Հումբոլդտի հայացքները, որոնք խթանեցին լեզվագիտության ու լեզվամշակութաբանության բազմաթիվ ուղղությունների զարգացումը: Ժողովրդի ոգու՝

որպես մշակույթի մասին հրովարտակի Հումբոլդտի գաղափարը բազմաթիվ տարասեռ մեկնաբանությունների առիթ տվեց համաշխարհային գիտության մեջ: Հումբոլդտի աշխատություններում մենք գտնում ենք այն գաղափարների ակունքները, որոնք հետագայում ուսումնասիրեցին ու զարգացրին այլ հեղինակներ.

- լեզվի ու մտածողության փոխազդեցության մասին. «Լեզուների բազմազանության շնորհիվ մենք բացահայտում ենք աշխարհի գեղեցկությունը և այն բանի բազմազանությունը, ինչը կարողանում ենք ճանաչել. մարդկային կեցությունը մեզ համար դառնում է ավելի լայնահուն, քանզի լեզուները հստակորեն ու գործուն կերպով մեզ օժտում են մտածողության ու ընկալման տարբեր միջոցներով» /Гумбольдт, 1985: 349/,

- աշխարհընկալման տարբերությունների մասին, որոնք հատուկ են տարբեր լեզվական հանրույթների ներկայացուցիչներին. «Տարբեր լեզուները բնավ էլ միևնույն իրի տարբեր անվանումները չեն, այլ դրա տարբեր պատկերացումները. եթե այդ իրը արտաքին աշխարհի առարկա չէ, ապա [խոսող] յուրաքանչյուրը յուրովի է ստեղծում այն՝ դրա մեջ գտնելով իրենը ճիշտ այնքան, որքան հարկավոր է օտար միտքը ներքուստ ընդունելու ու ամփոփելու համար» /նույն տեղում/,

- տեղեկատվության գտման մասին, որը ստացվում է տարբեր լեզուների ներկայացուցիչների կողմից շրջապատող իրականության և լեզվական միավորների ներքին ձևի ակունքների ընկալման գործընթացում. «Անորոշ ու անձև մտածողության զանգվածից բառը պոկում է հայտնի քանակով նշաններ, միավորում դրանք, հնչյունների ընտրության օգնությամբ շաղկապում դրանք ազգակից այլ բառերի հետ, իսկ պատահական կողմնակի հանգամանքների շնորհիվ՝ կերպար ու երանգավորում ձեռք բերում, և դրանով իսկ անհատականանում» /նույն տեղում: 364/,

- լեզուների ազգային-մշակութային յուրահատկությունների մասին. «Ոգին, որով մենք նվաճում ենք, համեմատում, կարգավորում, դիտարկում, օտար միջավայրում նվազեցնում է լեզվի ամբողջ ներքին ստեղծագործական ունակությունը՝ որպես նրան շրջապատող ինչ-որ խորթ բան» /նույն տեղում: 365/,

- ազգային բնավորության կերտման հարցում լեզվի դերի մասին. «Հենց դրանք են [լեզուները] առաջնահերթորեն որոշում ազգային բնութագիրը» /նույն տեղում: 363/,

- լեզվում անհատականի ու հավաքականի հարաբերակցության մասին. «Մենք միշտ լեզվի մեջ գտնում ենք իրապես լեզվական բնույթի համաձուլվածք այն բանի հետ, ինչը լեզուն ներառել է ազգի բնութագրից. «Սիայն այն դեպքում, երբ գիտական քննությունը, անկախ լեզվից, կմիավորի ժողովրդի բնութագիրը իր բոլոր դրսևորումներով՝ անհատականության սուբյեկտիվ բնույթը, որը կախված չէ մտքի ու գործի զանազան եղանակներից և այն բնույթը, որով օժտված են կամ կարող են օժտված լինել լեզուները, միայն այդ ժամանակ մենք կկարողանանք ներթափանցել այն բազմազանության ու

միասնության մեջ, որտեղ ամփոփվում է հոգևոր ձգտումների անվերջ ու անհատնեղի ամբողջությունը» /Гумбольдт, 1985: 373/,

- լեզվի, սոցիումի ու անհատի սերտ փոխկապվածության մասին. «Յուրաքանչյուր տարիք, յուրաքանչյուր խավ, յուրաքանչյուր հայտնի գրող ու, եթե նկատի ունենանք ամենանուրբ հանգամանքները, նույնիսկ հոգեպես զարգացած ցանկացած մարդ ձևավորվում է իր ազգի արգանդում և, օգտվելով իր հարազատ հասկանալի լեզվից, վերջինիս բառերի հետ շաղկապում է անհատականացված ու երևակայական հասկացություններ, և դրանով իսկ բոլորի կողմից գործածական լեզուն քիչ-քիչ միախառնվում է անհատի մտածողության ու ընկալման նրբագույն ելեջների նվիրական շրջանակին» /նույն տեղում: 363/,

- մշակութալեզվական կոդերի տարբերությունների մասին. «Լեզուները հիերոգլիֆներ են, որոնց մեջ մարդն ամփոփում է աշխարհն ու իր երևակայությունը» /նույն տեղում: 349 այլն/:

Հումբոլդտի գաղափարները հետագայում զարգացրին Ռ.Ռ.ասկը, Յա.Գրինը, Գ.Շտեյնտալը, Ա.Ա.Պոտեբնյան, Ի.Ա.Բոդուեն դը Կուրտենեն, Վ.Վունդտը, Շ.Բալլին, Ա.Մարտին, Լ.Վեյսհերբերը, Ժ.Վանդրիեսը, Ռ.Յակոբսոնը և այլք: Մշակույթների փոխգործակցությանն առնչվող գաղափարների զարգացմանը իրենց նպաստը բերեցին Ջ.Ֆրոյդի (հոգեվերլուծության տեսություն), Չ.Գարվինի (ոչ վերբալ հաղորդակցություն), Ֆ.Սամների (էթնոկենտրոնություն) և այլոց աշխատությունները:

Ամերիկացի լեզվաբան ու մարդաբան Էդվարդ Սեպիրը և նրա սան Բենջամին Լի Ուորֆը մշակեցին լեզվաբանական հարաբերականության վարկածը, որը հզոր խթան դարձավ լեզվի ու մշակույթի փոխկապվածությանը նվիրված հետագա տեսությունների զարգացման համար: Սեպիր-Ուորֆի վարկածը հիմնվում է հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

1) լեզվաբանական դետերմինիզմ. գաղափար այն մասին, որ լեզվի քերականական ու իմաստաբանական կատեգորիաները ձևավորում են գաղափարներ ու որոշում մտածողության բնույթը

2) լեզվաբանական ռելյատիվիզմ (լեզվաբանական հարաբերականություն). յուրաքանչյուր մասնավոր լեզվում առկա են առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մյուսներից: Սեպիր-Ուորֆի տեսության «ուժեղ» կողմը, որի համաձայն լեզուն գերիշխում է մարդկանց մտածողության, գործողության ու աշխարհընկալման նկատմամբ, ներկայումս մերժում են լեզվաբաններից ու մարդաբաններից շատերը: Օրինակ՝ այն քննադատել են Բ. Ա. Սերբերեննիկովը, Գ.Գոդդը, Գ.Վ. Կոլջանսկին, Ռ.Մ. Ուայթը, Ռ.Մ. Ֆրունկինան, Է.Հոլենշտեյնը և ուրիշներ (այս մասին բանավեճը մանրամասնորեն տես Վ. Ա. Մասլովայի գրքում /Маслова, 1997: 36/): Սակայն նրա «թույլ կողմը», որը բանաձևում է լեզվի ու մշակույթի միջև առկա երկկողմանի սերտ կապը և օժտված է որոշ չափով ձևափոխված ըմբռնողական ապարատով՝ հիմնված մարդաբանության վրա և հարստացած լեզվաբանական ու հոգեբանական ոլորտների հետազոտություններով, շարունակում է լուրջ

ազդեցություն գործել ՄՀ-ի տեսության զարգացման վրա և հնարավորություն է ընձեռում նորովի քննելու նրա գաղտնիքները /տե՛ս, օր. Seelye, 1993/:

Թեպետ բազմաթիվ հետազոտողներ իրենց պարտքն են համարում քննադատել Մեյի-Ուորֆի տեսությունը, այն դարձավ լեզվաբանական մի ամբողջ ուղղության զարգացման հզոր խթան: Վ.Ն. Թելիայի գրքում /Телия, 1996: 229/ վերլուծության են ենթարկվում լեզվաբանական հարաբերականության վարկածի զանազան տարբերակներ, որոնց առնչվում են.

- «լեզվաբանական լրացման» վարկածը, որի հիմնական դրույթի համաձայն աշխարհի լեզվական պատկերն ամբողջացնում են իրականության մասին օբյեկտիվ գիտելիքները),

- «գործառնական լրացման» վարկածը, որի պնդմամբ լեզվաբանական հարաբերականության մասին հիմնական դրույթներն արդարացի են, սակայն դրանք հաշվի չեն առնում սոցիալական գործոնների ազդեցությունը լեզվի ու դրա գործածության վրա),

- «գոյաբանական հարաբերականության» վարկածը, որի համաձայն յուրաքանչյուր լեզու իրենից ներկայացնում է աշխարհի մասին որոշակի գիտելիքի տեսություն՝ իրեն ներհատուկ գոյաբանությամբ, ուստի և աշխարհի տարբեր ծագերում տարբեր լեզվակիրները չեն կարողանում համարժեքորեն փոխգործակցել /նույն տեղում/:

Միջմշակութային հաղորդակցության տեսության մեջ էական ներդրում կատարեցին նաև Ժ.Պիաժեի կոգնիտիվ (ճանաչողական) զարգացման տեսությունը, որի տեսանկյունից մտավոր զարգացման առաջնային գործոնները սոցիալացման գործընթացներն են և Ուիտկինի կոգնիտիվ (ճանաչողական) ոճի տեսությունը: Մեծ արձագանք ունեցան մարդաբան Մ. Միդի աշխատությունները: Նրա առաջին գիրքը՝ *“Coming of Age in Samoa”* (1928), հեղաշրջում կատարեց մարդաբանության մեջ. նրանում շեշտվում էր սոցիալական միջավայրի, այլ ոչ թե կենսաբանական գործոնների գերակա դերը մարդու վարքի ձևավորման մեջ: Ավելի ուշ շրջանի աշխատություններում, օրինակ՝ *“Male and Female”* (1949), նկարագրվում են տարբեր մշակույթներում տղամարդու ու կնոջ վարքի միջև առկա տարբերությունները, և կասկածի է ենթարկվում նրանց վարքի մոդելների բնածին տարբերությունների վերաբերյալ տարածված տեսակետը:

Մարդաբանները, քաղաքագետները, սոցիոլոգները, լեզվաբանները քննել են լեզվի ու մշակույթի փոխհարաբերությունների տարբեր կողմեր, սակայն ՄՀ տեսության իրական ուրվագծերը երևացին միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի հաղորդակցաբանության (կոմունիկատիվիստիկա) մեջ: ՄՀ հիմնախնդիրը առաջին անգամ ամբողջ սրությամբ ծառայավ պատերազմի ժամանակ, երբ տարբեր երկրների ներկայացուցիչներ ստիպված էին համատեղ լուծել համաշխարհային նշանակության հիմնախնդիրները: Ամերիկացիները, որոնք մինչ այդ մեկուսացած քաղաքականություն էին վարում, հայտնվեցին միջմշակութային շփումներ սկսելու անհրաժեշտության առջև: Հենց այդ ժամանակ ԱՄՆ-ում առաջին

անգամ պետական մակարդակով հրավիրվեցին լեզվաբաններ, մարդաբաններ, հաղորդակցության ոլորտի մասնագետներ, այդ թվում Մարգարետ Սիդը, Ռոյթ Բենեդիկտը, Ջեֆրի Գորերը, Ուեսթոն Լա Բարը և ուրիշներ, որպեսզի բացատրություն տային իրենց դաշնակիցների (Ռուսաստանի ու Չինաստանի) և թշնամիների (Գերմանիայի ու Ճապոնիայի) միջմշակութային տարբերություններին ու «տարօրինակ» վարքին /Seelye, 1993: 25/: 1948 թ. հունվարի 7-ին ԱՄՆ-ում ստորագրվեց այսպես կոչված Սմիթ-Մունդտի օրենքը տեղեկատվության ու մշակույթի փոխանակության մասին, որով ամերիկյան կառավարությունը պարտավորություն էր ստանձնում միջոցներ ձեռնարկել՝ նպաստելու ամերիկացիների ու այլ երկրների ժողովուրդների միջև առավելագույնս լավ փոխըմբռնման հաստատմանը:

ՄՀ-ի՝ որպես ուսումնասիրության առանձին ոլորտ առանձնացնելու պատճառներից մեկը «խոսքի» ու «հաղորդակցության» գիտական հասկացությունների սահմանազատումն էր: ՄՀ-ի հիմնադիր է համարվում մարդաբան Էդվարդ Թ. Հոլը, որն իրեն դասում է Է. Սեյիթի հետևորդների թվին: Կարևոր ուղենիշ դարձավ Հոլի 1959թ. լույս ընծայած *“Silent Language”* /Hall, 1959/ գիրքը, որտեղ առաջին անգամ մանրամասնորեն վերլուծվեց հաղորդակցության ու մշակույթի փոխհարաբերությունը, իսկ ավելի ուշ նրա երկրորդ՝ *“The Hidden Dimension”* /Hall, 1966/ գիրքը նվիրվեց ժամանակի ու տարածության ըմբռնմանը տարբեր մշակույթներում, ինչպես նաև միջմշակութային վերլուծության կարևորության հիմնավորմանը: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հ. Ու. Օլփորթի աշխատությունները, որոնք վերլուծում են նախապաշարմունքների հիմնախնդիրները /Allport, 1954/, ինչպես նաև Ֆ. Ու. Քլակհոնի ու Ֆ. Լ. Սթրոդբեքի ուսումնասիրությունները մշակութային արժեքների մասին /Kluckhohn, Strodbeck, 1961/:

1960-ականների կեսերին ՄՀ-ի հիմնախնդիրները սկսեցին մանրամասնորեն ուսումնասիրվել ԱՄՆ Պիթսբուրգի համալսարանում: Քաղաքագետ Մ.Ու. Սինգերը գրեց *“Culture: A Perceptual Approach”* /Singer, 1980/ աշխատությունը, որը հիմնված էր Սեյիթ-Ուորֆի վարկածի վրա, սակայն «լեզվաբանություն» և «լեզվաբանական համակարգեր» եզրույթները փոխարինեց «ըմբռնում» (պերցեպցիա) և «ըմբռնողական համակարգեր» եզրույթներով՝ դիտարկելով դրանք որպես միջնորդներ (arbiters) մշակույթի ու մտածողության միջև: Լեզուն, պնդում էր Սինգերը, լոկ որոշակի մշակութային խմբի անդամների շրջանում համանման ընկալման հաստատումն ապահովելու միջոցներից մեկն է: Սինգերի աշխատությունը ներառվեց ՄՀ-ի հիմնախնդիրներին նվիրված *“Readings on Intercultural Communication”* մատենաշարի առաջին թողարկման մեջ՝ Դ. Հուփսի (Hoopes) խմբագրությամբ:

Քլակհոն-Սթրոդբեքի արժեքային-կողմնորոշումային մոդելի մշակումը շարունակեց Է. Ստյուարտը: Նրա գիրքը՝ *“American Cultural Patterns: A cross-Cultural Perspective”*, լույս տեսավ 1971թ. /Stewart, 1971/: Ստյուարտի տեսական դրույթները վերաբերում էին մշակույթների փոխգործակցությանը և կրկին ծառայեցին զուտ գործնական նպատակների. դրանք դարձան արտասահման

աշխատելու ուղարկվող ԱՄՆ զինվորական-տեխնիկական անձնակազմի բարդ գլանային ուսուցման համակարգի հիմքը: Այդ նույն ժամանակ Իլինոյսի համալսարանի հոգեբանների մի խումբ՝ Գ. Տրիանդիսի ղեկավարությամբ, զբաղված էր ինքնապատրաստման տեխնիկայի մշակմամբ, որը անվանվում էր «culture assimilator»: Արդյունքում Տրիանդիսն ու իր գործընկերները գրեցին *“The Analysis of Subjective Culture”* գիրքը՝ նվիրված մշակույթների բնույթի համադրական վերլուծությանը /Triandis, 1973/:

ՄՀ-ի գաղափարները աստիճանաբար ավելի մեծ հետաքրքրություն առաջացրեցին կրթության բնագավառում: Որքան ուժեղ էր զգացվում մայրենի լեզվի ու մշակույթի ազդեցությունը գիտելիքների յուրացման գործընթացի վրա, այնքան «պարզ էր դառնում, որ հաղորդակցության մշակութային պարամետրերի ու մարդկային փոխհարաբերությունների գործընթացի, ինչպես նաև ճանաչողության տարբերությունների ըմբռնումը վճռորոշ նշանակություն ունեն իրապես պլյուրալիստական հասարակությանը բարեհաջող անցման համար» /Hoopes, 1980: 12/: Հանուն քաղաքացիական իրավունքների շարժումը ամբողջ սրությամբ առաջադրեց էթնիկության, միջէթնիկական ու միջասսայական հարաբերությունների հարցերը: Գլեյզերն ու Մոյնիհանը (Glazer and Moynihan) հրատարակեցին *“Beyond the Melting Pot”* գիրքը, Բլարկը (Clark) զբաղվում էր սև գետտոյի հոգեբանությամբ, Ռամիրեսն ու Կաստանեդան (Ramirez and Castaneda) ուսումնասիրում էին մշակութային ժողովրդավարության ու կենսակոգնիտիվ (կենսաճանաչողական) զարգացման հիմնախնդիրները: Ուսումնասիրությունների մարդակենտրոն ուղղվածությունն անկասկած դրական միտում էր: Ինչպես նշում է Մ. Լ. Մակարովը. «հաղորդակցաբանական լեզվագիտության զարգացումը նշանակում էր լեզվի մասին գիտության կողմից ճգնաժամի հաղթահարում և ինքնին մարդու վերադարձ դեպի հիմնախնդիրների իր շրջանակը. այժմ լեզվաբանը գործ ունի ոչ թե առարկայացած վերացական կառուցվածի, ոչ թե ինչ-որ կողմնակի գործունեություն սպասարկող գործիքի հետ, այլ անմիջականորեն մարդու հաղորդակցային գործունեության հետ, որը օժտված է նույնպիսի գիտակցությամբ, ինչպիսին հետազոտողը» /Makarov, 1998: 15/:

ՄՀ-ի ոլորտում հետազոտությունների երկու հիմնական ուղղությունները, որոնք զարգացան ԱՄՆ-ում, *ինտերնացիոնալ միջմշակութային հաղորդակցությունը և ներքին միջէթնիկական հաղորդակցությունն են*: Առաջին ուղղությունը եռանդուն կերպով զարգանում էր ուսումնական այն հաստատություններում, որտեղ կադրեր էին պատրաստվում արտերկրում աշխատելու նպատակով, երկրորդը՝ դպրոցներում, որոնցում սովորում էին խառը ազգային պատկանելության երեխաներ և առողջապահության ու սոցիալական աշխատանքի ոլորտներում: Գ.Հուպսը ենթադրում է, որ այդ ուղղությունների սահմանազատումն ու չհատվելը ևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ «ինտերնացիոնալիստները» հիմնականում ամերիկյան հասարակության առաջատար սոցիալ-էթնիկական խումբն էին (*mainstream American culture*), մինչդեռ երկրորդ ուղղությունը գոյացել էր էթնիկ փոքրամասնությունների

խնդիրներից ու մշակութային բազմազանության գաղափարից: Ըստ այդմ՝ բուն ՄՀ-ի ոլորտում առաջ է եկել յուրատեսակ միջմշակութային բաժանում, որով որոշ չափով բացատրվում են երկու ուղղությունների միջև առկա կոնֆլիկտն ու անհամապատասխանությունը /Hoopes, 1980/: Կարծիք կա, որ այդ բաժանումը, որը մինչ այժմ էլ դրսևորվում է այն բանում, թե ինչպես են կառուցվում ուսումնասիրությունները ՄՀ-ի ամերիկյան տեսության մեջ, բավականին արհեստական է ու ոչ լիովին հիմնավորված: Ամենայն հավանականությամբ, դրա պատճառը ամերիկյան հետազոտողների ավանդաբար գործնական վերաբերմունքն է հետազոտվող հիմնախնդիրների նկատմամբ: Եթե երկու ուղղությունների ներկայացուցիչները միավորեին իրենց ջանքերը, կարող էր ստացվել ՄՀ-ի միասնական տեսություն, որը կներառեր երկու գիտական ուղղությունների նվաճումներն էլ:

Վերլուծելով ամերիկյան հաղորդակցաբանության մեջ մշակույթի դիտարկման տարբեր հայեցակետերը՝ Ու.Բ. Հարտը գրում է հետազոտության երեք հիմնական մակարդակների մասին՝ *մոնոմշակութային, կրոսմշակութային* ու *ինտերմշակութային*: Մոնոմշակույթի ուսումնասիրումը բնութագրական է մարդաբանության ու սոցիոլոգիայի ոլորտների հետազոտություններին: Կրոսմշակութային ուսումնասիրությունները ենթադրում են երկու և ավելի մշակույթների համադրումը, ինտերմշակութայինը՝ երկու և ավելի մշակույթների *փոխգործակցության* վերլուծությունը (բնույթը և հետևանքները): Միջմշակութային համագործակցությունը, նրա կարծիքով, կարող է և պետք է ուսումնասիրվի տարբեր գիտակարգերի դիրքերից, դրանցից ոչ մեկը չունի առանձնաշնորհյալ իրավունք այդ ուսումնասիրությունների նկատմամբ /Hart, 1998/:

Ներկայումս հաղորդակցության ամերիկյան տեսության մեջ շրջանառվում է ՄՀ-ի նկատմամբ երեք հիմնական մոտեցում, որոնք են.

1. հասարակագիտական կամ գործառնական
2. մեկնողական-բացատրական
3. քննադատական

Այդ մոտեցումները հիմնված են տարբեր հիմնարար նախադրյալների վրա, որոնք վերաբերում են մարդկային կերտվածքին, վարքին ու կոգնիցիային և տարբերվում են մշակույթի ու հաղորդակցության հայեցակարգայնացմամբ, ինչպես նաև հետազոտության կիրառվող մեթոդներով:

Հասարակագիտական մոտեցման նպատակը, որը հիմնված է հոգեբանական տվյալների վրա, հաղորդակցվողների վարքի նկարագրումն ու կանխատեսումն է: Այդ մոտեցման կողմնակիցները ենթադրում են, որ մարդու վարքը կանխատեսելի է, իսկ հաղորդակցությունն իրականացվում է մշակույթի ազդեցությամբ: Հետազոտության առաջնային մեթոդ է համարվում դիտարկումը: Այս դիրքերից կատարվող հետազոտությունները ճանաչում ու բացահայտում են հաղորդակցության շատ հայեցակետերի մշակութային տարբերությունները, սակայն հաշվի չեն առնում համատեքստի ազդեցությունը:

Մեկնողական մոտեցումը, որը հենվում է մարդաբանության ու սոցիոլոգ-վաբանության ոլորտներում կատարվող ուսումնասիրությունների վրա, նույն-պես նկարագրական է. դրա ելակետն այն է, որ մշակույթը ստեղծվում ու պահ-պանվում է մարդկային գործունեության շնորհիվ և շեշտվում է հաղորդակ-ցության հետազոտման անհրաժեշտությունը համատեքստի հաշվառումով:

Քննադատական մոտեցումը, որը հիմնված է մշակույթի՝ որպես իշխա-նության համար պայքարի ոլորտի ընկալման վրա, նկատի է առնում տնտեսական ու քաղաքական այն ուժերը, որոնք ներագրում են մշակույթի ու հաղորդակցության վրա: Այդ մոտեցման կողմնակիցները, որոնք համոզված են, որ փոխգործակցության բոլոր ձևերը որոշվում են իշխանությանը պատկանելությամբ, որպես ապացույց օգտագործում են տարբեր գիտու-թյունների տվյալներ և հետազոտության առաջնային մեթոդ են համարում տեքստային վերլուծությունը /Martin, 1999: 31/:

Ի. Կլյուկանովը /Klyukanov, 1999/ ՄՀ-ի շրջանակներում առանձնացնում է «բազմամշակութականության» (*multiculturalism*) երկու մոտեցում: Առաջինը հիմնվում է պոզիտիվիզմի ավանդույթների վրա: Պոզիտիվիստական մոտեց-ման (որը կոչվում է նաև վերլուծական, ռեդուկցիոնիստական, մեխանիս-տական, գծային և այլն) գլխավոր նպատակը որոշակի մշակութային արձա-գանքների, մշակութային վարքի երևույթների ու տեսակների կանխատեսման ու վերահսկման ունակությունն է: Կլյուկանովի կարծիքով, այդ թեմայով բոլոր աշխատությունները քննում են մշակութային արժեքները, կանոններն ու նորմերը, խոսքային ու ոչ խոսքային վարքը, մշակութային ցնցումը, ինտեր-մշակութային փոխակերպումները և այլն /Brislin, 1981; Kohls, 1981; Locke, 1992 և այլք): Հենց այդ մոտեցմամբ է իրականացվում այսօր ՄՀ-ի դասավան-դումը ԱՄՆ-ում:

Ի. Կլյուկանովի նկարագրած երկրորդ մոտեցումը ի հայտ եկավ 1960-ականներին՝ որպես հակակշիռ պոզիտիվիստականին: Դա համակարգային մոտեցում է, որը հիմնված է ընդհանուր համակարգերի տեսության (*General Systems Theory*) մեջ մարդու վարքի բնույթի դիտարկման Հոլի սկզբունքների վրա և անհատական համակարգի ու նրա շրջապատի միջև տեղեկատվության մշտական փոխանակման գաղափարի վրա: Ընդ որում, մշակույթն ընկալվում է ոչ թե որպես բաղադրատարրերի հավաքածու, այլ որպես մեկ ամբող-ջություն կազմող այլ մշակույթների հետ ինտերակտիվ հաղորդակցության գործընթաց: Համակարգային մոտեցման համար առանցքային են միջմշա-կութային փոխակերպման տեսությունը, որը մշակել են Կիմն ու Ռուբենը /Kim and Ruben, 1988/ և Քինբեյթի կոնվերգենցիայի (զուգամետության) տեսությու-նը /Kincaid, 1983/: Ներկայումս, ինչպես կարծում է Ի.Կլյուկանովը, համակար-գային մոտեցումը լայնորեն տարածվում է որպես «գլոբալ կրթություն» (*global education*): Սակայն, ըստ հեղինակի, այն ավելի հաճախ կիրառվում է խոսքում, քան գործնականում և հանգեցվում գլոբալ այնպիսի ոլորտների հավաքածուին, որոնցից են գիտությունն ու տեխնոլոգիան, միջազգային հարաբերությունները կամ էլ աշխարհի տարբեր երկրների ու տարա-

ծաշրջանների ընդհանուր դիտարկումը: Աշխատությունները, որոնցում գործնականորեն կիրառվում են այդ հեռանկարային մոտեցումները, ավելի շուտ բացառություններ են: Որպես դրական օրինակներ Ի. Կլյուկանովը նշում է Ե. Լասլոյի գիրքը՝ *“The Choice: Evolution or Extinction? A Thinking Person’s Guide to Global Issues”* /Laszlo, 1994/, ինչպես նաև նույն հեղինակի խմբագրությամբ լույս տեսած *“The Relevance of General Systems Theory”* /1996/, ժողովածուն, որտեղ ՄՀ-ի հիմնախնդիրները քննարկվում են իսկապես գիտական դիրքերից:

«Միջնակությանի հաղորդակցություն» եզրույթը հայտնի չափով հարաբերակցվում է «մշակույթների երկխոսություն» հասկացության հետ: Այդ երևույթի առավել սպառիչ վերլուծությունը ներկայացված է Վ.Ս. Բիբերի աշխատություններում, ով «գրում է մշակույթի ապագա նոր համընդհանուր սոցիումի մասին, որն ինչ-որ առումով մոտ է պոլիսային սոցիալայնությանը և մարդկանց ազատ շփման առանձնահատուկ ձև է մշակույթի ուժային դաշտում, մշակությանի երկխոսության մեջ» /Biber, 1999/:

Ներկայումս ՄՀ-ի տեսության մեջ նկատվում են հետաքրքրությունների նոր ոլորտներ. հաղորդակցություն մշակույթի գլոբալացման համատեքստում /Featherstone, 1990; Smith, 1990a; Smith, 1990b; Ferguson, 1992; McLuhan, Powers, 1993; Frederick, 1993; Stevenson, 1994; Crystal, 1997; Mowlana, 1997/, մշակությանի ինտերիալիզմ (Straubhaar, 1991; Tomlinson, 1991; Petras, 1993; Berlinger, 1999; Selene, Gokyigit, 1996; Brown, 1996; Herschlag, 1999; Kim, Seongcheol, 1998), զանգվածային միջնակությանի հաղորդակցության՝ ներառյալ Ինտերնետի, ինչպես նաև անմիջական ու միջնորդավորված շփման հիմնախնդիրները, այդ թվում էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ /Avery, McCain, 1982; Cathcart, Gumpert, 1983; Shapard, 1990; Drummond, Hopper, 1991 և այլն):

Մեդիա-էկոլոգիան կամ *հաղորդակցության միջոցների էկոլոգիան* ուսումնասիրում է խորհրդանշանային համակարգերի ու տեխնոլոգիաների ազդեցությունը մարդկային հասարակության սոցիալական կազմակերպման, ճանաչողական գործընթացների, քաղաքական ու փիլիսոփայական գաղափարների վրա: Մեդիա-էկոլոգիայի հիմնական դրույթներն են. 1) իրականության հայեցակարգայնացման բնույթը մարդկային գիտակցության մեջ կախված է կենսաբանական ու տեխնիկական մի շարք գործոններից, ինչպես նաև կողային համակարգերից, որոնք օգտագործվում են տեղեկատվության տրամադրման համար, 2) տեղեկատվության կողավորման ու հաղորդման միջոցները չեզոք չեն, դրանք որոշակիորեն ազդում են մարդու՝ արտաքին աշխարհի ընկալման վրա, 3) քանի որ մարդկային մշակույթը անմիջականորեն կախված է հաղորդակցությունից, հաղորդակցային մոդելում կատարվող փոփոխությունները գաղափարախոսական ու էպիստեմոլոգիական լուրջ հետևանքներ են թողնում մշակույթների էկոլոգիայի վրա, 4) չնայած հաղորդակցության նոր միջոցների ստեղծմանը, լեզուն նախկինի պես

առաջատար դիրք է գրավում մարդկային շփումներում, և հենց նրան պետք է վերապահվի առաջնայնությունը մեդիա-էկոլոգիայում /Postman, 2000/:

Մեդիա-էկոլոգիայի հիմնադիրը համարվում է կանադացի սոցիոլոգ ու մշակութաբան Մ. Մաքլուհենը, որն առաջինը նկատեց մարդկային հասարակության վրա հաղորդակցության նոր միջոցների համապարփակ ազդեցությունը: Նրա կարծիքով, դրանք նշանավորում են պատմական դարաշրջանների հերթափոխը, դուրս են մղում արվեստի ու շփման նախկին տեսակները և օժտված են անցյալի փորձը նոր ձևերի մեջ հարմարեցնելու կարողությամբ: Մաքլուհենը վերլուծում է մշակույթի տարասեռ առարկաների՝ լեզվի, փողի, ճանապարհների, մամուլի, գիտության, համակարգիչների, հեռուստատեսության և այլնի հաղորդակցային գործառույթները, որոնք դառնում են մարդկային զգայարանների տեխնոլոգիական շարունակությունը և արմատապես ազդում հասարակության կյանքի ոճի, արժեքային կողմնորոշիչների, աշխարհընկալման (սենսորային հաշվեկշիռ) և սոցիալական կառուցվածքի վրա: Էլեկտրոնային ցանցերով խճողված աշխարհը վերածվում է «գլոբալ բնակավայրի», որտեղ ժամանակ ու տարածություն գոյություն չունի, իսկ յուրաքանչյուր անհատի կյանքն անցնում է «լույսի արագությամբ» /McLuhan, 1962; Beaulieu, 1999/:

Մեդիա-էկոլոգիայի հետ որոշ չափով աղերսվում է էկոլեզվաբանությունը կամ լեզվաէկոլոգիան, որը հիմնված է Ռ. Միլիկանի /Millikan, 1984/ նատուրալիստական էպիստեմոլոգիայի և Է. Ռիդի (Reed, 1996) էկոլոգիական հոգեբանության հետ Մ. Մ. Բախտինի և Լ.Ս. Վիգոտսկու տեսության ինտեգրման վրա: Էկոլեզվաբանության էությունը Երկիր մոլորակի վրա բազմազանության պահպանման կենսամշակութային մոտեցումն է՝ ներառյալ լեզվաբանական բազմազանությունը: Այդ գիտության ներկայացուցիչները անհանգստացած են այն բանից, որ աշխարհաքաղաքական իրավիճակն աշխարհում հանգեցրել է լեզվաբանական ունակությունների հիերարխիկ բաշխմանը տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների միջև, լեզվաբանական էլիտաների կազմավորմանը, որոշ լեզուների՝ մյուսների նկատմամբ ունեցած կիրառման առավելություններին և լեզվաբանական խտրականությանը: Նրանք հանդես են գալիս հանուն մարդու լեզվական իրավունքների հարգման՝ անկախ քաղաքական, ժողովրդագրական ու տնտեսական կարգավիճակից: Ռուսական գիտության մեջ առանձնանում են հետազոտության հետևյալ ոլորտները, որոնք հիմնված են լեզվի ու մշակույթի փոխկապվածության վրա և անվիճելի հետաքրքրություն են ներկայացնում միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից.

- Լեզվաերկրագիտություն /Верещагин, Костомаров, 1999; Томахин, 1996; Ощепкова, 1995/: Լեզվաերկրագիտական ուսումնասիրությունները գլխավորապես կիրառական բնույթի են և լեզվի ու մշակույթի փոխգործակցությունը արտացոլող տեղեկատվության արժեքավոր աղբյուր են:

- Էթնոլեզվաբանություն (Герд, 1995; Толстой, 1997 և այլք). լեզվագիտության այն բաժինն է, որն ուսումնասիրում է լեզուն էթնոսի հետ հա-

րաբերակցության դիրքերից և սերտորեն կապված է սոցիոլեզվաբանության հետ: Ն. Ի. Տոլստոյի պնդմամբ, էթնոլեզվաբանության համար «էական է ոչ միայն և ոչ այնքան ժողովրդական մշակույթի, հոգեբանության ու դիցաբանական պատկերացումների արտացոլումը լեզվում, որքան լեզվի կառուցողական դերը և նրա ազդեցությունը ժողովրդական մշակույթի, ժողովրդական հոգեբանության ու ժողովրդական ստեղծագործության ձևավորման ու գործառնության վրա»: Նա ենթադրաբար առաջ է քաշում էթնոլեզվաբանության երկու սահմանում՝ 1) լեզվաբանության բաժին, որի առարկան լեզուն է ժողովրդի մշակույթի հետ հարաբերության մեջ, ուսումնասիրում է լեզվում մշակութային, ժողովրդահոգեբանական ու դիցաբանական պատկերացումների ու «ապրումների» հարաբերությունները, 2) «համալիր գիտակարգ», որի ուսումնասիրման առարկան մշակույթի, ժողովրդական հոգեբանության ու դիցաբանության «բովանդակային կողմն» է՝ անկախ դրանց մարմանավորման միջոցներից ու ձևերից (խոսք, առարկա, ծես, պատկեր և այլն): Ն. Ի. Տոլստոյը կարծում է, որ այդպիսի հետազոտություն «կարելի է իրականացնել առավելապես կամ բացառապես լեզվաբանական մեթոդներով» /Толстой, 1997: 315/:

- Լեզվամշակութաբանություն /Телия, 1996; Воробьев, 1997; Маслова, 1997 և այլք/: Վ. Ն. Թելիան լեզվամշակութաբանությունը բնորոշում է որպես էթնոլեզվաբանության մի մասը, որը նվիրված է լեզվի ու մշակույթի հարաբերակցության ուսումնասիրմանն ու նկարագրմանը դրանց ներդաշնակ համագործակցության մեջ /Телия, 1996: 217/: «Լեզվամշակութաբանության առարկան ուսումնասիրվում է երկու հիմնարար գիտությունների՝ լեզվագիտության ու մշակութաբանության «խաչմերուկում» /նույն տեղում: 222/:

Լեզվաբանության վերոնշյալ բոլոր ոլորտների նպատակը առանձին վերցրած մեկ լեզվամշակույթի ազգային-ինքնահատուկ առանձնահատկությունների ուսումնասիրությունն է: Այդ տվյալներն անգնահատելի են միջմշակութային ուսումնասիրություններ կատարելիս, որոնք նախատեսված են երկու և ավելի լեզվամշակույթների համադրական վերլուծության համար: Ընթրնոդության մեխանիզմների ուսումնասիրումը /Богин, 1986; Залевская, 1996 և այլք/ թույլ է տալիս եզրակացություններ անել այն մասին, թե ինչպես է կատարվում հաղորդակցվող լեզվամշակույթների «հարաբերությունների հաստատումը» և տեղեկատվության փոխանակումը միջմշակութային շփումների ընթացքում: Շատ մեծ է աշխարհի լեզվական պատկերի ազգային-ինքնահատուկ առանձնահատկությունների բնութագրման /Булыгина, Шмелев 1997; Арутюнова 1999/, ինչպես նաև լեզվի ու ազգային ինքնագիտակցության հարաբերակցության նշանակությունը /Уфимцева, 1996; Гак, 2000/:

Բ. Ս. Երասովը առանձնացնում է ՄՀ-ի հիմնախնդրի դիտարկման երկու հիմնական գիտական մոտեցում՝ *գործիքային* և *ընթրնոդական*: Առաջինը նպատակաուղղված է գործնական արդյունքի ձեռքբերմանը (անհատների բարեհաջող հարմարմանը օտար միջավայրում և որոշակի համատեքստում արդյունավետ միջմշակութային շփման ուսուցման մեթոդիկայի ստեղծմանը),

երկրորդը հնարավորություն է ընձեռում քննել մշակույթի ու անձի մեջ կատարվող փոփոխությունները, որոնք տեղի են ունենում «օտարի» հետ հանդիպման արդյունքում, ՄՀ-ի նկատմամբ մարդկային ընդունակության զարգացման հեռանկարները, մշակույթների միջև միջնորդի դեր կատարող անձի ձևավորումը: Այդ մոտեցման հիմքը ինքնատիպությունը պահպանելու անհրաժեշտության և միևնույն ժամանակ մշակույթների փոխգործակցության գաղափարն է: ՄՀ-ի շարժընթացի դիտարկումն այս տեսանկյունից նախատեսում է շփման որակի անդադար զարգացում ու կատարելագործում, տարբերությունների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում՝ տարբեր ոլորտներում ու տարբեր մակարդակներում մշակույթների փոխընթացման աստիճանի աճի նպատակով /Ерасов, 1997: 443-444/: ՄՀ-ի հիմնախնդիրների դիտարկման հենց այս մոտեցումն է, թերևս, ամենահեռանկարայինը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арутюнова Н. Д. Язык и мир человека. М.: Языки русской культуры, 1999.
2. Богин Г. И. Типология понимания текста: Учебное пособие КГУ. Калинин, 1986.
3. Булыгина Т. В., Шмелев А. Д. Языковая концептуализация мира (на материале русской грамматики). М.: Языки русской культуры, 1997.
4. Верещагин Е. М., Костомаров В. Г. В поисках новых путей развития лингвострановедения: концепция речеповеденческих тактик. М.: Ин-т рус. яз. им. А. С. Пушкина, 1999.
5. Воробьев В. В. Лингвокультурология (теория и методы): Монография. М.: Изд-во РУДН, 1997.
6. Гак В. Г. Человек в языке // *Логический анализ языка. Образ человека в культуре и языке*. М., 1999.
7. Гумбольдт В. Язык и философия культуры / Общ. ред. А. В. Гулыги и Г. В. Рамишвили. М.: Прогресс, 1985. /
8. Ерасов Б. С. Социальная культурология. М.: Аспект Пресс, 1997.
9. Залевская А. А. Вопросы теории овладения вторым языком в психолингвистическом аспекте. Тверь: Тверской государственный университет, 1996.
10. Макаров М. Л. Интерпретативный анализ дискурса в малой группе. Тверь: Тверской государственный университет, 1998.
11. Маслова В. А. Введение в лингвокультурологию. М.: Наследие, 1997.
12. Ощепкова В. В. Культурологические, этнографические и типологические аспекты лингвострановедения. Автореф. дисс. ... докт. филол. наук. М., 1995.

13. Телия В. Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. М.: Школа “Языки русской культуры”, 1996.
14. Толстой Н. И. Этнолингвистика в кругу гуманитарных дисциплин // *Русская словесность: Антология*. М.: Academia, 1997.
15. Томахин Г. Д. Лингвострановедение: что это такое? // *Иностранные языки в школе*, 1996, № 6.
16. Allport G.W. The Nature of Prejudice. New York: Macmillan/Reading, MA: Addison-Wesley, 1954.
17. Avery R., McCain T. Interpersonal and Mediated Encounters: A Reorientation to the Mass Communication Process // G.Gumpert and R.Cathcart (eds.) *Inter/media: Interpersonal communication in a media world*. New York: Oxford University Press, 1982.
18. Beaulieu M. Who was Marshall McLuhan? // URL: <http://hosted/beaulieu/McLuhan/default.htm> (Retrieved March 11, 1999)
19. Berlinger I. More Cultural Imperialism on the Net // URL: <http://roscoe.law.harvard.edu/HyperNews/get/courses/techseminar96-18/4/3.html> (Retrieved February 27, 1999)
20. Beyond the Melting Pot by Nathan Glazer, Daniel P. Moynihan // The MIT Press; second edition, June 15, 1970.
21. Biber D. A Textual Comparison of British and American Writing // *American Speech* 62, 1987.
22. Brislin R.W. Cross-Cultural Encounters: Face-to-Face Interaction. New York: Pergamon, 1981.
23. Brown C. Cultural Imperialism? No! // URL: http://www.harvnet.harvard.edu/HyperNews/get/discussion/cult_imp2 /2.html (Retrieved February 27, 1999)
24. Cathcart R., Gumpert G. Mediated Interpersonal Communication: Toward a New Typology // *Quarterly Journal of Speech*, 69 (3), 1983.
25. Crystal D. English as a Global Language. Cambridge [England]; N.Y.: Cambridge University Press, 1997.
26. Drummond K., Hopper R. Misunderstanding and its Remedies: Telephone Miscommunication // “*Miscommunication*” and *Problematic Talk* / N. Coupland, H.Giles and J.M. Wiemann (eds.). Newbury Park, CA: Sage, 1991.
27. Featherstone M. Global Culture: an Introduction // *Theory, Culture & Society*, 7 (2–3). 1990.
28. Ferguson M. The Mythology about Globalization // *European Journal of Communication*, 7, 1992.
29. Frederick H. H. Global Communication and International Relations. Belmont, CA: Wadsworth, 1993.

30. Hymes D. Models of the Interaction of Language and Social Life // *Directions in Sociolinguistics: the Ethnography of Communication*. NY: Holt, Rinehart, and Winston, 1972.
31. Hall E. The Silent Language. Garden City. N. Y.,: Doubleday, 1959.
32. Hall E. The Hidden Dimension. Garden City. N. Y.,: Doubleday, 1966.
33. Hart W.B. Intercultural Computer-Mediated Communication (ICCMC) // *The Edge: The E-Journal of Intercultural Relations*, 1998. Vol. 1, 4, HART-LI.COMmunications // URL: <http://www.hart-li.com/biz/theedge/> (Retrieved February 21, 1999)
34. Herschlag M. Cultural Imperialism on the Net // URL:<http://www.harvnet.harvard.edu/vpr/tues.empire.html>. (Retrieved February 20, 1999)
35. Hoopes D.S. Intercultural Communication Concepts and the Psychology of Intercultural Experience // *Multicultural Education: A Cross Cultural Training Approach* / Margaret D. Pusch (ed.) U.S.: Intercultural Press, Inc., 1980.
36. Kim S. Cultural Imperialism on the Internet // *The Edge: The E-Journal of Intercultural Relations*, 1998, Vol. 1, 4, HART-LI.COMmunications // URL: <http://www.hart-li.com/biz/theedge/> (Retrieved February 21, 1999)
37. Kim Y.Y., Ruben B.D. Intercultural Transformation: A Systems Theory // *Theories in Intercultural Communication* / Y.Y. Kim, W.B. Gudykunst (eds.) Beverly Hills, CA: Sage Publications, 1988.
38. Kincaid D. L. Recent developments in the methods for communication research // *Journal of East and West Studies*, 14 (1), 1985.
39. Kluckhohn F. R., Strodtbeck F. L. Variation in Value Orientation. N. Y.: Row, Peterson. 1961.
40. Klyukanoy I.E. A Systems Approach to Multicultural Education // *The Edge: The E-Journal of Intercultural Relations*, Vol. 1, 2, HART-LI.COMmunications // URL: <http://www.hart-li.com/biz/theedge/> (Retrieved February 27, 1999)
41. Kohls L.R. Developing Intercultural Awareness. Washington D.C.: Society for Intercultural Education, Training, and Research, 1981.
42. Laszlo E. The Choice: Evolution or Extinction? A thinking person's guide to global issues. New York: Putnam, 1994.
43. Locke D.C. Increasing Multicultural Understanding: A Comprehensive Model. Newbury Park, CA: Sage Publications, 1992.
44. Martin J.N., Nakayama T.K. Intercultural Communication in Contexts, 2nd ed. Mountain View, California: Mayfield Publishing Company, 1999.
45. Mead M. Coming of Age in Samoa. William Morrow, 1928.
46. Mead M. The Application of Anthropological Techniques to Cross-National Communication // Booth W. C., Gregory M. W. The Harper and Row Reader. N. Y., 1988.
47. Mead M. Male and Female. Harper Collins, 2001.

48. McLuhan M., Powers B. *The Global Village: Transformations in World Life and Media in the 21st Century*. New York: Oxford University Press, 1993.
49. Millikan R. *Language, Thought, and Other Biological Categories: New Foundations for Realism*. Cambridge, MA: MIT Press, 1984.
50. Mowlana H. *Global Information and World Communication*. New York: Longman, 1997.
51. Petras J. Cultural Imperialism in the Late 20th Century // *Journal of Contemporary Asia*, 1993, 23(2).
52. Postman N. The Humanism of Media Ecology // Paper presented at the *First Annual Convention of the Media Ecology Association*. June 16, New York, NY: Fordham University, 2000.
53. Reed E. *Encountering the World: Toward an Ecological Psychology*. Oxford: Oxford University Press, 1996.
54. Seelye H.N. *Teaching Culture: Strategies for Intercultural Communication*. Lincolnwood, Illinois USA: National Textbook Company, 1993.
55. Shapard J. Observations on Cross-Cultural Electronic Networking // *Whole Earth Review*, No. 69 (Winter), 1990.
56. Singer M.R. Culture: A Perceptual Approach // *Intercultural Communication: A Reader* / (eds.) Samovar, Larry A. and Porter, Richard E. Belmont, Calif.: Wadsworth Publishing Company, 1980.
57. Smith A.D. Media Globalism in the Age of Consumer Sovereignty // *Gannett Center Journal*, 4(4), 1990.
58. Smith A.D. Towards a Global Culture? // *Theory, Culture & Society*, 1990.
59. Stevenson R. L. *Global Communication in the Twenty-First Century*. New York: Longman, 1994.
60. Stewart E. C. *American Cultural Patterns: A Cross-Cultural Perspective*. Washington, D. C.: Society for Intercultural Education, Training and Research, 1971.
61. Straubhaar J. D. Beyond Media Imperialism: Asymmetrical Interdependence and Cultural Proximity // *Critical Studies in Mass Communications*, 1991.
62. Tomlinson J. *Cultural Imperialism: A Critical Introduction*. London: Pinter Publishers, 1991.
63. Triandis H., Vassiliou V., Vassiliou G., Tanaka Y., Shanmugam A. V. The Analysis of Subjective Culture // *Political Science Quarterly*, Vol. 88, No. 4., Dec., 1973.

Н. АРУТЮНЯН – Краткий обзор истории становления теории межкультурной коммуникации. – Данная статья посвящена истории становления относительно молодой науки – теории межкультурной коммуникации. В ней выделяются работы, посвященные проблемам межкультурной комму-

никации, рассматриваются основные направления исследований в данной области, принципы лингвистического детерминизма и релятивизма, основные уровни исследований культуры в американской коммуникативистике и т.д. Статья знакомит читателя с такими новыми “смелыми” областями теории межкультурной коммуникации, как *культурный империализм, глобализация культуры, медиа-экология*.

Ключевые слова: межкультурная коммуникация, монокультурная, кросскультурная, диалог культур, мультикультурализм, медиа-экология, лингвокультурология

N. HARUTYUNYAN – A Brief Review of the Development of Intercultural Communication Theory. – The paper presents a brief history of formation of the theory of intercultural communication – a relatively young branch of science. Special attention is paid to the major issues of intercultural communication and basic directions of research in this field, to the principles of linguistic determinism and relativism, to the main levels of analysis of culture in the American Communication Studies, etc. The author brings to light such new areas of the theory of intercultural communication as *cultural imperialism, globalization of culture, media ecology*.

Key words: intercultural communication, mono-cultural, cross-cultural, multiculturalism, dialogue of cultures, media ecology, linguocultural studies

Անահիտ ՄԱԿԱՐՅԱՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական
լեզվահասարակագիտական համալսարան

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
Չ. ՖԱՌԻԼՉԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՈՃՈՒՄ
(«Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի հիման վրա)

Սույն հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել «ազատություն» հասկացության առկայացման միջոցները Չ. Ֆաուլզի հեղինակային ոճում՝ «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի վերլուծության միջոցով: Վերոնշյալ ստեղծագործության լեզվաոճական քննությունը հնարավորություն է տալիս առանձնացնել պատկերավորման մի շարք միջոցներ, այլաբերություններ, հեղինակային դիպվածային բառեր՝ կապված «ազատություն» հասկացության հետ, որոնք նպաստում են հեղինակային ոճի առանձնահատկությունների վերհանմանը: Տվյալ ստեղծագործության մեջ Ֆաուլզը զարգացնում է «անհատական ազատության» գաղափարը՝ արտակա և ներակա լեզվական տարբեր միջոցներով պատկերելով «ազատության» յուրովի ընկալումն ու մեկնաբանումը:

Բանալի բառեր. հեղինակային ոճ, գուգորդական-իմաստային դաշտ, հասկացույթ, պատկերավորման միջոցներ, հեղինակային դիպվածային բառեր, անհատական ազատություն, վիկտորյանական դարաշրջան

Հեղինակային ոճի գաղափարը ուսումնասիրությունների առարկա է դարձել դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսին և ներկայումս նույնպես գտնվում է լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Սակայն ժամանակակից լեզվաբանության մեջ չկա հեղինակային ոճը նկարագրող մեկ համընդհանուր մոտեցում. տարբեր լեզվաբաններ իրենց տեսակետը և մոտեցումներն են առաջարկում հեղինակային ոճի վերաբերյալ: Վերջինս հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռուս լեզվաբանների շրջանակներում, և դրան նվիրված են մի շարք աշխատություններ:

Ըստ Գ. Մ. Պոցեպնիայի՝ աշխարհի հեղինակային պատկերի բառային առկայացումը գրական ստեղծագործության մեջ լեզվի գեղագիտական գործառույթի արտացոլման միջոց է /Поцепня, 1997: 251/:

Հեղինակային ոճը փոխկապակցված լեզվական միավորների բարդ համակարգ է, որն էլ հենց ձևավորում է հեղինակի գեղարվեստական աշխարհը /Некрасова, 1991: 123/:

Հեղինակային ոճ ասելով հասկանում են՝ «անհատական ոճ, որը միջոց է խոսքային ակտի կամ գրական ստեղծագործության ձևավորման համար՝ լեզվական միավորների անհատական և համակցված ընտրության միջոցով» /Ярцева, 2000: 494/:

Միևնույն ժամանակ Ն. Ս. Բոլտոնովան նշում է, որ «հեղինակի ստեղծագործական անհատականությունը երևան է գալիս ոչ միայն ստեղծագոր-

ծության նյութի, թեմայի, խնդիրների ընտրությամբ, ինչպես նաև որոշակի լեզվական միավորների նախընտրությամբ, այլև այնպիսի բազմատեսակ միջոցների կիրառմամբ, որոնք կձևավորեն ստեղծագործական երկխոսություն ընթերցողի հետ՝ վերջինիս գիտակցության մեջ որոշակի զուգորդումներ առաջացնելով» /Болотнова, 2004: 8/:

Ճանաչողական մոտեցման ներկայացուցիչները նկարագրում են հեղինակային ոճը զուգորդական-իմաստային դաշտի միջոցով, որն արտացոլվում է տեքստի իմաստային և զուգորդական կառուցվածքում: Ըստ Ն. Ս. Բոլոտնովայի՝ «գեղարվեստական տեքստի զուգորդական-իմաստային դաշտերը, առկայացված լինելով տեքստում բառերի միջոցով, ոչ միայն տեքստի վերլուծության միավոր են, այլև կարգավորիչ կառույցներ, որոնք սերտորեն կապված են տեքստն ընկալող սուբյեկտի գիտակցության մեջ առկա հասկացությունների հետ» /Болотнова, 1998: 24/:

Ի. Ա. Տարասովան, հեղինակային ոճ ասելով, հասկանում է «հասկացության մտավոր և լեզվական, ինչպես նաև ճանաչողական կառուցվածքի և դրա լեզվական արտահայտման ամբողջություն» /Тарасова, 2004/:

Մույն հոդվածի նպատակն է «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի լեզվատնական վերլուծության միջոցով վեր հանել Ջ. Ֆաուլզի հեղինակային մոտեցումը «ազատություն» գաղափարին: Ջ. Ֆաուլզը «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպում ազատության խնդրին անդրադառնում է վիկտորյանական դարաշրջանի լույսի ներքո՝ նկարագրելով հասարակության և անհատների փոխհարաբերությունը: Հեղինակն ամբողջ վիկտորյանական դարաշրջանը նկարագրում է Լայմ քաղաքում տեղի ունեցող իրադարձությունների միջոցով. վերջինս էլ անհատականության ոտնահարման, սահմանափակումների, ազատության բացակայության խորհրդանիշ է տվյալ վեպում: Վերոնշյալն ակնհայտ է դառնում հետևյալ օրինակների վերլուծության միջոցով:

Lyme was a town of sharp eyes; and this (London) was a city of the blind. No one turned and looked at him. He was almost invisible, he did not exist, and this gave him a sense of freedom, but a terrible sense, for he had in reality lost it All in his life was lost; and all reminded him that it was lost (The French Lieutenant's Woman, p. 124).

Վերոնշյալ հատվածում Ֆաուլզը Լայմ քաղաքը հակադրում է Լոնդոնին: Օգտագործելով այլաբերության տեսակներից մեկը՝ փոխանունությունը, այն է՝ “a town of sharp eyes” և “a city of the blind”, Լայմը նկարագրվում է որպես մի քաղաք, որտեղ հասարակությունը ուշի-ուշով հետևում է այնտեղ կատարվող ցանկացած իրադարձության, մինչդեռ Լոնդոնը նա պատկերում է որպես մի քաղաք, ուր իշխում է անտարբերությունը, և այլ մարդկանց ապրելաճը բնավ չի հետաքրքրում հասարակության մյուս անդամներին: Վերոնշյալ օրինակից կարելի է եզրակացնել, որ Լոնդոնում տիրող մթնոլորտը նպաստում է հերոսի մեջ ազատության զգացումի ձևավորմանը “this gave him a sense of freedom”: Սակայն հետաքրքրականն այն է, որ հաջորդիվ հեղինակը հավելում

է՝ “*but a terrible sense*”, այսինքն՝ ազատություն, որը նա երբեք չի զգացել Լայմուն ապրելու տարիներին:

Մեջբերված օրինակում ուշագրավ ոճական հնարներից է նաև հեղինակի կողմից բարձրացող աստիճանավորման օգտագործումը “*he had in reality lost it ... All in his life was lost*”, որի միջոցով Ֆաուլզը նկարագրում է ոչ միայն իր ազատության կորուստը, այլև իր ապրած ամբողջ կյանքի ապարդյուն լինելը Լայմ քաղաքում: Պատկերավորման այս միջոցը հեղինակի խոսքին հաղորդում է իմաստային ու արտահայտչական աճ և պատկերավորություն: Արտահայտչական տպավորության ուժեղացման նպատակով հեղինակը դիմում է նաև կրկնություն ոճական հնարին՝ մի քանի անգամ կրկնելով *lost, all, it* բառերը “*he had in reality lost it ... All in his life was lost; and all reminded him that it was lost*”: Վերոնշյալ բառերի կրկնությամբ հեղինակը փորձ է անում ընթերցողի ուշադրությունը սևեռել հերոսի ազատության կորստի վրա:

Mrs. Poulteney had two obsessions: or two aspects of the same obsession ... But the most abominable thing of all was that even outside her house she acknowledged no bounds to her authority (The French Lieutenant’s Woman, p. 9).

Վիկտորյանական Անգլիայի ներկայացուցիչներն էին Լայմ քաղաքի բնակիչները, որոնք նպաստում էին երկրում և մասնավորապես Լայմում ճնշող, կաշկանդող մթնոլորտի ձևավորմանը: “*She acknowledged no bounds to her authority*” փոխաբերության կիրառմամբ հեղինակը պատկերում է այդ հասարակության ներկայացուցիչներից մեկին՝ տիկին Փոլթենիին, ով սահմանափակում էր ոչ միայն իր տան բնակիչների ազատությունը, այլ իր իշխանությունը տարածում էր նաև այդ քաղաքում ապրողների վրա: Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում “*authority*” բառի վերլուծությունը, քանի որ վերջինս անգլերենում «ազատություն» հասկացության տեսականիչներից մեկն է համարվում՝ ըստ Ռոժեի թեզաորոս բառարանի /<http://thesaurus.com/browse/freedom/>: Ինչպես գիտենք, հեղինակի լեզվական անհատականության ճանաչողական մակարդակը բնութագրվում է զուգորդական-իմաստային դաշտերի համակարգի միջոցով: «Ազատություն» հասկացության իմաստային դաշտի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինս ունի երկակի բնույթ՝ դրական ազատություն և բացասական ազատություն: “*Authority*” բառը տվյալ համատեքստում զուգորդվում է բացասական ազատության հետ, քանի որ տիկին Փոլթենիի ազատությունը հանգեցնում է գեր-իշխանության, հասարակության մեջ ստորադաս դիրք գրավող անդամների նսեմացման և իրավունքների ոտնահարման:

Այնուամենայնիվ, հեղինակը զարգացնում է այն միտքը, որ հերոսի ազատության կորուստը պայմանավորված է ոչ միայն վիկտորյանական դարաշրջանի բռնատիրությամբ և սահմանափակումներով, այլև հենց իր՝ հերոսի թուլականությամբ, անվճռականությամբ և անհաստատականությամբ:

And here we come near the real germ of Charles’s discontent: this feeling that he was now the bought husband, his in-law’s puppet. Never mind that such marriages were traditional in his class; the tradition had sprung from an age when

*polite marriage was a publicly accepted business contract that neither husband nor wife was expected to honor much beyond its terms: money for rank... From that would follow the other necessities: his gratitude for her money, this being **morally blackmailed** into a partnership ...* (The French Lieutenant's Woman, p. 125).

Հետաքրքրություն է ներկայացնում *“polite marriage”* մակդրային բառակապակցությունը, որը տվյալ համատեքստում կրում է հաշվարկով ամուսնության իմաստը: *Polite* մակդիրի կիրառությամբ հեղինակը ցանկանում է ընդգծել, որ այդ ամուսնությունը հիմնված է ոչ թե սիրո և հարգանքի, այլ հասարակության կողմից ընդունված պայմանականությունների վրա: Հերոսի մտահոգության և մտատանջության պատճառն է հենց իր նմանատիպ ամուսնության պատրաստվելը բավականին հարուստ մի աղջկա՝ Էռնեստինայի հետ, ինչի արդյունքում նա ստիպված կլինի վերջնականապես կորցնել իր ազատությունը: Ֆաուլզը Չարլզի ազատության կորուստը պատկերում է *“this feeling that he was now the bought husband, his in-law's puppet”* ծավալուն փոխաբերության միջոցով, որը ցույց է տալիս հերոսի դժկամությունը դառնալ խամահիկ Էռնեստինայի հոր ձեռքերում: Վերջիվերջո, օգտագործելով *“morally blackmailed”* բառակապակցությունը, հեղինակն ընդգծում է այն փաստը, որ հաշվարկով ամուսնությունը և ֆինանսական կախվածությունը կարող են հանգեցնել բարոյական կաշկանդվածություն և պարտավորվածության:

And Ernestina, his engagement vows? But to recall them was to be a prisoner waking from a dream that he was free and trying to stand, only to be jerked down by his chains back into the black reality of his cell (The French Lieutenant's Woman, p.130).

Հերոսի տարակուսանքը, անհանգիստ հոգեվիճակը պատկերված է ներակա լեզվական մի շարք միջոցներով, որոնք առկա են մեջբերված օրինակում: Պատահական չէ Ֆաուլզի կողմից *“And Ernestina, his engagement vows?”* հռետորական հարցի ձևակերպումը, քանի որ այն ցույց է տալիս Չարլզի հոգեկան վիճակը, նրա մտորումները՝ ընտրել ազատությունը, թե հասարակական դիրքն ու կայուն ֆինանսական վիճակը: Այնուամենայնիվ, ճաշակած լինելով ազատության և իրական սիրո համը, Չարլզը Էռնեստինայի հետ ամուսնությունը զուգորդում է կապանքների, շղթաների, բանտարկության հետ, որը հեղինակն արտահայտում է *“to be jerked down by his chains back into the black reality of his cell”* ծավալուն փոխաբերության միջոցով: Հետաքրքրական է *“black reality”* մակդրային բառակապակցությունը, որը հնարավորություն է տալիս գուգորդել տիրող մթնոլորտը մռայլության, մթության, խավարի հետ:

Հեղինակային ոճը «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» ստեղծագործության մեջ իր վառ արտացոլումն է գտնում Ջ. Ֆաուլզի կողմից մի շարք հեղինակային դիպվածային բառերի կիրառմամբ: Ինչպես օրինակ՝

He was trapped. He could not be, but he was. He stood for a moment against the vast pressures of his age; then felt cold, chilled to his innermost marrow by an icy rage against Mr. Freeman and Freemanism (The French Lieutenant's Woman, p. 126).

Պատահական չէ Ֆաուլզի կողմից հենց Freeman ազգանվան օգտագործումը, որը անգլերենից թարգմանաբար նշանակում է «ազատ մարդ»: Փաստորեն Freeman-ը հանդես է գալիս որպես ոճական հնար տվյալ համատեքստում, որով հեղինակը հեզնանք է արտահայտում՝ դատապարտելով հասարակության այն անդամներին, որոնք զուրկ են բարոյական սկզբունքներից, ովքեր զրկում են հասարակության մյուս անդամներին ազատությունից: Հետաքրքրություն է ներկայացնում “Freemanism” բառը, որը տվյալ ստեղծագործության մեջ հեղինակային դիպվածային բառ է, որով Ֆաուլզը վեր է հանում Չարլզի և Ֆրիմենի աշխարհընկալման, բարոյական արժեքների և սկզբունքների հակադրությունը: Ֆաուլզն այս բառով բնութագրում է վիկտորյանական դարաշրջանի այն մարդկանց, ում բնորոշ էին պարոն Ֆրիմենի մտածելակերպը, հատկանիշները, ապրելաոճը, վարքագիծը և արժեքները:

Հեղինակային մեկ այլ դիպվածային բառի կարող ենք հանդիպել ներքոհիշյալ հատվածում:

And Charles, though he wished he had not drunk so much, and so had to see everything twice over, found it delicious, gay, animated, and above all, unFreemanish (The French Lieutenant’s Woman, p. 129).

Այս համատեքստում “unFreemanish” բառը նույնպես հանդես է գալիս որպես հեղինակային դիպվածային բառ, որով Ֆաուլզը նկարագրում է այն ամենն ինչ հատուկ չէ Ֆրիմենին: Վերջինս անգութ է, անխիղճ, թույլ չի տալիս, որպեսզի մարդիկ զվարճանան, վայելեն իրենց ազատությունը, այլ խեղդում, ճնշում է մարդկանց բնական զգացմունքները՝ դարձնելով նրանց անզգա և միայն փողին ձգտող:

Հեղինակային դիպվածային բառ է նաև “demi-liberty” բառը, որն այս համատեքստում ունի «ոչ լիարժեք ազատության» իմաստը:

Thus it was that Sarah achieved a daily demi-liberty (The French Lieutenant’s woman, p. 26).

“Demi-liberty” հեղինակային դիպվածային բառը տվյալ համատեքստում արտահայտում է Ֆաուլզի ազատության ընկալումը: Ըստ նրա՝ ազատությունը կարող է նաև պայմանավորված լինել մարդկանց փոխզիջումների, փոխըմբռնման գնալու կարողությամբ:

“Freedom” բառի հոգնակի կիրառությունը նույնպես տվյալ ստեղծագործության մեջ հեղինակային դիպվածային բառ է, որի միջոցով հեղինակը շեշտում է «ազատության» կարևորությունը:

To both came the same insight: the wonderful new freedoms their age brought, how wonderful it was to be thoroughly modern young people, with a thoroughly modern sense of humor, a millennium away from... (The French Lieutenant’s woman, p. 46).

Հեղինակը “freedom” բառի կիրառմամբ, ինչպես նաև “thoroughly modern” բառակապակցության կրկնությամբ փորձում է ցույց տալ, որ նոր սերունդն ավելի անկաշկանդ և ազատ է:

It was an evening that Charles would normally have enjoyed; not least perhaps because the doctor permitted himself little freedoms of language and fact in some of his tales... (The French Lieutenant's woman, p. 63)

“Freedom” բառի հոգնակի կիրառությամբ հեղինակը տվյալ համատեքստում սաստկացնում է «ազատություն» բառի իմաստը՝ ընթերցողի ուշադրությունը գրավելով այն փաստի վրա, որ վիկտորյանական դարաշրջանում լեզվի, խոսքի ազատությունը բավականին հազվադեպ երևույթ էր:

Indeed it was hardly Sarah he now thought of—she was merely the symbol around which had accreted all his lost possibilities, his extinct freedoms, his never-to-be-taken journeys ... (The French Lieutenant's woman, p. 142)

Տվյալ օրինակում հեղինակը զարգացնում է այն միտքը, որ Սառան Չարլզի համար կորցրած ազատության խորհրդանիշն է: “Extinct freedoms” մակդրային բառակապակցությունն իր իմաստի մեջ պարունակում է «կորցրած, չիրականացած հնարավորություն» իմաստը, ինչի բացակայության մասին նա սկսել է մտածել միայն Սառայի հետ ծանոթանալուց հետո: Փաստորեն Սառան է, որ Չարլզի մեջ ինքնավստահություն և վճռականություն է ներշնչում հանուն ազատության պայքարելու համար:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի լեզվաոճական քննությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել «ազատություն» հասկացության առկայացման միջոցները Ֆաուլզի հեղինակային ոճում: Պատկերավորման մի շարք միջոցների, այլաբերությունների, հեղինակային դիպվածային բառերի վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել Ֆաուլզի հեղինակային ոճի առանձնահատկությունները: Այսպիսով, «Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» ստեղծագործության մեջ հեղինակը զարգացնում է այն միտքը, որ հերոսի ազատության կորուստը պայմանավորված է ոչ միայն վիկտորյանական դարաշրջանի բռնատիրությամբ և սահմանափակումներով, այլև հենց իր՝ հերոսի թուլակամությամբ, անվճռականությամբ և անհաստատակամությամբ: Վերոնշյալը թույլ է տալիս վեր հանելու հեղինակի միտումը, ըստ որի՝ հերոսը չպետք է ենթարկվի այդ դարաշրջանի նախապաշարմունքներին ու պայմանականություններին, այլ ձգտի պայքարել անհատական ազատություն ձեռք բերելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Болотнова Н.С. Изучение идиостиля в современной коммуникативной стилистике художественного текста // *Тезисы II Международного конгресса русистов-исследователей*. Москва: МГУ, 2004 // Электр. ресурс: <http://www.philol.msu.ru/~rlc2004/ru/participants/psearch.php?pid=24087>
2. Болотнова Н.С. Об изучении ассоциативно-смысловых полей слов в художественном тексте // *Русистка: Лингвистическая парадигма*

- конца XX века: Сб. статей в честь профессора С. Г. Ильенко. Санкт-Петербург, 1998.
3. Некрасова Е.А. А. Фет, И. Анненский: Типологический аспект описания. Москва: Наука, 1991.
 4. Поцепня Д. М. Образ мира в слове писателя. Санкт-Петербург, 1997.
 5. Тарасова И.А. Категории когнитивной лингвистики в исследовании идиостиля // *Вестник Самарского государственного университета. Языкознание*, 2004 // Электр. ресурс: <http://vestnik-samgu.samsu.ru/gum/2004web1/yaz/200411601.html>
 6. Языкознание. Большой энциклопедический словарь / Под ред В.Н. Ярцевой, 2-е изд. М.: Большая Российская Энциклопедия, 2000.
 7. Fowles J. *The French Lieutenant's Woman*, 1969 // eBook scanned/proofed by Binwiped 12/02 // URL: http://gigy.weebly.com/uploads/5/9/4/4/5944278/john_fowles_the_french_lieutenants_woman.pdf

А. МАКАРЯН – Способы актуализации концепта «свобода» в идиостиле Дж. Фаулза (на материале романа «Любовница французского лейтенанта»).

– Целью данной работы является изучение способов актуализации концепта «свобода» в идиостиле Дж. Фаулза на материале анализа романа «Любовница французского лейтенанта». Лингвостилистический анализ романа позволяет выявить ряд используемых автором стилистических приемов, тропов и окказионализмов, которые выявляют особенности идиостиля Дж. Фаулза. Концепт «свобода» вербализуется в романе с помощью эксплицитных и имплицитных языковых средств, способствующих актуализации авторской концепции понятия «индивидуальная свобода».

Ключевые слова: идиостиль, ассоциативно-смысловое поле, концепт, стилистические приемы, окказионализмы, индивидуальная свобода, викторианская эпоха

A. MAKARYAN – Means of Actualization of the Concept of “Freedom” in the Individual Style of John Fowles (based on the Novel “The French Lieutenant’s Woman”).

– The present paper aims at studying the concept “freedom” in J. Fowles’ individual style based on the analysis of the novel “The French Lieutenant’s Woman”. The linguo-stylistic analysis of the novel makes it possible to single out a number of stylistic devices – tropes and nonce-words – underlying the concept of “freedom”, which reveal the peculiarities of J. Fowles’ individual style. The concept of “freedom” is verbalized in the novel by various explicit and implicit language means which disclose the author’s individual perception and interpretation of the concept of “freedom”.

Key words: individual style, associative-semantic field, concept, stylistic devices, nonce-words, freedom, Victorian Age

Ժաննա ՄԻԴՈՅԱՆ
Անուշ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

ՀԱՍԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՅԼ ՁԵՎԵՐԻՑ

Սույն հոդվածում քննարկվում է համացանցային հաղորդակցության լեզուն, որը լեզվի գոյության ավանդական ձևերի հիման վրա, դարձել է նոր լեզվաբանական միավոր: Ժամանակակից համացանցով հաղորդակցության մեջ իրացվում են բանավոր և գրավոր խոսքի շատ հատկանիշներ, որոնք պայմաններ են ստեղծում լեզվի գոյության բանավոր և գրավոր ձևերի հիբրիդացման և նոր՝ հիբրիդային ձևի առաջացման համար: Այսպիսով, կարելի է փաստել, որ համացանցում հաղորդակցվողների կողմից կիրառվող խոսքն ունի իրեն բնորոշ գծերը՝ ներառելով խոսքի բանավոր և գրավոր ձևերի առանձնահատկությունները:

Բանալի բառեր. համացանցային լեզվաբանություն, համակարգչով միջնորդավորված հաղորդակցություն, վիրտուալ խոսույթ, վիրտուալ միջավայր, գրավոր և բանավոր հաղորդակցություն/խոսք, համացանցի ժանր, գերտեքստ, գծային տեքստ, համաժամանակյա/տարժամանակյա

Ներկայումս համացանցով հաղորդակցությունն իրենից ներկայացնում է ոչ միայն հաղորդակցության նոր կապուղի, այլև սոցիալ-մշակութային միջավայր, որն իր հետքն է թողնում համացանցում փոխգործակցության բոլոր գործոնների վրա, ներառյալ նաև լեզուն, որը հաղորդակցության հիմնական միջոց է, մտքերի և գգացմունքների արտահայտման գործիք: Հաղորդակցության նոր միջոցների ի հայտ գալը հանգեցրել է հաղորդակցական գործընթացի կառուցվածքի և բնույթի փոփոխության, որն անխուսափելիորեն արտահայտվում է մասնակիցների խոսքային վարքագծի մեջ: Արդի համընդհանուր հաղորդակցությունների դարաշրջանում համացանցով հաղորդակցությունն ամենաշատ տարածումն ունի: Այն ներառում է խոսքի տարատեսակ մեթոդներ և հաղորդակցության ձևաչափեր: Աստիճանաբար հաղորդակցության այդ տեսակը դառնում է մեր ժամանակների խորհրդանիշը:

Համացանցով հաղորդակցության առանձնահատկություններից են իրական և վիրտուալ միջավայրերում հաղորդակցությունները, որոնք կազմում են խոսութային տիրույթը՝ հաղորդակցման միավորների ամբողջությունը, այսինքն՝ ավարտված և անավարտ, կարճ և երկար, գրավոր և բանավոր, երկխոսության և մենախոսության արտահայտությունները /Кондрашов, 2004/:

Խոսույթ եզրը սկսել է լայնորեն կիրառվել 20-րդ դարի 70-ական թթ.: Խոսույթը խոսք է, լեզվական գործունեության գործընթաց, խոսելու եղանակ: Լեզվաբանության մեջ «խոսույթ» գիտաբանն իմաստով մոտ է «տեքստ» հասկացությանը, սակայն դրանով ընդգծվում է ժամանակի մեջ զարգացող

հաղորդակցության խոսքային բնույթը, իսկ տեքստն ընկալվում է իբրև անշարժ օբյեկտ, լեզվական գործունեության արդյունք /Merriam-Webster Online, URL: <http://www.merriamwebster.com/>:

Միասնական տեսակետ չկա նաև վիրտուալ խոսույթի վերաբերյալ, որն ի հայտ է եկել համակարգչային տեխնիկայի զարգացման արդյունքում: Խոսույթի առումով, համակարգչային հաղորդակցությունը ներառում է նկարագրություն և հաղորդում, հաստատում և հիմնավորում, փաստարկում և ապացուցում, այսինքն՝ խոսքի գիտական և այլ ոճերի բոլոր տերմինաբանական հատկանիշները:

Այսպիսով, ելնելով վերը արված խոսույթի ընդհանուր սահմանումից՝ վիրտուալ խոսույթը կարելի է սահմանել որպես արհեստականորեն ստեղծված հաղորդակցական տիրույթի մեջ իրացվող տեքստերի ամբողջություն, որը ենթադրում է վիրտուալ հաղորդակցվողների ինտերակտիվ հաղորդակցություն:

Լինելով արհեստականորեն ստեղծված հաղորդակցության միջավայր՝ վիրտուալ խոսույթն, ըստ էության, պայմանական է և չունի ժամանակի և տարածության սահմանափակում: Նույն պահին աշխարհի ցանկացած կետից երկու և ավելի զրուցակիցների հաղորդակցվելու հնարավորությունը չեզոքացնում է պետական, ազգային, տնտեսական, քաղաքական և մշակութային սահմանները:

Համացանցն էլեկտրոնային, գլոբալ և ինտերակտիվ հատկություններով օժտված միջավայր է, և այդ հատկություններից յուրաքանչյուրն իր նշանակությունն ու կարևորությունն ունի այն ներկայացնող լեզվի համար /Crystal, 2009: 26/: Մինչև համացանցի կիրառության մեջ մտնելը հաղորդակցությունն իրականացվում էր երկու ձևով՝ գրավոր և բանավոր, որոնք գտնվում են բարդ միասնության մեջ և գործնականում հավասարապես կարևոր նշանակություն ունեն: Հաղորդակցության իրականացման ընթացքում ակնհայտ է դառնում այդ երկու ձևերի փոխկապակցվածությունը: Ցանկացած գրավոր տեքստ կարող է հնչել, այսինքն՝ բարձրաձայն կարդացվել, իսկ բանավոր տեքստերը կարող են գրառվել տեխնիկական միջոցների օգնությամբ:

Նորագույն տեխնոլոգիաների զարգացումը հաղորդակցման նոր ձևերի (համացանցային կամ էլեկտրոնային հաղորդակցումը, համակարգչով միջնորդավորված հաղորդակցումը, համացանցային հաղորդակցման տարատեսակ ժանրերը, հեռախոսային խոսակցությունները, ռադիոհաղորդումները փեյջերի և ինքնապատասխանիչի միջոցով, նամակները, էլեկտրոնային փոստի միջոցով հաղորդակցումը և այլն) առաջացման հիմք հանդիսացավ: Համացանցով հաղորդակցության յուրահատկություններից է ոչ միայն համակարգչով միջնորդավորվածությունը, այլև մարդ-համակարգիչ անմիջական հաղորդակցության փաստը, որը գլխավոր տարբերությունն է հաղորդակցության գրավոր և բանավոր ձևերից: Միջնորդավորված գրավոր հաղորդակցությունը մինչև վերջին ժամանակներս իրականացվում էր առավելապես գրավոր մենախոսության ձևով և արտահայտվում ստանդարտ տեքստերով: Սակայն համացանցով միջնորդավորված հաղորդակցությունն առավել հաճախ ար-

տահայտվում է հաղորդակցման ոչ մենախոսական տեսակներով և բնութագրվում բազմաստիճան կառուցվածքով:

Վիրտուալ իրականությունը նույնպես ստեղծվում է տեքստերի միջոցով և, ի տարբերություն ավանդական գրավոր տեքստի, վիրտուալ աշխարհում իրական մարդիկ են, որոնք իրականում շփվում են միմյանց հետ: Այդ հաղորդակցական միջավայրում մարդը ստեղծում է տեղեկատվություն, գիտելիք, որը ներկայացվում է յուրահատուկ, վառ լեզվական ձևավորում ունեցող տեքստերի միջոցով:

Վիրտուալ միջավայրում տեքստային հիմքը կազմում է արտաբերվող խոսքը՝ գրավոր տեքստի որոշակի գծերի միավորմամբ, եզրերի, գրական խոսքի, խոսելաձևի, մասնագիտական, խոսակցական բառապաշարի, բարբառային արտահայտությունների լայն օգտագործմամբ: Գրավոր խոսքը դառնում է շփման գերակայող միջոց և, բացի հաղորդագրության տեքստից, աչքի է ընկնում նաև տարբեր մետատեքստային նշաններով: Գրավոր հաղորդակցությունը փոխանցում է տեղեկատվությունը սխեմաների, պատկերների, նկարների և լուսանկարների միջոցով:

Վիրտուալ հաղորդակցության պայմաններում տեղեկատվությունը փոխանակվում է ոչ միայն տեքստերի, այլև տարբեր պատկերների ձևով: Չարգացած է մուլտիմեդիայի ոլորտը, այսինքն՝ տեսողական և հնչյունային պատկերների մուտքը, որոնք վերարտադրվում են օգտագործողի պահանջով՝ էականորեն փոխելով տեքստի ավանդական պատկերացումները:

Այսպիսով, վիրտուալ հաղորդակցությունն արտահայտվում է բանավոր, գրավոր և պատկերային ձևերով, այսինքն՝ իրենից ներկայացնում է կրեոլիզացված տեքստ: Կրեոլիզացված տեքստ ասելով՝ հասկանում ենք տեղեկատվության փոխանցման խոսքային և ոչ խոսքային (պատկերային) միջոցներ: Հաղորդակցության միջանկյալության հետևանքով նշանային տարբերը ձեռք են բերում հատուկ նշանակություն և ձևավորում ընդհանուր տեսողական, կառուցվածքային, իմաստային և գործառությանին ամբողջություն, որն ունենում է գործաբանական ազդեցություն հասցեատիրոջ վրա: Խոսքի գոյության ձևն ուշադրության է արժանի նաև համացանցով միջնորդավորված հաղորդակցության գործընթացում, քանի որ հաղորդակցվողների խոսքն ամրագրվում է գրաֆիկական եղանակով, այսինքն՝ գրի է առնվում: Այդ է պատճառը, որ համացանցից օգտվողները ցանցային հաղորդակցության առավելություններից մեկը համարում են նոր նամակագրական ժանրի ձևավորումը, և դրա հետ կապված՝ ընդգծում են գրավոր խոսքի իրացման ժամանակ մտքերի հստակ և պարզ շարադրման անհրաժեշտությունը: Սակայն այդ տեսակետն այնքան էլ ընդունելի չէ, քանի որ խոսքի գրավոր և բանավոր ձևերը սահմանազատվում են նաև տարաբնույթ իրացման մեխանիզմներով և գործառության հանգամանքներով /Лутовинова, 2004/:

Իսկապես, եթե հիմք ընդունենք խոսքի ամրագրման փաստը, ապա պետք է գրավոր խոսքը համարենք համացանցով հաղորդակցության հիմքը, քանի որ այդ հաղորդակցությունը ենթադրում է միջնորդավորվածություն գրավոր

խորհրդանիշների միջոցով և հաղորդակցվողների միջև տարածության առկայություն: Բացի դրանից, նշվածը հաստատվում է նաև հիպերտեքստի առկայությամբ, այսինքն՝ տեքստային տեղեկատվության ներկայացմամբ, երբ համացանցում ընթերցողները կարողանում են տեղաշարժվել ոչ գծային եղանակով, քանի որ բանավոր խոսքը գծային է: Հենց գրավոր խոսքում են հնարավոր ցանկացած տեսակի հստակեցնող բնույթի հղումներ՝ առանց ընդհատելու տեղեկատվությունը փոխանցողի միտքը, քանի որ տեղեկատվության փոխանցողն ու ստացողը կտրված են միմյանցից ժամանակի առումով, իսկ տեղեկատվությունը փոխանցողի կողմից ստեղծված տեքստը տեղեկատվությունն ստացողի կողմից ընթերցման ժամանակ արդեն ավարտված է և այլևս չի վերափոխվում:

Տարբեր խոսքի միջոցների տեխնիկական առանձնահատկություններից ելնելով՝ համացանցից յուրաքանչյուր օգտվող հնարավորություն ունի խմբագրել սեփական հաղորդագրությունները դրանք տեղեկատվությունն ստացողին ուղարկելուց առաջ, այսինքն՝ կարող է իրականացնել իր կողմից օգտագործված լեզվական միջոցների գիտակցական վերլուծություն: Բանավոր խոսքում, երբ խոսքի ձևավորման գործընթացը տեղի է ունենում մտածելու գործընթացին զուգահեռ, նման բան հնարավոր չէ: Այդուհանդերձ, համացանցով հաղորդակցության խոսքային բաղկացուցչի այլ մասերը թույլ չեն տալիս համացանցից օգտվողների խոսքը վերագրել խոսքի գրավոր ձևին: Այդ առումով, առաջին հերթին, ուշադրության է արժանի համացանցում փոխգործակցության մասնակիցների կողմից ուղղագրական կանոնների պարզ արտահայտված անտեսումը: Համացանցից շատ օգտվողներ բառերը գրում են այնպես, ինչպես դրանք արտասանվում են: Նախադասության առաջին բառերը կամ հատուկ անունները հաճախ գրվում են փոքրատառերով: Բացի այդ, որոշ բառերի գրաֆիկական ձևերը հաղորդակցվողների կողմից հատուկ մոտեցվում են դրանց հնչյունային ձևերին՝ հիշեցնելով ավելի շատ բառի տառադարձություն: Առավել հաճախ նման ձևերը կիրառվում են ակնթարթային հաղորդակցությունների ժամանակ (օրինակ՝ «ICQ» կամ «Chat»-ի ժանրով), այսինքն՝ առցանց ռեժիմով, երբ տեղեկատվություն փոխանցողի հաղորդագրություններն անմիջապես ընդունվում են տեղեկատվություն ստացողի կողմից: Սակայն նշված երևույթին կարելի է հանդիպել նաև հաղորդակցության ոչ համաժամանակյա ձևերում՝ ֆորում, բլոգ, էլեկտրոնային նամակ:

Պետք է նկատել, որ համացանցով հաղորդակցության ժամանակ ուղղագրության կանոնների խախտումներն ինչ-որ հաղորդակցական նորմի խախտում չեն համարվում և չեն ընկալվում որպես անհարգալից վերաբերմունք գրուցակցի նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ համացանցով հաղորդակցության ժամանակ հաղորդակցվողների տեքստերը գրավոր ամրագրվում են, համացանցից օգտվողների կողմից առցանց հաղորդակցությունն ընկալվում է որպես գրույց, ոչ թե նամակ: Հետևաբար նրանք փորձում են այդ տեքստերը մոտեցնել գրույցի համար կիրառվող բանավոր ձևին: Բացի

այդ, այստեղ կարելի է խոսել նաև հաղորդակցվողների ժամանակի և ջանքերի խնայողության մասին /Бергельсон, 2002: 58/:

Չմայած համացանցով հաղորդակցության ժամանակ, ի տարբերություն բանավոր հաղորդակցության, հաղորդակցվողները հնարավորություն են ունենում հաղորդագրությունն ուղարկելուց առաջ ուղղել դրանում առկա սխալները, նրանք հազվադեպ են օգտվում այդ հնարավորությունից: Եթե ինչ-որ ուղղումներ արվում են, ապա միայն այն դեպքում, երբ սխալները փոխում են արտահայտության իմաստը, և միայն այն բանից հետո, երբ հաղորդագրությունն արդեն ստացվել և ընթերցվել է հասցեատիրոջ կողմից:

Փաստորեն, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է խոսքի փոխանցման նոր ձևի առաջացմանը, որը համատեղում է նախկինում գոյություն ունեցող ձևերի հատկանիշները /Аврамова, 2010/: Եթե նախկինում խոսքի փոխանցման կապուղիները սերտորեն փոխկապակցված էին լեզվի գոյության հիմնական ձևերի (բանավոր, որը բնական կապի միջոց է և խոսքի փոխանցման անմիջական կապուղի, և գրավոր, որն արհեստական կապի միջոց է և խոսքի փոխանցման միջնորդավորված կապուղի) հետ, ապա 21-րդ դարի սկզբին, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ կապված, կապուղիների այդպիսի հստակ տարանջատումը դարձավ անհնար: Էլեկտրոնային հաղորդակցությունը փոխգործակցության սկզբունքորեն նոր ձև է, որի հետազոտման համար անհրաժեշտ է այն հարաբերակցել արդեն գոյություն ունեցող ձևերի հետ և դրա հիման վրա սահմանազատել հաղորդակցման այդ նոր տեսակը: Համացանցով հաղորդակցման ձևը կապված է թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի հետ:

Որոշ հեղինակներ համացանցի լեզուն անվանում են գրավոր խոսք /Elmer-Dewitt, 1994: 66-67/, իսկ տարժամանակյա առցանց գրույցների ուսումնասիրությունների որոշ հեղինակներ կարծում են, որ էլեկտրոնային խոսույթը գրավոր է, որը հաճախ կարդում են այնպես, ինչպես կխոսեին, այսինքն՝ գրի է առնվում բանավոր խոսքը /Boyd, 1997: 2/: Բանավոր հաղորդակցման ժամանակ օգտագործվում են լսողական, իսկ գրավոր հաղորդակցման ժամանակ տեսողական միջոցները: Տեղեկատվության փոխանցման միջոցների տարբերակումն սկզբունքայնորեն կարևոր ազդեցություն ունի գրավոր և բանավոր հաղորդակցման գործընթացի վրա: Բանավոր հաղորդակցման ժամանակ մտքերի ընկալումը կատարվում է համաժամանակյա, իսկ գրավոր հաղորդակցման ժամանակ՝ տարժամանակյա: Դրա հետ մեկտեղ, գրավոր հաղորդակցման գործընթացի արագությունը մի քանի անգամ ցածր է բանավոր հաղորդակցման գործընթացից, իսկ գրավոր մտքերի ընթերցման արագությունը մի քանի անգամ բարձր է բանավոր խոսքն արտաբերելուց, քանի որ վերջինս իրականացվում է ընդհատումներով և ուղեկցվում է դադարներով: Հանդես գալով որպես հաղորդակցման միջոց՝ համացանցը մեծ ազդեցություն է գործում հաղորդակցման գործընթացի վրա: Այնուամենայնիվ, այն՝ որպես հաղորդակցման տեխնիկական միջոց, չի կարող վերափոխափոխվել բուն հաղորդակցության էությունը: Ըստ հետազոտող Ե. Ա. Չենսկայայի՝ անհրա-

Ժշտություն չկա տեխնիկական միջոցի հիման վրա առանձնացնել խոսքի ինքնուրույն տեսակներ: Սակայն, ինչպես նշեցինք, հաղորդակցության նոր ոլորտ հանդիսացող համացանցն իսկապես մեծ չափով ազդեցություն ունի հաղորդակցվողների լեզվի վրա: Կարելի է պնդել, որ այդ փոփոխությունները հիմք են տալիս, բացի բանավոր և գրավոր ձևերից, խոսել հաղորդակցության երրորդ ձևի երևան գալու մասին: Պետք է նշել, որ համացանցում հաղորդակցվողների լեզվում սկզբունքային առանձնահատկություններ չկան: Համացանցի լեզվում իրացվում են խոսքի ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևերի հատկանիշները /տե՛ս Пуныко, 2009: 59-63/: Այսպիսով, համացանցում հաղորդակցության իրականացման հանգամանքները խոսքի նոր ձևի երևան գալու նախապայմաններն են:

4. Leonardi V. Teaching Business English through Translation // *Journal of Language & Translation*, 10 (1), 2009 // URL: http://www.unish.org/unish/DOWN/PDF/5_1_Leonardi_rev_and_finalD.pdf
5. Leonardi V. The Role of Pedagogical Translation in Second Language Acquisition – From Theory to Practice. Bern: International Academic Publishes, 2010.
6. Leonardi V. Pedagogical Translation as a Naturally Occurring Cognitive and Linguistic Activity in Foreign Language Learning. *AnnaliOnline di Lettere-Ferrara*, vol. 1–2, 2011 // URL: <http://eprints.unife.it/annali/lettere/2011voll1-2/leonardi.pdf>
7. Malmkjaer K. Translation and Language Teaching. Manchester: StJerome, 1998.
8. McDonough J. The Teacher as Language Learner: Worlds of Differences? *ELT Journal* vol. 56, no 4, 2002 // URL: http://biblioteca.uqroo.mx/hemeroteca/elt_journal/2002/octubre/560404
9. Nolasco R., Arthur L. Large Classes. Hemel Hempstead: Phoenix ELT, 1995.

Լ. ԿԱՏՔԱՐՅԱՆ, Լ. ԲԱԳՄՅԱՆ – *Перевод как метод обучения в преподавании английского языка.* – Данная статья рассматривает вопрос практического применения перевода при обучении английскому языку. Результаты исследования показывают, что процесс перевода в значительной степени может быть использован в качестве педагогического инструмента: переводческая деятельность играет важную роль в развитии, приобретении и закреплении разных языковых навыков учащихся, таких как говорение, слушание, чтение, письмо, а также словарный запас и грамматика.

Ключевые слова: методология, перевод, межкультурная коммуникация, преподавание языка, метод перевода, средства обучения, педагогический инструмент, языковые навыки

L. GASPARYAN, L. BAGUMYAN – *Translation as a Learning Method in English Language Teaching.* – The present paper touches upon the practical use of translation in the English language teaching and presents the results of the research carried out in at the faculty of Romance and Germanic Philology of Yerevan State University. The study shows that translation process can largely be used as a pedagogical tool: translation activities are very important in helping learners to acquire, develop and strengthen their language skills: speaking, listening, reading, writing, as well as vocabulary and grammar

Key words: methodology, translation, crosscultural communication, language teaching, translation method, learning tool, pedagogical tool, language skills

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երևանի պետական համալսարան

ԻՏԱԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆՂՄԱՆ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Տվյալ հոդվածում քննարկվում են իտալերենի դասավանդման արդի մեթոդները՝ առանձնացնելով հաղորդակցական մեթոդը և նոր տեխնոլոգիաները: Ուսուցման գործընթացում կիրառվող վարժությունների տեսակներն ուղղված են գրավոր և բանավոր խոսքի ձևավորմանն ու հարստացմանը, հաղորդակցական հմտությունների զարգացմանը և դասավանդման արդյունավետության բարձրացմանը: Նշվում է, որ իտալերենի ուսուցումը ավելի արդյունավետ, մատչելի և հետաքրքիր է դառնում նոր տեխնոլոգիաների ընձեռած բազում հնարավորությունների միջոցով:

Բանալի քառեր. *օտար լեզվի ուսուցում, դասավանդման արդի մեթոդներ, հաղորդակցական մեթոդ, հաղորդակցական հմտությունների զարգացում, նոր տեխնոլոգիաներ*

Արդի աշխարհում ընթացող քաղաքական, մշակութային, տնտեսական տարբեր փոփոխությունները, նոր գաղափարների և տեսակետների յուրացումը մեծապես նպաստում են օտար լեզուների ուսուցմանը: Լեզվի իմացությունը գործնական առումով մեծ անհրաժեշտություն է, և այսօր խոսքն արդեն առնվազն երկու կամ երեք օտար լեզուների իմացության մասին է: Օտար լեզու սովորելու շարժառիթները տարբեր են. լեզուն ծառայում է որպես շփման, շրջակա իրականության վերաբերյալ տեղեկատվության ընդունման և փոխանցման միջոց: Օտար լեզվի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու այլալեզու երկրի մշակույթին, պատմությանը, ընդարձակելու մտահորիզոնը:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում իտալերենի ուսուցումը մեծ տարածում ունի: Իտալերենը ամենաշատ ուսումնասիրվող լեզուն է՝ անգլերենից, ֆրանսերենից, իսպաներենից հետո /Gasperetti, 2014/: Իտալերենի ուսուցման տարածումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ քաղաքական, պատմական, տնտեսական, մշակութային: Ինչպես հայտնի է, իտալերենը համարվում է արվեստի, երաժշտության, գրականության, ճարտարապետության, քանդակագործության լեզու:

Իտալացի լեզվաբան Դանիելա Կավալերոն, ամփոփելով իտալերենի դասավանդման երկար տարիների իր փորձը, գրում է. «Երբ խոսք է լինում լեզու սովորելու մասին, անհրաժեշտ է կարևորել նաև մշակույթը, նույնիսկ եթե քերականությունը մեզ օգնում է սովորելու լեզվի կառուցվածքը, միևնույն է մշակույթի իմացությունը մեզ օգնում է առավել արդյունավետ շփվել տարբեր ազգերի հետ, ծանոթանալ նրանց պատմությանը՝ այդ ազգերին բնորոշ առանձնահատկություններին»: Մշակույթին տեղյակ լինելը ինտեգրվելու

անհրաժեշտ պայման է, իսկ լեզուն միջոց՝ տվյալ երկրում հաստատվելու /Cavallero, 2009: 12-14/:

Իտալիան շատ հայտնի է իր փառավոր անցյալով՝ Հռոմեական հզոր կայսրությանը և Վերածննդի դարաշրջանով, ինչը ճանապարհ բացեց նոր գաղափարների, հայտնագործությունների և արվեստի զարգացման համար: Ուստի պետք է նկատի ունենալ այս ամենը և ուսանողին ծանոթացնել Իտալիայի ժամանակակից կյանքին, արվեստին, մարդկանց առօրյային, ապրելակերպին, երկրի տարբեր շրջանների առանձնահատկություններին: Իտալերեն ուսումնասիրող ուսանողը այս ամենին պետք է տեղեկանա հենց իտալերեն:

Տարիներ շարունակ իտալերենի դասավանդման մեջ կիրառվել են թե՛ ավանդական, և թե՛ արդի մեթոդներ: Գժվար է տարանջատել անցյալի և արդի մեթոդները, քանի որ յուրաքանչյուրն իր հերթին ունի և՛ դրական, և՛ բացասական որոշ բնութագրեր: Ավանդական մեթոդների միջոցով ուսանողն առավելապես հարստացնում է տեսական գիտելիքները, իսկ արդի մեթոդները նպաստում են, որ նա արագ, մատչելի, հետաքրքիր կերպով գործնականորեն սովորի լեզուն: Անցյալի և նոր մեթոդները պետք է նպաստեն ուսանողի գիտելիքների հարստացմանը, իսկ կարողությունները վերածեն հմտությունների: /Balboni, Santipolo, 2003/:

Այս հոդվածում կներկայացնենք իտալերենի ուսուցման որոշ արդի մեթոդներ՝ առանձնացնելով հաղորդակցական մեթոդը՝ իբրև ուսուցման արդյունավետ միջոց և նոր տեխնոլոգիաները՝ որպես իտալերենի դասավանդման արդի մեթոդ:

Վ. Լ. Լիթլվուդի «Լեզվի հաղորդակցական ուսուցումը» մենագրությունը նվիրված է հաղորդակցական մոտեցման կիրառման տեսական ու գործնական խնդիրներին: Ինչպես նշում է հեղինակը, այսպես կոչված հաղորդակցական շարժումը սկզբնավորվել է 1970-ականների սկզբներին: Հաղորդակցական մոտեցման տեսանկյունից ուսուցման նպատակը սովորողի հաղորդակցական ունակության ձևավորումն է: Այս մեթոդը մեծապես տարածված է իտալերենի ուսուցման գործընթացում: Գրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ լեզուն սովորում են՝ հիմնվելով բանավոր խոսքի վրա՝ ըստ տարբեր իրավիճակների /Littlewood, 1983/:

Ըստ Լիթլվուդի՝ հաղորդակցական մոտեցմանը բնորոշ է նաև լեզվի գործառական և կառուցվածքային կողմերի միավորումը: Սա նոր մոտեցում է ոչ միայն տեսական, այլև մեթոդաբանական առումով: Նկատի ունենալով, որ հաղորդակցական մեթոդը ինչ-որ չափով հաջողությամբ համադրում է ոչ միայն տարբեր մեթոդների սկզբունքները, այլև մանկավարժական, դիդակտիկ, լեզվաբանական, հոգեբանական և մեթոդական տարբեր հայեցակետերը, անհրաժեշտություն է առաջանում թվարկելու արևմտյան գիտական հանրության ընդունած հաղորդակցական մոտեցման սկզբունքները.

1. Հնարավորինս գործածել ուսուցանվող տվյալ օտար լեզուն, ինչպես որ այն իրական ենթատեքստում օգտագործվում է, օրինակ՝ առաջարկվում է

համացանցից քաղել մարզամշակութային նյութեր: Այսինքն՝ ուսուցանվող լեզուն պիտի լինի աժմեական:

2. Հաղորդակցական իրազեկության մի մասը խոսողի կամ լսողի մտադրության պարզաբանումն է: Օրինակ՝ ուսանողները վերլուծում են նյութը, քննարկում և հայտնում իրենց կարծիքը:

3. Ուսուցանվող լեզուն ոչ թե ուսումնասիրության առարկա է, այլ հաղորդակցության միջոց:

4. Մի գործառույթը կարող է ունենալ լեզվական տարբեր ձևեր:

5. Ուսանողները պետք է լեզուն գործածեն խոսքային մակարդակում: Նրանք պետք է սովորեն կապակցել և համաձայնեցնել նախադասությունները և համախմբող, հարակցող լեզվական ունակություններ ունենան:

6. Խաղերը կարևոր են, որովհետև ունեն որոշակի ընդհանուր գծեր իրական հաղորդակցական իրադրությունների հետ: Դա ունի հաղորդակցական նպատակ: Ըստ այս սկզբունքի՝ ուսանողը լեզվական խաղ է խաղում:

7. Ուսանողին պետք է հնարավորություն տրվի արտահայտելու իր մտքերն ու կարծիքները:

8. Կարևոր է ոչ թե խոսքի ճշտությունը, այլ սահունությունը, այսինքն՝ սխալները հաղորդակցական տարբեր մակարդակներում ներելի են: Հետաքրքիրն այն է, որ ուսանողի սխալը կարող են «չնկատել» ոչ միայն ուսանողները, այլև դասախոսը:

9. Դասախոսի ամենակարևոր խնդիրը հաղորդակցությանը նպաստող իրադրությունների ստեղծումն է: Օրինակ՝ հանձնարարվում է հորինել մի փոքրիկ պատմվածք կամ կատարել մի առաջադրանք:

10. Հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը: Դա հնարավորություն է ստեղծում, որ ուսանողները բանակցեն:

11. Արտահայտություններն իմաստավորելիս կարևորվում է հաղորդակցական իրադրության սոցիալական ենթատեքստը:

12. Հաղորդակցական իրազեկության կարևոր մաս է լեզվական ձևերը համապատասխանորեն օգտագործել սովորելը:

13. Հաղորդակցական գործունեության ժամանակ դասախոսը հանդես է գալիս որպես խորհրդատու:

14. Հաղորդակցվելիս դասախոսը կանգնում է ոչ միայն *ինչ*, այլև *ինչպես* ասելու ընտրության առջև:

15. Ուսուցանվող քերականությունը և բառապաշարը ընտրվում են ըստ գործառույթի, իրադրական ենթատեքստի և խոսակիցների դերերի:

16. Ուսանողները պետք է յուրացնեն լեզուն՝ իբրև այն կրողներ:

Այսպիսով, կարելի է պնդել, որ հաղորդակցական մոտեցումը ներկայացնում է արդի մեթոդաբանական նոր հայեցակետ /տես՝ Դավոյան, 2005: 234-235/:

Հաղորդակցական կարողություններ ու հմտություններ դրսևորելը նպաստում է, որ ուսանողը կարողանա՝

1. լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

2. բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

3. ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած եզրույթները, հասկացությունները և արտահայտությունները,

4. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

5. օգտվել հաղորդակցման արդի տեխնիկական միջոցներից:

Ինչպես նշվեց վերևում, հաղորդակցական մոտեցումը ինչ-որ չափով հաջողությամբ համադրում է ոչ միայն տարբեր մեթոդների համապատասխանող սկզբունքները, այլև մանկավարժական, դիդակտիկ, լեզվաբանական, հոգեբանական և մեթոդական տարբեր տեսակետներ: Սկզբունքային նշանակություն ունի այն, որ ուսանողները հնարավորինս պետք է օգտագործեն ուսումնասիրվող լեզուն՝ իտալերենը: Ուսանողները պետք է յուրացնեն լեզուն՝ իբրև դրա կրողներ /Littlewood, 1983/:

Ըստ Լարսեն-Ֆրիմանի, դասախոսն օգնական է, ընկեր, խորհրդատու, նա պետք է ավելի շատ լսի, քան խոսի: Դասախոսը պետք է կազմի հետաքրքիր առաջադրանքներ, հաղորդակցական խաղեր, վարժություններ, կազմակերպի որևէ քննարկում՝ ուսանողի ճանաչողական ակտիվությունը բարձրացնելու և նրան կրթական գործընթացում ներգրավելու համար /Larsen-Freeman, 1986/: Այդպիսի առաջադրանքների դեպքում ուսանողները ակտիվորեն գրուցում են, քննարկում, բանավիճում: Նրանք ավելի պատասխանատու են իրենց ուսուցման գործընթացում: Մեծ ուշադրություն է դարձվում խմբակային ուսուցմանը: Խմբով աշխատելիս ուսանողներն ավելի հեշտ են յուրացնում ուսումնական նյութը, զարգացնում են ինքնուրույն աշխատանքի՝ իրենց հմտությունները, ինչպես նաև բացահայտվում են ուսանողի անհատական հնարավորությունները: Ուսանողը պետք է կարողանա իր ընկերներից լսել, նրանց հետ գրուցել, քննարկումներ կատարել: Ուսանողի և դասախոսի գործը հիմնված է համագործակցության վրա: Այս մեթոդի համար առաջնայինը հաղորդակցական ունակությունների զարգացումն է, ոչ թե լեզվի ուսուցումը քերականական մակարդակով: Լեզվի ուսուցման գործում մեծ կարևորություն ունեն նաև նոր տեխնոլոգիաները:

Վերջին տարիների նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ ստեղծվեցին լեզուների ուսուցման արդիական մեթոդներ: Բազմազան ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու ուղիներն ու մեր հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև լսարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաներն ուսանողներին նոր պահանջներ են առաջադրում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, նրանց պետք է հասանելի լինեն ուսուցման օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ ունակությունների օգտագործումը: Տեղեկատվական գիտելիքների վրա հիմնված հասարակությունը կրթական նոր

սկզբունքների պահանջ ունի: Այսինքն, ոչ միայն նոր տեխնիկա, այլև դասավանդման նոր ձևեր, նոր մեթոդներ, ուսուցման նոր սկզբունքներ ու եղանակներ: Օտար լեզվի արդի ուսուցման գլխավոր նպատակը սովորողի հաղորդակցվելու ունակության ձևավորումն է, օտար լեզվի գործնական տիրապետումը: Նոր տեխնոլոգիական միջոցների կիրառումը հնարավոր է կրթական հարուստ միջավայրում: Արդեն փաստ է, որ ուսուցումն առանց համակարգչի այլևս հնարավոր չէ պատկերացնել: Կրթական համակարգը ամեն կերպ պետք է աջակցի ուսուցման կազմակերպմանը՝ սովորողների համար ստեղծելով նոր տեխնիկական սարքավորումներին համապատասխան պայմաններ և ապահովելով դրանց արդյունավետ կիրառումը: Նոր մեդիամիջոցների զարգացման համար ենթադրելի են գիտելիքների ձեռք բերման բոլորովին նոր ուղղություններ և ուսուցման կազմակերպման նոր ձևեր: Դասավանդման ավանդական ձևերի կողմնակիցները բողոքում են՝ պատմողաբար հաղորդվող գիտելիքը այլևս պահանջարկ չունի, այժմ հարկավոր է լսարանում ստեղծել ժամանակին համապատասխանող տեխնոլոգիական պայմաններ՝ դասընթացը արդի մեթոդներով և արդյունավետ անցկացնելու համար:

Ավանդական ուսուցումը հիմնված է կառուցվածքային այնպիսի բովանդակության վրա, որի դեպքում սովորողին գիտելիք փոխանցողը դասախոսն է: Մինչդեռ տեղեկատվական հասարակության մեջ կրթության նկատմամբ պահանջն այլ է: Այն սովորողներից, ովքեր տիրապետում են նորագույն տեխնիկայի և ինքնուսուցման մեթոդների, պահանջում է առավել մեծ ակտիվություն:

Արդի մեթոդներով դասընթաց նշանակում է՝

1. անկախություն,
2. համագործակցություն,
3. ինտերակտիվություն,
4. ստեղծագործական մտքի զարգացում:

Կրթության նոր ձևերի ազդակումը նշանակում է՝

1. ուսուցման նոր ձևերի ներդրում,
2. դասախոսի նոր դերի ստեղծում,
3. ուսուցման գործընթացում նոր տեխնոլոգիաների ակտիվ ներգրավում,
4. մեդիամիջոցների ազատ օգտագործման մատչելիություն /տե՛ս Մովսիսյան, 2009/:

Նոր կրթության իրականացման այսպիսի փոփոխությունը մեծ մասամբ պայմանավորված է դասախոսի տարաբնույթ մեդիամիջոցներով աշխատելու պատրաստակամությամբ ու նախաձեռնությամբ: Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր ուսուցման հիմնական միջոց է համարվում ուսումնական ձեռնարկը, որն այսօր համադրվում է արդի տեխնոլոգիաներին: Առավել արդիական մեդիաները, այնպիսիք, ինչպիսիք են տեսաերիզները, ձայներիզները, հեռուստատեսությունը, համակարգիչը, արդեն ներառվել են կրթության գործ-

ընթացում՝ միաժամանակ չբացառելով դասավանդողների գոյությունն ու դասավանդման այլ միջոցները: Նրանք պետք է ուղղորդեն սովորողին *երբ, ինչպես* և *որտեղ* կիրառել այս կամ այն մեթոդափոփոխություն: Նրանք են ընտրում, ղեկավարում, հնարավորություն տալիս միացնելու կամ անջատելու սարքավորումները, հարկ եղած դեպքում ինչ-ինչ բաներ են կրկնում, հարցեր են տալիս: Մա ամենևին էլ չի նշանակում, որ սովորողները տեղեկատվության պասիվ սպառողներ են: Լրատվական միջոցներն օգտագործելիս անհրաժեշտ է ակտիվ աշխատանք և մասնակցություն ուսուցման գործընթացի տարբեր փուլերում:

Մանկավարժական արդի տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝ համագործակցության ուսուցումը, նախագծային մեթոդը, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, նպաստում են իրականացնելու դասավանդման ուսանողակենտրոն մոտեցում, ապահովում են անհատական ուսուցումը՝ ըստ սովորողի հնարավորությունների, մակարդակի, հակումների:

Համացանցի՝ մեզ տրամադրվող ռեսուրսները հսկայական են: Օտար լեզվի դասի ժամանակ համացանցի շնորհիվ լուծվում են դիդակտիկ շատ խնդիրներ.

1. սովորողի մոտ օտար լեզուն սովորելու ցանկության առաջացում,
2. ընթերցանության և գրելու հմտության ձևավորում՝ օգտագործելով համացանցի նյութերը,
3. արտասանությունը բարելավելու աշխատանք,
4. երկխոսության և մենախոսության ուսուցում,
5. բառապաշարի ուսուցում:

Բացի այդ, աշխատանքը նպատակաուղղված է համացանցային տեխնոլոգիաների հնարավորությունների ուսումնասիրությանը, ինչի շնորհիվ ընդլայնվում է սովորողների մտահորիզոնը: Սովորողները կարող են մասնակցել առցանց անցկացվող թեստերին, կարող են մամակագրական կապեր հաստատել այլ երկրներում ապրող իրենց հասակակիցների հետ, մասնակցել առցանց հաղորդակցությանը, տեսաժողովներին ու քննարկումներին:

Ուսուցման թվայնացումն անկասկած առնչվում է այն փաստին, որ համակարգիչը մտավոր զարգացման աղբյուր է՝ բոլոր առումներով: Համակարգիչի օգտագործումն ամենաօգտակար ձևերից է: Իտալերենի ուսուցման հիմնական նպատակը տվյալ դեպքում հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մյուս բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ընթացքում: Առաջնային նշանակությունը տրվում է նյութի ընկալմանը, բովանդակության հաղորդմանը և իմաստի արտահայտմանը, ինչն էլ նպաստում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը: Որպես տեղեկատվական համակարգ՝ համացանցն իր օգտատերերին առաջարկում է տեղեկության ու պաշարների հսկայական տեսականի.

1. էլեկտրոնային փոստ,
2. հեռուստակոնֆերանսներ, տեսակոնֆերանսներ,
3. անձնական տեղեկատվություն հրապարակելու, անձնական էջ ստեղծելու և համացանցում տեղադրելու հնարավորություն,
4. մուտք դեպի տեղեկատվական պաշարներ,
5. տեղեկատվական կատալոգ,
6. փնտրողական համակարգեր,
7. առցանց հաղորդակցություն:

Վերոհիշյալ բոլոր ռեսուրսները հնարավոր է օգտագործել օտար լեզվի դասի ընթացքում: Համացանցի վիրտուալ միջավայրը հնարավորություն է ընձեռում դուրս գալ ժամանակի և տարածության հասկացությունների սահմաններից և կենդանի շփում է ապահովում իր օգտատերերի համար /տես Երիցյան, 2013/:

Համացանցը հիանալի միջոց է համաշխարհային անցուղարձին հետևելու համար: Այն հնարավորություն է տալիս լսարանը վերածել նորությունների գործակալության, իսկ սովորողներին՝ առաջնակարգ լրագրողների: Գործունեության այսպիսի տեսակը շատ հարմար է բարձր կուրսերի համար, քանի որ ներառում է կարդալու մեծածավալ նյութեր, ընթերցանություն, խոսելու հմտություն: Սովորողներին կարելի է առաջարկել խմբային աշխատանք, օրինակ՝ հետազոտություն, որ կներառի առօրյա կյանքի բոլոր ոլորտները. խոհանոց, սպորտ, եղանակ, մշակույթ և այլն: Այս աշխատանքի առավելությունը խմբի լիակատար մասնակցությունն ու աշխատանքի ճիշտ բաշխումն է: Ուսանողներին կարելի է բաժանել խմբերի՝ ըստ իրենց լեզվի իմացության մակարդակի:

Համացանցով օտար լեզվի դասավանդմանը ներկայացվող նոր պահանջներից մեկն էլ համագործակցության ապահովումն է, կամ, ինչպես այժմ ընդունված է անվանել, ինտերակտիվությունը:

Համացանցը նպաստում է ուսուցանվող լեզվի յուրացմանը, խոսելու և արտահայտվելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, քերականական կանոնների ընկալմանը՝ լեզվի ուսուցումը դարձնելով ավելի արդյունավետ:

Համացանցը զարգացնում է սովորողների սոցիալական և հոգեբանական հատկանիշները, նրանց ինքնավստահությունը և թիմում աշխատելու հմտությունները, ստեղծում է ուսուցման բարենպաստ պայմաններ՝ դառնալով դրա ինտերակտիվ միջոց:

Այսպիսով՝ ուսուցման արդի մեթոդների օգտագործումն ու տեխնոլոգիաների համադրումը թույլ է տալիս ավելի արդյունավետ և նպատակային դարձնել ուսումնական գործընթացը, քանզի յուրաքանչյուր լեզվի ուսուցման նպատակը տվյալ լեզվով ճիշտ և սահուն հաղորդակցվելն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Balboni P., Santipolo M. L'italiano nel mondo. Metodi dell'insegnamento dell'italiano nel mondo. Un'indagine qualitative. Roma: Bonacci editore, 2003.
2. Cavallero D. Insegnare la lingua, insegnare la cultura // *Tuttitalia* № 38, Autumn, 2009 // URL: www.sentieri.com/wp-content/uploads/2015/10/Articolo_Tuttitalia..pdf
3. Gasperetti M. L'italiano e' la quarta lingua piu' studiata nel mondo // *Corriere della sera*, 2014 // URL: www.corriere.it/scuola/14giugno16/dante-pizza-italiano-quarta-lingua-piu-studiata-mondo-4edfb4fe-f57a-11e3-ac9a-521682d84f63.shtml
4. Larsen-Freeman D. Techniques and principles in language teaching. Oxford: Oxford University Press, 1986.
5. Littlewood W. Communicative approach to language teaching methodology. Dublin: Dublin University. Trinity College, Centre for Language and Communication Studies, 1983.
6. Գալոյան Ն. Հաղորդակցական մոտեցումը և սկզբունքները // *Կանթեղ*, № 1, 2005 // էլեկտրոնային աղբյուր. <http://kantegh.asj-oa.am/647/>
7. Երիցյան Ս. Նորարարական տեխնոլոգիաները՝ անգլերեն լեզվի դասավանդման գործիք, 2013 // էլեկտրոնային աղբյուր. <https://funnyenglishforyou.wordpress.com/>
8. Մովսիսյան Ն. Համակարգչի և համացանցի ներառումը ուսուցման մեջ, 2009 // էլեկտրոնային աղբյուր. <http://notebook.mskh.am/art.php?id=231>

А. ГЕВОРГЯН – О некоторых новых методах обучения итальянскому языку. – В статье рассмотрены современные методы обучения итальянскому языку. Особое внимание уделяется коммуникативному методу и новым технологиям. Все виды деятельности, которые используются в процессе обучения языка, нацелены на формирование и расширение навыков говорения и письма. Они также развивают коммуникативную компетенцию и повышают эффективность обучения языка.

Ключевые слова: обучение иностранному языку, новый метод обучения, коммуникативный метод, развитие коммуникативной компетенции, новые технологии

A. GEVORGYAN – On Some New Methods of Teaching Italian. – The paper is an overview of two new methods of teaching Italian. Special attention is paid to the communicative method and the use of new technologies in the teaching process. The type of activities used in language teaching process are focused on the development of vocabulary. They also develop communicative competence and make language teaching more effective.

Key words: foreign language teaching, new teaching methods, communicative method, development of communicative competence, new technologies

Կարո ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Նելլի ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հողվածում դիտարկվում է անգլերենի դասագրքերի ստեղծման գործընթացում հաղորդակցական սկզբունքների ձևավորման առաջնահերթության հիմնախնդիրը: Օտար լեզուների դասավանդումը նպատակաուղղված է սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիայի զարգացմանը:

Ակնհայտ է, որ հաղորդակցական հմտությունները զարգացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն հասկանալ լեզվական միավորների գործառնական նշանակությունները, այլև դրանք արտահայտել համապատասխան ենթատեքստերում:

Բանալի բառեր. *հաղորդակցական կոմպետենցիա, բովանդակային և կառուցվածքային սկզբունքներ, դասագրքերի ստեղծման գործընթաց, միջմշակութային հաղորդակցություն, գործնական հմտություններ և կարողություններ*

Արդի ժամանակաշրջանում օտար լեզվի ուսուցման հաղորդակցական կոմպետենցիան մնում է առանցքային հասկացություն համարյա բոլոր մեթոդական համակարգերում:

Սա փաստում է Բ. Ա. Գլուխովի ու Ա. Ն. Շչուկինի այն տեսակետը, ըստ որի հաղորդակցման ուսուցումն օտար լեզվի դասավանդման գործնական ուղղվածության գործընթաց է, որի ընթացքում ուսուցման նպատակը (լեզվի ուսուցումը որպես հաղորդակցման միջոց) և նպատակին հասնելու միջոցը (խոսքային գործունեությունը) գործում են համատեղ /Глухов, Щукин, 1993: 210/:

Այստեղից հետևում է, որ դասագրքաստեղծման ցանկացած սկզբունքի գնահատման միջոց և չափանիշ կարող է հանդիսանալ հաղորդակցական իրազեկության բովանդակային բնութագիրը: Հատկապես կարևոր է այն, որ հաղորդակցական իրազեկությունը խոսքային վարքագծի ընտրության և իրացման ծրագիրն է՝ կախված հաղորդակցման ընթացքում անձի կողմնորոշվելու կարողությունից /Հովհաննիսյան, Աբրահամյան, 2011: 56/:

Ակնհայտ է, որ հաղորդակցական ունակությունների առավելագույն զարգացումն այն հիմնական, հեռանկարային, բայց և ոչ դյուրին խնդիրն է, որ ծառանում է օտար լեզուների ուսուցիչների առջև: Այստեղ իրենց կարևոր դերն ու նշանակությունն ունեն դպրոցական դասագրքերում զետեղված դասանյութերը և այն, թե ինչ սկզբունքներով են դրանք ընտրված: Փաստորեն, անգլերենի դասագրքերի ստեղծման տեսանկյունից դիտարկվում են բովանդակային և կառուցվածքային սկզբունքները:

Ըստ բովանդակային սկզբունքի՝ անգլերենի դասագրքի ստեղծման գործընթացն առնչվում է տեքստերի ընտրության հետ: Ուստի անհրաժեշտ է պահպանել մի շարք բովանդակային սկզբունքներ.

- ամբողջականության,
- խնդիրների համապատասխանության,
- կառուցվածքային ուղղվածության:

Ըստ ամբողջականության սկզբունքի՝ դասագիրքը համապատասխանելու է հետազոտական ուսումնասիրություններին: Մա տարբեր տարիքային խմբերի համար համապատասխան մոտեցումների կիրառումն է, այսինքն ուսուցման յուրաքանչյուր, մակարդակում պետք է ընդլայնել այս կամ այն թեմայի լեքսիկական դաշտը /Ghsoon, 2003: 265/:

Խնդիրների համապատասխանության սկզբունքը սահմանում է ընտրված լեզվական նյութերի տվյալները, որոնք ընդգրկվելու են դասագրքում: Ըստ դասագրքի ընդհանուր համակարգի ստեղծման նպատակների և խնդիրների կարելի է ընդգրկել բառարանային հղումներ, քերականական ուղեցույցներ և այլն:

Ըստ կառուցվածքային ուղղվածության սկզբունքի ստեղծվում է դասագրքի լեզվական համակարգը՝ հիմնված գրքի բովանդակային բաղադրիչների վրա:

Այս սկզբունքի համաձայն Ա. Ս. Կարամնովը դասակարգել է տեքստերի համակարգը.

- անգլերեն դասագրքի հիմնական տեքստերի համակարգ, որն իր մեջ ներառում է հիմնական ուսումնական տեղեկատվական նյութերը,
- լրացուցիչ տեքստերի համակարգ, որն իր մեջ ընդգրկում է լեզվանյութեր գիտելիքների ամրապնդման և խորացման համար (օրինակ՝ տեքստեր տնային ընթերցանության համար),
- բացատրական տեքստերի համակարգ, որոնց հետևում են բառարանային նշումները, ուղեցույցները և այլ ուսումնական նյութեր տեղեկատվության ընկալման և յուրացման նպատակով /Карамнов, 2013: 59–69/:

Այստեղ կարևորվում է նաև ուսումնական առաջադրանքների ստեղծման (առաջադրանքներ և վարժություններ), յուրացման կազմակերպման (նշումներ, հուշաթերթիկներ, սխեմաներ, նկարներ և այլն), ինչպես նաև կողմնորոշման (նախաբան, լրացումներ և այլն) համակարգերը:

Այսպիսով, ըստ անգլերենի դասագրքի ստեղծման բովանդակային սկզբունքների իրականանում է դասագրքի լեզվական համակարգի ստեղծման նախագծային գործունեությունը:

Անգլերենի դասագրքերի ստեղծման գործընթացն հիմնվում է կառուցվածքային սկզբունքի վրա: Ըստ այս սկզբունքի Ա. Ս. Կարամնովը կարևորել է դասագրքի այն հիմնական բաղադրիչները, որոնք պայմանավորված են.

- ժանրային պայմանականությամբ, երբ դասագրքի բովանդակությունը ընտրված չէ պատահական և համապատասխանում է որոշակի չափանիշների,

- ընտրված տեքստերով,
- դասանյութերի վավերականությամբ, երբ ընտրված տեքստերը վավերական են անկախ այն փաստից հեղինակը լեզուն կրողն է, թե ոչ,
- դասագրքի տվյալների վերլուծությամբ, երբ դասագիրքը պահպանվում է որևէ էլեկտրոնային ֆորմատով և համակարգչային համապատասխան

ծրագրի միջոցով ենթարկվում է մշակման,

- հեղինակային իրավունքի համապատասխանությամբ, երբ դասագրքի հեղինակները պետք է պահպանեն մի շարք կանոններ.
- թույլտվություն ունենան ինտերնետային կայքերից և հրատարակչություններից նյութեր ձեռք բերելու,
- գրավոր թույլտվություն ունենան ուսումնական գործընթացի մասնակիցներից, ինչպես նաև այն անհատներից, որոնց պատկանող նյութերը կիրառվելու են լեզվական համակարգի ստեղծման գործընթացում /Karamnov, 2013: 59–69/:

Այսպիսով, դասագրքի ստեղծման մեջ կարևորվում է խնդիրների ամբողջականացման գործընթացը, այսինքն տեքստային տվյալների դասավորությունը, նրանց պահպանման ձևաչափերը և առկա ծրագրային նյութերի վերամշակումը: Հավասարաչափ կարևորվում են նաև ժանրային պայմանականության, գիտականության (գիտական տեղեկատվության ապահովումը դասագրքերում) սկզբունքները և հեղինակային իրավունքի համապատասխանությունը:

Ուշադրության է արժանի նաև մատչելիության սկզբունքը, այն է դասագրքերի բովանդակության համապատասխանումը սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացվածության մակարդակին: Տվյալ դեպքում մատչելիությունը չի նույնանում նյութերի պարզության կամ հեշտության հետ, քանի որ սովորողները գիտելիքներ են ձեռք բերում՝ ակտիվացնելով իրենց մտավոր կարողությունները: Այդ իսկ պատճառով դասագրքերում ընտրված նյութերը պետք է լինեն բարդ, սակայն սովորողների համար ընկալելի և հետաքրքիր, որոնք վստահություն ներշնչելով՝ կմղեն վերջիններին ստեղծագործական ակտիվության: [/www.bibliofond.ru/view.aspx?id=467074#1/](http://www.bibliofond.ru/view.aspx?id=467074#1/):

Ինչ վերաբերում է անգլերենի դասագրքի ստեղծման հաղորդակցական սկզբունքին, ապա օտար լեզու (անգլերեն) դասավանդելիս ուսուցման ողջ գործընթացն ուղղված է լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործելուն, այսինքն՝ գործնական հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Ուստի, ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից օտար լեզու սովորելիս կյանքի ժամանակակից պայմանները նախ և առաջ պահանջում են նրա գործնական կիրառումը: Փաստորեն, օտար լեզվի իմացությունը դառնում է հաղորդակցման միջոց այլ մշակույթներ կրողների հետ:

Ասվածի համատեքստում պահանջվում է ուշադրություն դարձնել լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության վրա: Օտար լեզու ուսուցանելու խնդիրը լեզվի կիրառական կողմի ուսուցման մեջ է: Այս հաղորդակցական խնդիրների լուծումն հնարավոր է միայն մեկ պայմանում. պետք է ստեղծվի բավականին հաստատուն, հիմնավոր տեսական հենակետ (բազա): Այն ստեղծելու համար հարկավոր է նախ և առաջ.

1) կիրառել բանասիրության տեսական աշխատությունների արդյունքներն օտար լեզվի ուսուցման պրակտիկայում,

2) տեսականորեն իմաստավորել և ընդհանրացնել օտար լեզվի դասավանդման գործնական փորձը:


Ըստ օտար լեզուների ուսուցման ավանդական մոտեցման՝ դասավանդման հիմնական մեթոդիկան ամփոփվում է դասագրքերում օտար լեզվով տեքստերի ընթերցանությամբ: Կենցաղային ոլորտի հետ կապված՝ անգլերենի դասագրքերն ընդգրկում են այնպիսի թեմաներ, որտեղ տեքստերը ներկայացնում են առօրյա կյանքը, սակայն քիչ են այնպիսի մասնագետները, որոնք կարողալով տվյալ տեքստերը, հասկանում են, որ պահանջվում է ոչ թե լայնածավալ գրականության, այլ օտար լեզվի գիտելիքների գործնական կիրառում: Այս դեպքում լեզվի տիրապետման չորս հմտություններից, որոնց մեջ տարբերակում ենք ընթերցանությունը, խոսելը, գրելը և ունկնդրելը, գործնական ծրագրում ամենապասիվ ձևը համարվել է ընթերցանությունը: Օտար լեզվի դասավանդման նման հայեցողական, պասիվ ձևը, որի հիմքում գրավոր տեքստերն են, հանգեցնում է սովորողների լեզվաբանական փորձ ձեռք բերելուն:

Այս համատեքստում կարևորվում է դասագիրք ստեղծողների դերը, որոնք ոչ միայն պիտի տիրապետեն անգլերեն լեզվին բավականին բարձր հաղորդակցական մակարդակում, այլև պիտի հաշվի առնեն բազմամշակութային և բազմալեզվյան տեսությունների շրջանակներում ձևավորված հայեցակարգերը, որոնց հիմքում միջմշակութային հաղորդակցության ուսուցման հիմնախնդիրն է: Դա չի նշանակում, որ հետին պլան է մղվում լեզվական իրազեկության զարգացման հիմնահարցը:

Ինչպես նշում է Մ. Ն. Վյատյուտնևը, «լեզվաբանական իրազեկությունը ոչ մեծ քանակությամբ կանոնների մասին ներըմբռնողաբար ձեռք բերած գիտելիքն է, որն ընկած է լեզվի խոսքային այն կառույցների հիմքում, որոնք հաղորդակցման ժամանակ կարող են դառնալ արտահայտություններ, այսինքն՝ մակերեսային կառույցներ» /Вятютнев, 1975: 58/:

Հաղորդակցական իրազեկությունը միջմշակութային իրազեկության հետ մեկտեղ կազմում է «միջմշակութային հաղորդակցական իրազեկություն» հասկացությունը: Մ. Բիրանը ներկայացրել է այս իրազեկության ուսուցման և գնահատման տեսական կադասյարը, որն իր ներդրումն է ունեցել օտար լեզվի ուսուցման գործընթացում: Նրա կողմից առաջարկվող տեսությունը կարելի է պատկերել հետևյալ կերպ.

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԻՐԱՋԵԿՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԸ



X-ը դիտարկվում է որպես միջմշակութային հաղորդակցական իրազեկություն:

1. Հաղորդակցական իրազեկությունը ապահովում է աշակերտների գրելու, ընթերցելու, ունկնդրելու և խոսելու կարողությունները:

2. Մշակութային իրազեկությունը ներառում է պատմություն, աշխարհագրություն, գրականություն, արվեստ, հավատալիքներ, տարիք, սեռ, դասակարգ և այլ ոլորտներ:

3. «Միջմշակութային իրազեկություն» հասկացությունն ապահովում է միջառարկայական գիտելիքների իմացություն, որը զարգացնում է աշակերտների հարմարվողականությունը, հանդուրժողականությունը և մշակութային գիտելիքները /www.cultureseminarvisemester.wordpress.com/:

Միջմշակութային հաղորդակցության ուսուցման տեսանկյունից սկզբունքային նշանակություն է ստանում գործաբանական իրազեկության զարգացման հիմնախնդրի արծարծումը դասագրքերի ստեղծման գործընթացում: Այն, ըստ Ե.Մ. Միլոսերդովայի, ենթադրում է հաղորդակցական վարքագծի համալիր տիրապետում՝ որպես ժողովրդի հաղորդակցական նորմերի և ավանդույթների ամբողջություն այս կամ այն լեզվամշակութային հանրության մեջ /Милосердова, 2004: 121-125/:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված դիտարկումները, հարկ է նշել, որ անգլերենի դասագրքերի ստեղծման տեսանկյունից առանցքային են հաղորդակցական սկզբունքները, քանի որ, ի տարբերություն այլ առարկաների՝ օտար լեզվի օբյեկտը ոչ միայն լեզվի մասին գիտությունն է, այլ լեզվի միջոցով ծավալվող խոսքային գործունեությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննիսյան Ա., Արրահամյան Ա. Անգլերեն լեզվի դասագիրքերի ստեղծման սկզբունքների ընտրության հիմնախնդիրն արդի փուլում: Գյումրի, Գպիր, 2011:
2. Вятютнев М. Н. Понятие языковой компетенции в лингвистике и методике преподавания иностранных языков // *Иностранные языки в школе*, 1975, № 6.
3. Глухов Б.А., Щукин А.Н. Термины методики преподавания русского языка как иностранного. М.: Русский язык, 1993.
4. Карамнов А. С. Модель создания корпуса учебника английского языка // *Научный диалог*, 2013, № 2 (14).
5. Милосердова Е. В. Национально-культурные стереотипы и проблемы межкультурной коммуникации // *Иностранные языки в школе*, 2004, № 3.
6. Ghsoon R., English Coursebooks: Prototype Texts and Basic Vocabulary Norms // *ELT Journal*. Vol. 57 (3), 2003.
7. Intercultural Communicative Competence from an Intercultural Perspective // URL: www.cultureseminarvisemester.wordpress.com.
8. Принципы обучения иностранным языкам // Электронный ресурс: www.bibliofond.ru/view.aspx?id=467074#1

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – *Коммуникативные принципы создания учебников английского языка.* – В статье рассматриваются принципы составления учебников английского языка на коммуникативной основе. Отмечается, что необходимым условием коммуникативного подхода является не только понимание функциональных значений языковых единиц, но и их выражение в соответствующих контекстах.

Ключевые слова: коммуникативная компетентность, контекстные и структурные принципы, процесс создания учебника, межкультурная коммуникация, практические умения и навыки

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – *Communicative Principles of Creating English Textbooks.* – The aim of the present paper is to consider the peculiarities of applying communicative principles in the process of creating English textbooks to favour the development of learners' linguistic and communicative competence. From the point of view of communicative approach to foreign language teaching it is important not only to understand the functional meanings of the linguistic units, but also to express them in the appropriate contexts.

Key words: communicative competence, contextual and structural principles, process of creating textbooks, intercultural communication, habits and skills, practical abilities

ԱՆՆԱ ՀԱԶԻ-ՀԱԿՈՒՅԱՆ
Կարինա ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԳԵՐԱՅԻՆ ԽԱՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԼՍԱՐԱՆՈՒՄ՝
ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Լեզվի դասավանդման հմտությունները, մոտեցումներն ու տեխնիկան անընդ-
հատ փոփոխության են ենթարկվում, քանի որ լեզուն արտահայտում է գրեթե բոլոր
փոփոխությունները, որոնք անընդհատ տեղի են ունենում մեր շուրջ: Փոխվում են
ուսանողները, նրանց պահանջներն ու հնարավորությունները, ուստի և դասավան-
դողները պետք է հետևողականորեն հետամուտ լինեն քայլերու այդ փոփոխու-
թյանը համընթաց: Հողվածն անդրադառնում է դերային խաղին որպես լսարանա-
յին ուսումնական գործընթացի մի կարևոր մասի, որը հսկայական ազդեցություն
ունի ուսանողի բանավոր խոսքի զարգացման վրա, ինչպես նաև մի շարք այլ
երևույթների (օրինակ՝ ինքնաարտահայտման, ազատ շփման հմտության զարգա-
ցման, նախաձեռնողականության և ստեղծագործականության զարգացում, որո-
շակի բարդությունների հաղթահարման), որոնք սերտորեն կապված են դերային
խաղի հետ և ապահովում են ուսանողի աճը տարբեր հարթություններում:

Բանալի բառեր. դերային խաղ, բանավոր խոսք, լսարանային գործու-
նեություն, իրավիճակային մտածելակերպ, օգտակար բառապաշար՝, դասախոսի
ուղղորդում, ստեղծագործականություն

Բազմաթիվ են այն մեթոդները, որոնք կիրառում ենք մենք՝ դասավանդող-
ներս, լեզվի դասավանդման գործընթացում: Տարբեր է նաև մեր վերաբերմուն-
քը դասավանդման այս կամ այն մոտեցմանը կամ տեխնիկային: Անշուշտ
դրանք բոլորն էլ ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Նույնիսկ
լավագույն կամ ամենակիրառելի մեթոդը կարող է հստակ աշխատել մի լսա-
րանում և բոլորովին անարդյունավետ լինել մեկ ուրիշում: Այս հանգամանքը
կարելի է բացատրել տարբեր տեսանկյուններից, քանի որ դասավանդման ըն-
թացքում մեթոդի կիրառման հաջողությունն ու արդյունավետությունը կախ-
ված են ոչ միայն կիրառված մեթոդից, այլև մի շարք այլ գործոններից, ինչպես
օրինակ՝ լսարանի ճիշտ ընտրությունը, ուսանողների իմացության մակար-
դակը, նրանց պատրաստվածությունն ու պատրաստակամությունը, դասա-
վանդողի դրդապատճառներն ու նպատակները, հարմար նյութը և այլն: Այս
գործոնները կարող են լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ, բնորոշ միայն որոշակի
մեթոդների, սակայն սրանց մենք կանդրադառնանք ավելի ուշ:

Լեզվի դասավանդման բազմաբնույթ տեխնիկաների շարքում դերային
խաղն առանձնանում է: Պետք է խոստովանել, որ այն համեմատաբար քիչ է
կիրառվում լսարանում, չնայած այն փաստին, որ դերային խաղը դիտվում է
որպես հաճելի և ժամանցային գործունեություն: Սա են վկայում նաև մեր
հարցումները, որ անցկացրել ենք տնտեսագիտության և կառավարման ֆա-
կուլտետի դասախոսների և ուսանողների շրջանում: Պարզվում է, ուսանող-

ները բավականաչափ դրական վերաբերմունք ունեն դերային խաղին, սակայն հիմնականում գնահատում են դա որպես ծանր դասն ընդմիջելու կամ քննական շրջանից հետո հանգստանալու միջոց, իսկ երբեմն էլ որպես պարզևստորում: Երևի թե սա էական չէ, եթե հաշվի առնենք այն անվիճելի փաստը, որ դերային խաղի դրական կողմերը բազմաթիվ են և բազմաբնույթ:

Գրական կողմերի (առավելությունների) մասին խոսելիս, տեղին է նշել, որ դերային խաղը կենտրոնանում է հենց բանավոր խոսքի վրա, այսինքն լեզուն կիրառվում է արտահայտվելու, հաղորդակցվելու մտայնությամբ, որը օտար լեզու ուսումնասիրողների համար առաջնային նպատակ է: Պարբերական պրակտիկան, լեզվի հաճախակի կիրառումը տարբեր իրավիճակներում, լինեն դրանք իրական կամ մտացածին, անմիջականորեն կապվում է լեզվի ճկունություն ու հղկվածություն զարգացնելու հետ:

Էական է ընդունելը, որ դերային խաղը հսկայան ներուժ ունեցող տեխնիկա է: Մեր հարցումները ցույց տվեցին, որ այն նաև գնահատվում է որպես լավ միջոց ուսանողների միջև հարաբերություններ հաստատելու համար, քանի որ առկա է փոխադարձ հաղորդակցում, համատեղ գործելու միտում, մեկ ընդհանուր նպատակ և համատեղ ջանքեր դրան հասնելու համար: Իհարկե, համագործակցումն անխուսափելի է, ինչն էլ նպաստում է հարաբերությունների ստեղծմանն ու ամրապնդմանը: Ընդունելի է նաև այս տեսակետը, սակայն դերային խաղն ավելի հարուստ է, համապարփակ և հեռահար:

Ահա այն մի քանի նպատակներն ու խնդիրները, որոնք մենք առանձնացնում և կարևորում ենք դերային խաղում, արդարացնելով դրա հաճախակի և պարբերաբար կիրառումը.

- ուսանողի բանավոր խոսքի զարգացում,
- ինքնարտահայտվելու կարողության զարգացում,
- անկաշկանդ և ազատ շփման հմտության ձեռքբերում,
- ուսանողի նախաձեռնողականության զարգացում,
- ստեղծագործական ջիղի զարգացում,
- համախմբված աշխատելու հմտությունների զարգացում,
- ուշադրության, ընկալունակության ամրապնդում,
- անհատական և խմբային պատասխանատվության բարձրացում,
- տեսածի, լսածի, կարդացածի վերարտադրության հմտությունների հղկում,
- իրավիճակային մտածելակերպի զարգացում,
- գրուցակցին դատելու և գնահատելու ունակության զարգացում,
- որոշակի բարդությունների հաղթահարում,
- հակառակ կողմի դիրքորոշման և շահերի ընկալման զարգացում:

Համաձայն բառարանային սահմանման՝ դերային խաղը խոսելն ու գործելն է մի այնպիսի եղանակով, իբրև դուք հենց այն կերպարն եք, որին մարմնավորում եք: Դա նշանակում է, որ և՛ խոսքը, և՛ գործողությունը տեղի են ունենում այն միջավայրի համատեքստում, որում գոյություն ունի ձեր կերպարը: Համատեքստը նաև հստակ հատկորոշում է գործողության ժամանակն ու վայրը: Օբսֆորդի անգլերեն լեզվի բառարանում տրված է դերային խաղի

հետևյալ սահմանումը. «...որևէ մեկի գործելակերպի (վարվելակերպի) փոփոխումը որևէ հատուկ սոցիալական դեր կատարելու նպատակով»:

Այնուամենայնիվ, հոգեբանության դաշտում, այս եզրույթն առավել լայն գործածում ունի, հիմնականում, հետևյալ իմաստներով`

- թատերական կամ ուսումնական միջավայրում դերային խաղեր,
- դերային վիդեո խաղեր կամ առցանց դերային խաղեր (օրինակ՝ ՄԱԿ-ի մոդելային խաղ՝ դիվանագետների, քաղաքագետների համար),
- հատուկ նպատակներ հետապնդող դերային խաղեր, օրինակ՝ ռազմական խաղեր,
- գոյություն ունեցող կերպարի դերակատարում, երբ խաղի մեջ ներգրավված զուգընկերը նույնպես ստանձնում է այլ կերպարի դերակատարման պարտականությունը:

Հավանաբար, օտար լեզվի ուսուցման ընթացքում անցկացվող դերային խաղերը, որոնք հիմնականում իրականացվում են դասաժամի ընթացքում, կարելի է վերագրել այս բոլոր տիպերին միաժամանակ: Դրանք ուսումնական միջավայրում են ընթանում, իսկ հնարավորության դեպքում, նախօրոք, դիտարկվում և վերլուծվում են առցանց դերային խաղեր: Իհարկե, դրանք հետապնդում են հատուկ նպատակ, որոնցից առաջնայինը բանավոր խոսքի զարգացումն է: Այստեղ չպետք է մոռանալ վերոհիշյալ բոլոր այլ առավելություններն ու նպատակները: Եվ, վերջին կետը նույնպես, լիովին արտացոլում է լսարանում մեր կողմից իրականացվող դերային խաղի գործընթացի մի հատված: Այն միտված է կոլեկտիվ ջանքերի արդյունքում հաջողության հասնելուն (գործարար աշխարհում մեծապես գնահատվող «ֆիմային մոտեցումը»):

Ինչպես արդեն նշվել էր, դերային խաղի արդյունքը մեծ մասամբ պայմանավորված է լսարանի լեզվի իմացության մակարդակով, ուսանողների պատրաստվածությամբ և պատրաստակամությամբ: Դասախոսի խնդիրների շարքում պետք է լինի նաև նրանց պատրաստելը՝ նյութի, թեմայի մասին հստակ գիտելիք փոխանցելը, ինչպես նաև մոտիվացնելը ուսանողներին՝ լավագույնս ընդգրկելով նրանց դերային խաղի կիրառման գործընթացում:

Այնուամենայնիվ, կան մի քանի ընդհանուր սկզբունքներ, որոնք առաջնորդում են դասախոսին դերային խաղը լսարանում կազմակերպելու հարցում:

Այսպես, պետք է նշել, որ դերային խաղը կազմակերպվում է մատուցված նյութի հիման վրա և հանդես է գալիս որպես տվյալ նյութի ամփոփման մի մաս: Հետևաբար այն ուսանողները, որոնք առավել ջանասեր են եղել նյութն ամրապնդելիս և սովորելիս, ավելի պատրաստակամ են լինում դերային խաղի մեջ ներգրավվելու հարցում, քանի որ նրանց ծանոթ է այն ակտիվ բառապաշարը, որն իրենք պիտի գործածեն դերային խաղի ժամանակ:

Նախ և առաջ, դասախոսը պետք է ընտրի համապատասխան իրավիճակ դերային խաղի համար: Կարելի է ընտրել որևէ իրավիճակ դասագրքում տվյալ նյութին վերաբերող իրավիճակների ցանկից, կարելի է նաև առաջարկել ուսանողներին, որպեսզի իրենք ընտրեն իրենց հետաքրքրող իրավիճակները:

Դերային խաղի նախապատրաստման հաջորդ փուլում դասախոսը բաշխում է դերերը և հորդորում ուսանողներին պատկերացնել, թե ինչպես լավագույնս դրսևորվել տվյալ դերում: Այս նպատակին հասնելու համար դասախոսը պետք է մանրամասն ներկայացնի դերային խաղի համատեքստը մասնակիցների յուրաքանչյուր խմբին: Այստեղ էական է նաև կարողանալ կանխատեսել, թե ինչպիսի հնարավոր տարբերակներով կարող են զարգանալ իրավիճակները և, համապատասխանաբար, տրամադրել ուսանողներին այն արտահայտությունները, որոնք բացի հիմնական բառապաշարից, նույնպես անհրաժեշտ կլինեն: Խոսքն այսպես կոչված *օգտակար բառապաշարի* մասին է, որն ընգրկում է արտահայտություններ կամ նույնիսկ ամբողջական նախադասություններ, որոնք ներկայացնում են խոսքի այս կամ այն իմաստային դաշտը, օրինակ՝ *stating objectives, making suggestions, expressing enthusiasm, encouraging contributions, agreeing, establishing common interests, signaling, checking understanding, summarizing, apologizing, showing sympathy, ending a conversation, raising a problem, adding a condition, emphasizing, commenting, involving the audience, resolving the conflict, reviewing the situation, showing interest, asking for details, clarifying, making points in threes, asking rhetorical questions, ordering, using emotive language, exemplifying, asking for feedback, confirming action*, և խոսքի կառուցման բազմաթիվ այլ ընդհանուր թեմաներ, որոնք ենթադրում են քիչ թե շատ ամրագրված, կայուն գործածական արտահայտություններ կամ նախադասություններ:

Ենթադրվում է (և շատ ցանկալի է), որ դրանք պետք է հիշվեն ուսանողների կողմից և, պարբերաբար կիրառվելով դերային խաղում, նրանց ակտիվ բառապաշարի մասը կազմեն: Հետաքրքիր է, որ դրանց մի մասը ուսանողներն ազատ կիրառում են տարբեր թեմատիկ դերային խաղերում, ավելի առօրյա քննարկումներում, լսարանային բանավեճերում, իսկ որոշները միայն կիրառելի են հստակ գործարար անգլերենում (օրինակ, եթե խոսքը բանակցությունների, կամ միաձուլման/կլանման, ճգնաժամի կառավարման և այլնի մասին է):

Ի դեպ՝ դասախոսի հետաքրքրվածությունը դերային խաղով նույնքան կարևոր է, որքան ուսանողներինը, քանի որ իրականում դասախոսը կատարում է ոչ միայն ուղղորդողի և հորդորողի դեր, այլ նաև հանդես է գալիս որպես գործողության ակտիվ մասնակից: Տվյալ փուլում ուսանողներին տրամադրվում են կոնկրետ ցուցումներ: Որոշ դեպքերում դասագրքերում լինում են կից հավելվածներ, որտեղ քարտերի տեսքով ներկայացված են դերային խաղի առանձին մասնակիցների առաջադրանքները: Առաջադրանքը հիմնված է լինում այնպիսի մանրամասների վրա, որոնք էական են տվյալ դերակատարի կողմից որոշում կայացնելու համար: Եթե դա տեխնիկապես հնարավոր է, ապա այս տեղեկատվությունը կարող է ներկայացվել նաև սահիկաշարի միջոցով: Որպեսզի ավելի պատկերավոր լինի, բերենք մի քանի օրինակ:

Role play 1. Two telephone situations. Student A is a company employee who has arranged to meet Student B, a colleague from one of your subsidiaries. Explain that you cannot keep the appointment, and give a reason. Suggest an alternative day.

Student B is on a business trip to Sydney, Australia and wants to stay an extra day. Telephone the Qantas airline office. Talk to the representative, Student A, to arrange a different flight. (Երկու ուսանողի համար նախատեսված դերային խաղ):

Այժմ դիտարկենք, թե ինչ նպատակ է հետապնդում դասախոսը տվյալ դերային խաղն իրականացնելիս, ինչպիսի արտահայտությունների վրա պետք է կենտրոնանա ուսանողը: Դասախոսի նպատակն է հղկել այնպիսի արտահայտություններ, որոնք կապված են հեռախոսագանգին պատասխանելու, կապ հաստատելու, ներկայանալու, նպատակն արտահայտելու, պայմանավորվածություն ձեռք բերելու կամ այն փոխելու, զրուցակցին պատասխանելու և զրույցն ավարտելու հետ: Օգտակար կլինի հետևյալը՝

Hello, Erik Halse speaking.

Good morning, Madison Ltd.

I'd like to speak to Anna Schilling, please. Could I have the sales department, please?

This is/ my name is...

I am calling about...

The reason I'm calling is...

Could we meet on Monday at 10:30?

How / What about April 10th?

Is 11:15 convenient / OK?

I'm afraid I can't come on Friday.

We've got an appointment for 11:00, but I'm afraid something's come up.

Could we fix another time?

I can't make it on...

That's fine / Ok for me

Good. So I'll see you on the 8th.

Thank you. Goodbye.

Right. / Ok then.

Role play 2. You are managers of a television production company Zoom International (ZI). You are discussing these two proposals for changes to company policy. (Խմբային դերային խաղ):

1. ZI could reduce costs by offering staff a 10% increase in salary instead of a company car. If ZI makes the change, staff will have to provide their own car for business use, using their own money.

2. ZI could increase security at their head office. At present, a security guard checks staff who enter the building. In future, staff will have to go through a barrier where they insert an identity card. If they do not have an identity card, they cannot enter the building. In addition, they must, at all times, wear an identity card with their photograph on it. There will be two female receptionists behind the barrier.

(Extra material is also attached telling the students what steps to take, what changes to propose to the Board of Directors, why they can like or oppose the ideas put forward by others, etc).

Այս դերային խաղը ենթադրում է զրույց *փոփոխության* մասին (օրինակ՝ ընկերության ռազմավարության փոփոխություն, էթիկայի հետ առնչվող որոշ մարտավարական փոփոխություններ), այսինքն հարկավոր կլինեն խոսքի կառուցման նոր դաշտեր, ինչպիսիք են օրինակ ընդհատումը կամ դրա հետ կապված որևէ գործողություն՝ զիջելը կամ ըմբոստանալը, պարզաբանումները տալը կամ պահանջելը, առաջարկներ անելն ու մերժելը, և այլն: Օրինակ՝

Could I just say something?
 Excuse me, but I have to say...
 How do you mean, ...?
 What exactly are you saying?
 What exactly do you mean?
 Are you saying we need to...?
 Sorry, I don't follow you.
 Can you explain in more detail?
 What I mean is...
 What I am saying is...
 No, I was thinking of...
 To be more specific...
 To clarify...
 Hold on. Can I finish the point?
 Let him finish, please.
 I'd like to finish if I may.
 Just a moment...
 I suggest...
 I propose that...
 How about...
 We could...
 Sorry, I don't think that's a good idea.
 I'm not sure I agree with you there.
 It / that just won't work.
 Well, I'm not happy about it / that.

Role Play 3. Johnson, a large department store in Chicago, USA, is losing money. Its main product areas are food, clothing and household furniture. 70% of its revenue comes from clothing, 22% from food and 8% from furniture. Three directors of the company meet to discuss the company's problems and how to solve them. (Role cards are provided for the necessary information). (Երեք հոգուց բաղկացած խմբերի համար նախատեսված դերային խաղ):

Տվյալ դերային խաղն իրականացնելու համար ուսանողին անհրաժեշտ կլինի սովորել և կիրառել արտահայտություններ, որոնց միջոցով նա կհարցնի ուրիշի կարծիքը, կարտահայտի իր տեսակետը, համաձայնություն կամ տարակարծություն, առաջարկություն կանի և այլն: Ահա անհրաժեշտ նյութը՝

How do you feel about...?
What do you think?
What's your opinion?
What's your view?
I think.../ I don't think...
In my opinion...
That's true.
I agree.
Absolutely / Exactly.
I think so too.
I see / know what you mean, but...
I am afraid I can't agree.
Maybe, but...
I think we should...
How about...?
Why don't we...?
Maybe/ Perhaps we could...

Այնուհետև ուսանողներին տրվում է տասից մինչև տասնհինգ բույն ժամանակ առաջադրանքը կատարելու համար: Ինչպես տեսանք, կախված առաջադրանքի բնույթից՝ ուսանողներն այն կատարում են զույգերով կամ փոքր խմբերով: Դասախոսի միջամտությունն այս փուլում նույնպես ակտիվ է, քանի որ նա շրջում է լսարանով, լսում է ուսանողներին և երբեմն միջամտում՝ դերային խաղի ընթացքը ուղղորդելով դեպի նշված նպատակը: Հաճախ իրադարձությունները զարգանում են նախատեսված սցենարից դուրս, ինչը որոշ դեպքերում կարելի է նույնիսկ դրական երևույթ համարել: Օրինակ՝ իրավիճակը քննարկելիս և «մտնելով» իրենց դերերի մեջ՝ ուսանողները մատուցված նյութի շրջանակներում կարող են տեսակետների բախում ունենալ՝ պաշտպանելով իրենց շահերը: Քննարկման ընթացքում դասախոսը կարող է միջամտել՝ առաջարկելով նոր, «սուր» գաղափարներ՝ առաջացնելով որոշակի ընդդիմություն կամ բանավեճ ուսանողների միջև: Այս հնարքը երկար ժամանակ է, ինչ կիրառվում է ոչ միայն դերային խաղերում, այլ նաև թոք-շոուներում, երբ հաղորդավարը ինքն է ստեղծում կոնֆլիկտային իրավիճակներ՝ ստիպելով մասնակիցներին ավելի ակտիվ մասնակցություն ունենալ նախագծում: Բացի այդ, տվյալ իրավիճակում ուսանողը հակված է օգտագործել ավելի լայն բառապաշար՝ փորձելով հնարավոր լուծում գտնել անսպասելի խնդրի համար: Խաղի վերջում դասախոսը կարող է հրավիրել ուսանողների որևէ զույգ կամ խումբ՝ դերային խաղն ամբողջ լսարանի առջև կատարելու նպատակով: Տվյալ փուլում թերևս, ամենադժվար խնդիրն ուսանողներին դերային խաղի մեջ ամբողջությամբ ներգրավելն է: Դասախոսը կարող է հաղթահարել այս խնդիրը՝ առաջարկելով գնահատել աշխատանքի արդյունքը կամ հաշվի առնել այն վերջնական գնահատականը նշանակելիս:

Պետք է նշել, որ եթե դասախոսն ընտրում է այն տարբերակը, երբ ուսանողները կատարում են դերային խաղը լսարանի առջև, ապա չափազանց կարևոր է համոզել, հավաստիացնել ուսանողներին, որ նրանց նպատակն է ոչ միայն բեմականացնել իրավիճակը, այլ նաև որքան հնարավոր է շատ դերի մեջ մտնել, քանի որ դա խաղի հաջողված և արդյունավետ լինելու թերևս ամենակարևոր նախապայմանն է: Ուսանողը պետք է ընկալի, որ նման իրավիճակ նա կարող է վերապրել իրական կյանքում, իր իսկ աշխատանքային գործունեության ժամանակ:

Կաշկանդվածությունն ու լարվածությունը նվազեցնելու համար դասախոսը կարող է մի քանի հնարք կիրառել: Թղթից պատրաստված գլխարկները, որոնց վրա գրվում են կերպարների անունները կամ մասնագիտությունները և որոնք հագցվում են ուսանողների գլխին, էապես նպաստում են լարվածության թուլացմանը, ինչպես նաև ավելի զվարճալի և հիշվող են դարձնում ամբողջ գործընթացը: Այն պահից, երբ գլխարկները դրվում են դերակատարների գլխին, նրանք անմիջապես «դառնում են» այդ կերպարը: Որոշ դեպքերում, իրավիճակն ավելի հավաստի դարձնելու համար, միգուցե պետք լինի լսարանի սեղանների տեղաշարժում, սակայն ուսանողները պետք է հիշեն, որ նման մանրամասներն այդքան էլ էական չեն, այլ շատ ավելի կարևորվում են գործընթացն ու վերջնարդյունքը: Առավել հաջողված դերային խաղերն անպայման արժանանում են ծափահարությունների և համակուրսեցիների գովասանքին:

Այսպիսով, դիտարկելով դերային խաղը լսարանում, դրա տեսակներն ու տարբեր մոտեցումները, կարևորությունն ու առավելությունները, կարելի է եզրակացնել, որ դերային խաղը նպաստում է բանավոր խոսքի զարգացմանն ընդհանրապես, և անգլերենը հատուկ հատուկ նպատակների համար՝ մասնավորապես: Մեր դիտարկումներն իրականացվել են տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում, ուստի բառապաշարն ու հմտությունները նույնպես արտացոլում են գործարար անգլերենը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Օգտակար բառապաշար ասելով նկատի ունենք ոչ թե ակտիվ կամ պասիվ բառապաշարը՝ կայուն արտահայտություններ, դարձվածներ, առանձին բառեր, որոնք անհրաժեշտ են տվյալ թեման լուսաբանելու համար: Սա անգլերենում դիտվում են որպես *իրավիճակային, թեմատիկ, թիրախային բառապաշար*, որն ընդհանուր բնութագրմամբ կոչվում է useful vocabulary, այն կարող է վերածվել և՛ ակտիվ, և՛ պասիվ բառապաշարի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Byram M., Fleming M. Language learning in intercultural perspective: Approaches through drama and ethnography. Cambridge: Cambridge University Press, 1998.

2. Horner D., McGinley K. Running simulation/games: A step-by-step guide. D. Crookall, R. Oxford (eds.), *Simulation, gaming and language learning*. New York: Newbury House Publishers, 1990.
3. Milroy E. Role-play: a practical guide. Aberdeen: Aberdeen University Press, 1982.
4. Sysoyev P.V. Language and culture: Looking for a new dimension in teaching foreign language culture // *Foreign Languages at School Journal*, 4, 17-24, 2001.
5. Cotton D., Falvey D., Kent S. Market Leader: Upper Intermediate Business English Course Book: Pearson FT. Longman, 2006.
6. Bonwell C.C., Sutherland T.E. The active learning continuum: Choosing activities to engage students in the classroom // Sutherland T.R., Bonwell C.C. (eds.) *Using active learning in college classes: A range of options for faculty*. *New Directions for Teaching and Learning*, 67, San Francisco, CA: Jossey-Bass, 1996.
7. Cotton D., Falvey D., Kent S. Market Leader: Intermediate Business English Course Book: Pearson FT. Longman, 2009.

A. АДЖИ-АКОПЯН, К. МАТЕВОСЯН – Применение ролевых игр в аудитории для развития устной речи. – В данной статье представлены основные аспекты практического использования ролевых игр в процессе преподавания активной экономической лексики английского языка, а также раскрываются некоторые особенности, цели и задачи ролевых игр в аудитории. Подчеркнута важность применения ролевых игр, поскольку они являются одним из наиболее эффективных методов отработки различных моделей поведения и использования специального словарного запаса в конкретных ситуациях.

Ключевые слова: ролевые игры, устная речь, творческий подход, инструкции преподавателя, ситуационное мышление, групповая работа, деловой английский, активная лексика

A. НАЖИ-НАКОВЯН, К. МАТЕВОСЯН – Practising Role Play in Classroom for the Development of Oral Speech. – The present paper touches upon the main aspects of practising role plays in Business English classroom. Role play has proved to be an efficient means of improving oral speech in general and development of communicative skills, team work, creativity, etc. in particular. The technique discussed can easily and successfully be applied in different teaching environments though we have mainly focused on Business English.

Key words: role play, oral speech, student creativity, instructor's interference, situational thinking, group work, Business English, useful vocabulary

**Լիանա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տաքիկ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**
Երևանի պետական համալսարան

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել զանազան միջմշակութային հաղորդակցության մեթոդների կիրառման արդյունավետությունը օտար լեզվի դասավանդման ընթացքում: Ուսումնասիրվել և մշակվել են ուսուցման այնպիսի ձևեր ու մեթոդներ, որոնք մեծապես կօգնեն ուսանողներին ոչ միայն հաղորդակցվել անգլալեզու ուսանողների հետ, այլև հասկանալ օտար մշակույթն ու լեզվական առանձնահատկությունները: Աշխատանքում քննարկվում են նաև զանազան մշակութային տարբերություններն ու դրանց մեկնաբանությունները, որոնք մեծապես նպաստում են նաև դասախոսների և ուսանողների միջև փոխհարաբերությունների հաստատմանը:

Բանալի բառեր. մշակույթ, էլեկտրոնային հաղորդակցություն, դասավանդման մեթոդիկա, միջանձնային հարաբերություններ, շարժմունքների լեզու

Լեզուն մարդկային կյանքի կենսագործունեության ու ճանաչողության հիմքում է: Մարդկային լեզուն կարելի է սահմանել որպես արտահայտության այն ընկալելի միջոցների ամբողջությունը, որոնք բնորոշ են հատկապես մարդուն /Չահուկյան, 1992/: Մարդիկ միմյանց ճանաչում են լեզվի կիրառման միջոցով: Լեզուն դիտարկվում է, որպես սոցիալական ինքնության խորհրդանիշ, որը մշակութային իրականության արտացոլումն է: Յուրաքանչյուր լեզու մարդկային մշակույթի զարգացման արդյունք է, որի միջոցով մարդկանց մտքերը ձևավորվում և փոխանցվում են միմյանց: Լեզվի ամենագլխավոր գործառույթը հաղորդակցության գործառույթն է, որը շփման, մտքերի փոխանցման և փոխանակման միջոց է: Լեզու սովորելը ինքնին ենթադրում է սովորել մշակույթ, քանի որ տիրապետել լեզվական տարրերին դեռ չի ենթադրում հաղորդակցվել տվյալ լեզվով:

Միջմշակութային հաղորդակցության ընթացքում շատ կարևոր է ուսանողներին իրազեկել միջմշակութային արժեքների մասին: Միջմշակութային հաղորդակցությունը մշակութային և լեզվաբանական ծագում ունեցող անհատների և տարբեր խմբերի միջև հիմնված հաղորդակցություն է: Այն առաջացել է հետևյալ սահմանումներից՝

1. Հաղորդակցությունը մարդկանց միջև լեզվի միջոցով իրականացող ակտիվ փոխհարաբերություններն են: Միջմշակութային բառը ենթադրում է, տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջև հաղորդակցական հարաբերություն, որտեղ մշակույթը մարդկանց վարքագծի դրսևորումն է թե՛ հասարակական կյանքում և, թե՛ ազգային ուղղվածություն համատեքստերում՝ քաղաքական, լեզվաբանական, տնտեսագիտական և այլն:

2. Միջմշակութային հաղորդակցությունը սահմանվում է և՛ որպես գաղափար, և՛ որպես կարողություն: Միջմշակութային կարողությունը անհատների լեզվի ակտիվ տիրապետումն է, որն իրականացվում է երեք հիմնական հատկանիշների միջոցով՝ գիտելիք, հմտություններ, հատկություններ:

Դասավանդողների գեր նպատակն է յուրաքանչյուր ուսանողի մեջ սերմանել սեր, ձգտում և ցանկություն ուսումնասիրելու օտար լեզու: Վերջինիս իրագործման համար անհրաժեշտ է, նախ և առաջ, որ դասավանդողներն ուսումնասիրեն թիրախ լեզուն և մշակույթը, ապա՝ նրանց փոխհարաբերությունները և հետո միայն փորձեն փոխանցել անհրաժեշտ տեղեկատվությունն ու գիտելիքը ուսանողներին: Ներկայումս հաղորդակցման ամենարդյունավետ միջոցը համացանցն է: Այն գրավել է ողջ աշխարհը՝ բացելով մեր առջև գրեթե բոլոր անանցանելի ճանապարհները: Այն համարվում է անսպառ տեղեկատվական աղբյուր, որտեղ յուրաքանչյուր անձ կարող է գտնել իրեն հուզող բազմաթիվ հարցերի պատասխաններ: Համացանցը մեզ հնարավորություն է տալիս ծանոթանալու տարբեր երկրների և նրանց մշակույթների հետ: Եվ թվում է, թե մարդկանց շփումը համացանցի միջոցով ավելի դյուրին է դարձել, որի արդյունքում միջմշակութային հաղորդակցությունը նորանոր վերելքների է հասնում: Ներկայումս մենք հնարավորություն ունենք հաղորդակցվելու էլեկտրոնային տարբեր մամակների և կայքերի միջոցով ինչպես տեղի, այնպես էլ օտարերկրյա մշակույթների ներկայացուցիչների հետ, որն առավել արդյունավետ միջոցներից մեկն է:

Ինչ վերաբերում է մշակույթի էությանն ու զարգացմանը, ապա կարելի է ասել, որ այն բազմանշանակ է: Ոմանց համար այն որակյալ գրականություն է, երաժշտություն, արվեստ կամ սնունդ: Այս եզրույթնը առաջին անգամ օգտագործել է անգլիացի գիտնական Ե.Բ. Թեյլորը իր “Primitive Culture” գրքում, որտեղ նա նշում է, որ մշակույթն այն ամբողջությունն է, որն իր մեջ ներառում է գիտելիք, հավատք, արվեստ, օրենք, սովորույթ և մնացած այն բոլոր ունակությունները և սովորությունները, որ մարդկային էակը՝ որպես հասարակության անդամ կարող է ընկալել /Թեյլոր, 1994/:

Մշակույթը մշտապես կարող է փոփոխվել և իր մեջ ներառել նորանոր սովորույթներ և ավանդույթներ: Լեզվում նույնպես նկատելի են նորաբանությունների ծագումն ու կիրառությունը: Տարբեր մշակույթների մարդկանց համար միևնույն բառերը կարող են տարբեր նշանակություններ ունենալ, անգամ, եթե նրանք խոսում են միևնույն լեզվով:

Սովորել օտար լեզու նշանակում է ինչ-որ չափով սովորել օտար մշակույթ, ծանոթանալ տվյալ մշակույթի գրականությանը, արվեստին, սովորույթներին, ծեսերին ու ավանդույթներին:

Միջմշակութային հաղորդակցության ընթացքում կարևոր է իրազեկությունը, այսինքն այն կարողությունը, որը հնարավորություն է ընձեռում անհատին ճշգրիտ և պատշաճ կերպով հաղորդակցվել յուրաքանչյուր միջմշակութային իրավիճակում, որի հիմքում ընկած է միջմշակութային գիտելիքը, հմտությունն ու վերաբերմունքը: Միջմշակութային վերաբերմունքի կարևորա-

գույն տարրերից են անկեղծությունն ու մշակույթի գնահատումը, անկաշկանդ շփվելու կարողությունն օտարերկրացիների հետ: Այս անկեղծությունը և մշակույթի տարբերության գնահատումը կարող է նպաստել մշակութային կրթությանը կամ լեզվի ուսուցմանը: Միջմշակութային կարողության հիմնական գործոնը անհայտ իրավիճակներում անվստահության առաջացումն է, որտեղ մասնակիցները պետք է փորձեն հնարավորինս հաղթահարել խոչընդոտները: Ջարգացող միջմշակութային կարողությունը դանդաղ, աստիճանաբար ձևափոխվող ուսումնական գործընթաց է, որը ենթադրում է օտար լեզվի ուսումնասիրություն, միջմշակութային ուսուցում և այլ մշակույթների մարդկանց հետ փորձի փոխանակում, նույնիսկ, եթե ոչինչ չի կարող լիովին փոխարինել առերես դասավանդմանը և ուսուցմանը, սպա այս դեպքում պետք է կիրառվեն տեղեկատվական տեխնոլոգիական զանազան միջոցներ /Թեյլոր, 1994/:

Միջմշակութային հաղորդակցման գաղափարի հիմքը գիտելիքն է, ընդ որում

1. Կարևոր է, որ մարդիկ հասկանան միջմշակութային հաղորդակցության խնդիրները և գիտակցաբար ներդնեն իրենց ջանքերը՝ հաղթահարելու իրենց առջև ծառայած խոչընդոտները:

2. Կարևոր է գիտակցել ինչ-որ մեկի ջանքերի անհաջող լինելու փաստը և փորձել կարգավորել նրա վարքագիծը:

Փոխադարձ շփման ընթացքում մարդիկ հաճախ հաղորդակցվում են արտալեզվական միջոցներով՝ անտեսելով լեզվական կողմը: Սա վերաբերում է մասնավորապես փոխգործող լեզվի գործառույթներին, որտեղ հասարակական շփումը առաջնային դերում է և որում էական է ո՛չ թե այն, թե ինչ է փոխանցվում այլ այն՝ թե ինչպես է փոխանցվում, այսինքն ինչ է հնարավոր արտահայտել մարմնի լեզվի, շարժումների, տեսողական շփման, ֆիզիկական տարածության առկայության և ոչ լեզվական ուղերձների միջոցով: Յուրաքանչյուր մշակույթ լեզուն յուրովի է կիրառում, հետևաբար մշակութային հաղորդակցության գործընթացում ոչ պակաս կարևոր են նաև զանազան շարժումները (գլխի և ձեռքերի շարժումները, աչքերի թարթումը և այլն): Սակայն այս շարժումները տարբեր հասարակություններում տարբեր կերպ են ընկալվում և մեկնաբանվում: Դիտարկենք հետևյալ մշակութային տարբերությունները, այսպես օրինակ՝ հայկական մշակույթում համաձայնեցումը ընկալվում էետ ու առաջ տանելով, իսկ անհամաձայնեցումը՝ գլուխը աջ ու ձախ շարժելով: Մինչդեռ Բուլղարիայում ճիշտ հակառակն է: Ճապոնացիներն էլ իրենց համաձայնեցումը արտահայտում են ձեռքերը պարզելով կրծքավանդակին և թափահարելով:

Միջմշակութային հաղորդակցության մեջ մեծ դեր են խաղում նաև դիմաշարժումները և աչքերի արտահայտությունը: Աչքերը կարող են արտահայտել հետաքրքրություն, ձանձրույթ, հյուրասիրություն, հիացմունք, հրապուրանք, հիասթափություն, հասկացողություն, անհասկացողություն և այլն: Բարձրագույն գիտելիքներ ունեցող ուսանողները պետք է ծանոթ լինեն ոչ միայն տվյալ լեզվի մշակույթին այլ նաև պատմությանն ու կրոնին: Այս առումով որոշ

ուսուցողական մեթոդներ կարող են օգտագործվել՝ ուսանողներին քաջալերելու և նպաստելու միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացմանը, օրինակ՝

- օգտագործել կարճամետրաժ ֆիլմեր, ուսանողների միջմշակութային կարողությունները զարգացնելու համար,

- ուսանողները հիմնականում պետք է իրենց ուշադրությունը սևեռեն հետևյալ գործոններին՝ լեզվական ու արտալեզվական միջոցներին, մարմնի լեզվին, շարժումներին, մշակութային ինքնությանը, փողոցային մշակույթին, տոներին, սովորույթներին, ընտանեկան կյանքին, գենդերային խնդիրներին, սերունդների բախմանը, ինչպես նաև ազգայնականությանն ու ռասսայականությանը,

- դիտել ներկայացումներ իրենց և այլ երկրների մասին,

- բեմադրել խաղային ներկայացումներ տարբեր մշակույթների ներկայացուցիչների մասնակցությամբ,

- օգտագործել համացանց, ձայնասկավառակներ՝ լուսաբանելով օտար մշակույթը,

- զուգահեռներ անցկացնել սեփական մշակույթի և օտար մշակույթի միջև,

- զրույցներ ունենալ ուսանողների հետ օտար երկրների մշակույթների մասին և մարդկանց վերաբերող կարծրատիպերի մասին,

- ներկայացնել միջմշակութային ուսումնասիրության նախագիծ,

- կազմակերպել շնորհանդեսներ,

- ներկայացնել զեկույցներ,

- ճշգրիտ գնահատել ուսանողների ներուժը:

Այս ամենի արդյունքում ուսանողը հնարավորություն կունենա ազատ և անկաշկանդ հաղորդակցվել օտար լեզվով, իսկ դասավանդողն էլ իր հերթին գոհունակությամբ կարձանագրի իր կատարած աշխատանքի դրական արդյունքը:

Վերը ներկայացված միջոցները հնարավորինս դյուրին կդարձնեն դասավանդողի և ուսանողի միջև փոխհարաբերությունների ձևավորմանն ու հաստատմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ջահուկյան Գ. Բ. Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, Ասողիկ հրատարակչություն, 2003:
2. Byram M. E. Culture and Language Learning in Higher Education. Cambridge: Cambridge University Press, 2004.
3. Kramsch C. Language and Culture. Oxford: Oxford University Press, 1998.
4. Tylor E. B. Primitive Culture. New York: J. P. Putnam's son, 1871.
5. URL: <http://eva.ru/travel/read/-547.htm>

Աստղիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Լուսիկ ՀՈՎԱԿԻՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ ԲՈՒՀՈՒՄ

Հողվածում քննարկվում են բուհերի տնտեսագիտության ֆակուլտետներում դասավանդվող «Գործարարական անգլերեն» դասընթացի ուսուցման հայեցակետերը՝ դիտարկելով այն «Անգլերենը հատուկ նպատակների համար» մոտեցման սկզբունքների շրջանակներում: Նկարագրվում են դասընթացի տարրերակիչ առանձնահատկությունները, որոնք միտված են ապագա մասնագետների թե՛ ակադեմիական հմտությունների զարգացմանը և թե՛ գործարար-մասնագիտական ոլորտում հաղորդակցական կարողությունների ձևավորմանը:

Բանալի բառեր. անգլերենը հատուկ նպատակների համար /ԱՀՆ/, գործարարական անգլերեն, մասնագիտական բառապաշար, հաղորդակցական հմտություններ, կարողություն, գործարարական լեզվի կիրառական քերականություն

Համաշխարհային ինտեգրման և հատկապես միասնական եվրոպական կրթական տարածքի ստեղծման արդի պայմաններում օտար լեզուներին տիրապետելը բարձրագույն ուսումնական հաստատության շրջանավարտի ընդհանուր կարողության անբաժանելի մաս է համարվում: Ժամանակակից մասնագետին ներկայացվող պահանջներից մեկն էլ դարձել է որևէ օտար լեզվին տիրապետելու միջին և միջինից բարձր մակարդակը, ինչը թույլ կտա մասնագիտական գործունեության ոլորտում անմիջական շփում իրականացնել օտարերկրացի գործընկերների հետ՝ այդպիսով կայացնելով և կատարելագործելով մասնագիտական իմացության որակն ու արդյունավետությունը: Օտար լեզուների դերի և նշանակության աճի պայմաններում և հետխորհրդային կրթության ոլորտի համընդհանուր փոխակերպման փուլում կարևորվում է բուհական տարբեր մասնագիտությունների կրթական ծրագրերի շարունակական վերանայումը և լրամշակումը, ընդ որում խոսքը գնում է ոչ թե որոշ կարողությունների ձևավորման մասին առարկայի շրջանակներում, այլ բոլոր առարկաների նոր դերի մասին՝ ուղղված անհատի մասնագիտական ձևավորմանը /Крупченко, Кузнецов, 2015/:

Այս առումով անգլերենի դասավանդումը բարձրագույն ուսումնական մակարդակում նույնպես նկատելի փոփոխությունների և մշակման անհրաժեշտություն է ենթադրում, ինչը կնշանակի, որ հարկ է վերանայել հատուկ մասնագիտական նպատակների համար անգլերենի առկա դասընթացների ծրագրային փաթեթները թե՛ ուսուցանվող նյութի ընտրության և թե՛ այդ նյութի դասակարգման տեսանկյունից: ԱՀՆ-ի (Անգլերենը հատուկ նպատակների համար) կատարագույն բաղադրիչ հանդիսացող դասընթացներից է *գործարարական անգլերենը*, որը վերջին տասնամյակների ընթացքում ինքնուրույն

ձևավորվող ենթալեզվի կարգավիճակ է ձեռք բերել: Այս դասընթացի լսարանը ավելի քան համընդգրկուն է, իմաստով, որ այն չի սահմանափակվում բուհական ուսումնառության գործընթացով:

Նախկինում բուհերի հասարակագիտական (բացառությամբ՝ օտար լեզուների) և բնագիտական ֆակուլտետներում *Ընդհանուր անգլերենի* (General English) դասավանդմանը փոխարինելու է եկել *Անգլերենը հատուկ նպատակների համար* (ESP) մոտեցմամբ ուսուցանումը, որը հիմնված է անգլերեն ուսումնասիրողների ապագա մասնագիտության յուրահատկություններով պայմանավորված պահանջմունքների վրա և միտված է ուսանողների ինչպես ակադեմիական կարողությունների ձևավորմանը, այնպես էլ մասնագիտական իրազեկության զարգացմանը: ԱՀՆ դասավանդումն արդարացված է նախևառաջ այն պատճառով, որ այն խթանում է ուսանողների հետաքրքրվածությունը՝ մասնագիտական ոլորտից ընտրված նյութերի արդիականությամբ և կիրառելիությամբ, մատուցվող նյութի բազմազանությամբ, հաղորդակցական հմտությունների մշակման առանձնահատուկ շեշտադրությամբ: Ընդհանուր անգլերենի շրջանակներում վաղուց ի վեր դասավանդվում է *մասնագիտական լեզու* բաղադրիչը, սակայն վերջինս պետք է հստակ տարբերել ԱՀՆ մաս կազմող *Անգլերենը մասնագիտական նպատակների համար* դասընթաց-բաղադրիչից, որն ավելի լայն է իր ընդգրկմամբ, նպատակներով, մեթոդներով և ունի ընդգծված հաղորդակցական-կիրառական ուղղվածություն: ԱՀՆ դասավանդման մեջ իր տեղն ունի *գործարարական անգլերենը*, որն առանձնանում է որպես ուրույն ուսումնասիրության առարկա բովանդակային և մեթոդական առումներով: Գործարարական անգլերենը իր մեջ ներառում է թե՛ տնտեսագիտության և գործարարության լեզուն՝ իր բոլոր բաղադրիչներով հանդերձ, և թե՛ անգլերենի հանրային հաղորդակցական հմտությունների համապարփակ ամբողջությունը: Գործարարական անգլերենի ուսուցման ժամանակակից ուղղությունները հենվում են լեզվի հաղորդակցական հմտությունների մշակման վրա՝ հիմք ընդունելով գործարար միջավայրում շրջանառվող խոսքային կաղապարների ուսուցանումը /Ellis, Johnson, 2005/:

Գործարարական անգլերենը որպես դասընթաց ներառում է երկու միմյանց լրացնող կարևորագույն բաղադրիչ. տնտեսագիտության անգլերենի ներքին լեզվական առանձնահատկությունները և գործարար հաղորդակցության լեզուն՝ իր ենթակառուցվածքային բաղադրիչներով հանդերձ: Դասընթացի կառուցվածքում ընդգրկված է գործարարական անգլերենի ընդհանրական դրույթների ուսուցանումը: Վերջինս ենթադրում է թե՛ ընդհանուր և նեղմասնագիտական (դասախոսի հայեցողությամբ ընտրված) և թե՛ դասագրքային բնագիր տեքստերի ընթերցանական հմտությունների մշակում, բազմաբնույթ բանավոր զեկույցների և գրույցների ունկնդրում՝ հաջորդվող լսարանային քննարկումներով, որոնք զուգահեռաբար ուղղորդվում են տերմինաբանական բառապաշարային ֆոնդի մշակմամբ և հարստացմամբ: Քանզի տնտեսագետ-ուսանողի առաջնահերթ խնդիրն է տիրապետել գործարար

հաղորդակցության հմտություններին, ապա դասընթացի կարևորագույն մաս է կազմում գրավոր հաշվետվությունների, առևտրային նամակագրության, ընթացիկ աշխատանքային գրագրության ուսուցանումը, բանակցությունների խոսքային տեխնիկայի և բանավոր զեկույցների վարպետացումը, հանրային փոխշփումների մշակույթի ուսուցանումը: Ընդ որում, հաշվի է առնվում ինչպես միջմշակութային, այնպես էլ ներմշակութային համատեքստը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև զբաղվածության փաստաթղթերի (օր. ռեզյումե, դիմում-նամակ) ձևակերպման լեզվի և աշխատանքային հարցազրույցներին պատրաստվելու ռազմավարությունների ուսուցմանը: Այսպիսով, գործարարական անգլերենի ուսուցման առանցքային հայեցակետը լեզվի գործնական կիրառության ուսուցանումն է, որը հետապնդում է հեռահար նպատակներ, այն է՝ աշխատաշուկայում ուսանողի (երիտասարդ մասնագետի) մրցունակության ապահովում, ինչպես նաև անձնային և մասնագիտական աճի խթանում:

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի մաս է կազմում «Օտար լեզու» /Անգլերեն/ առարկան, որի շրջանակներում ուսուցանվում է *Գործարարական անգլերեն* դասընթացը՝ երկու տարի, երկու փուլով: Առաջին (երեք կիսամյակ) և երկրորդ (մեկ կիսամյակ) փուլերում ուսուցանվում են «Անգլերենը ընդհանուր ակադեմիական և գործարար նպատակների համար» (English for Academic and General Business Purposes) և «Գործավարություն անգլերեն լեզվով» ենթադասընթացները համապատասխանաբար: Վերջինս առավել նպատակահարմար կլիներ վերանվանել «Գործարար հաղորդակցության անգլերեն» (English for Business Communication):

Բակալավրիատի ծրագիրը նախատեսում է ընդհանուր լեզվական հմտությունների ամրակայում, որը թույլ կտա ուսանողին տիրապետել տնտեսագիտական նյութի ընթերցմանը և լիարժեք ընկալմանը: Եթե առաջին փուլում շեշտը դրվում է առավելապես ռեցեպտիվ/ըմբռնողական (ընթերցել և ունկնդրել-ընկալել) հմտությունների զարգացման վրա, ապա երկրորդ փուլը ենթադրում է պրոդուկտիվ/ստեղծարար (խոսել և գրել) հմտությունների մշակում և ամրապնդում: Երկամյա դասընթացի ավարտին ուսանողից ակնկալվում է ցուցաբերել գիտելիքներ և հմտություններ խոսքային գործունեության տարբեր դրսևորումներում: Ստորև ներկայացվում է հմտություններից յուրաքանչյուրի բնութագիրը.

- Ընթերցում. ուսանողը պետք է կարողանա ընթերցել և հասկանալ զանազան աղբյուրներից քաղված մասնագիտական բազմաբնույթ տեքստեր՝ ցուցաբերելով մասնագիտական բառապաշարի և ժանրային առանձնահատկությունների իմացություն, ինչպես նաև տեքստի հետ աշխատելու ունակություն:

- Բանավոր խոսքի ընկալում. ուսանողը պետք է կարողանա լսելով ընկալել և հասկանալ բանավոր խոսքը կիրառելով լսելու տարբեր ռազմավարություններ՝ նպատակին/խնդրին համապատասխան (օր. ընդհանուր

բովանդակությունը կամ կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար), ինչպես մասնագիտական, այնպես էլ հաղորդակցական զանազան ոլորտներում:

- Բանավոր խոսք. ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն ձևավորել և արտահայտել մտքեր մասնագիտական թեմաներով զրույց վարելիս, հանդես գա գեկույցներով, բանակցի մասնագիտական և տեխնիկական հարցերի շուրջ՝ հաշվի առնելով հաղորդակցական նպատակներին հասնելու ռազմավարությունների դիսկուրսիվ ամբողջությունը:

- Գրավոր խոսք. ուսանողը պետք է կարողանա պատշաճ լեզվական ձևակերպումներով կազմել գործնական փաստաթղթեր՝ նկատի առնելով տրված հաղորդակցական խնդիրը (օր.՝ հարցնել, առաջարկել, ընդունել, մերժել, հաղորդել, նկարագրել, դատողություն անել և այլն), ինչպես նաև կարողանա կատարել անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն մասնագիտական տեքստերի ամփոփ վերարտադրություն/թարգմանություն:

Մագիստրոսական ծրագիրը ներառում է նեղ-մասնագիտական նյութերի գործարկում: Նյութի ընտրությունը պայմանավորված է մագիստրոսական խմբի մասնագիտական կողմնորոշմամբ:

Դասընթացի ծրագիրը իր բնույթով գործառնության է և կառուցված է գործարար հաղորդակցական գործառնությունների լեզվական դրսևորումների ամբողջական կադապարի հիման վրա /Breen, 2002/: Այդ գործառնությունների շարքին են դասվում գործարար հանդիպումների և բանակցությունների խոսքային մշակույթը, ինչպես նաև բանավոր գեկույցների տեխնիկան, հեռահաղորդակցության գործառնությունը և այլն: Գործարարական լեզվի գործառնություններով պայմանավորված խոսքային հմտությունների ուսուցանումը ենթադրում է գործարար աշխարհի այնպիսի կարևորագույն բնագավառների և երևույթների քննարկում, ինչպիսիք են տնտեսական տեղաշարժերը և առևտրային ուղղությունները, ապրանքը, արտադրական գործընթացները և ընթացակարգերը, տնտեսվար ռազմավարությունը, ֆինանսա-հաշվապահական հաշվառումը, մարդկային ռեսուրսների կառավարումը և այլն: Վերոհիշյալ քննարկումների ընթացքում ուսումնասիրվում և գործարկվում են քննարկվող նյութի համատեքստով պայմանավորված լեզվական գործառնությունները: Այս գործառնությունների ուսուցանումը իրականացվում է գործարարական լեզվի կիրառական քերականության (business grammar) ուսումնասիրմամբ: ԱՀՆ-ի շրջանակներում լեզվի դասավանդման այս հարաբերականորեն նոր մոտեցումը թույլ է տալիս զարգացնել այնպիսի լեզվական հնարքների իմացությունը, ինչպիսիք են իմաստային շաղկապումները, համեմատությունը և հակադրությունը, պատճառի և հետևանքի ձևակերպումը դատողության մեջ, համաձայնության և անհամաձայնության արտահայտչաձևերը:

Դասընթացի ծրագիրը իրականացվում է թե՛ հրատարակված դասագրքերի և թե՛ զանազան աղբյուրներից հավաքագրված արդիական նյութերի (ներառյալ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները) մշակումներով: Դասընթացի ավարտին ուսանողներից ակնկալվում է գործարարական

անգլերենի լեզվական հմտությունների (ընթերցանական նյութի ըմբռնում և վերարտադրություն, ունկնդրում և ըմբռնում, գործարար և հանրային իրավիճակներում՝ խոսք, գործարար գրագրության իմացություն) տիրապետումը, ինչպես նաև՝ տնտեսագիտության հիմնարար տերմինապաշարի իմացությունը:

Նեղ-մասնագիտական կամ ոլորտային լեզվի (domain-specific language) համար խիստ հատկանշական և առանձնահատուկ տարբերակումները, որոնք փոփոխուն են և անվերջ համալրվող, պարտադրում են գործարար հաղորդակցության լեզվի ուսումնասիրությունը դարձնել առավել ճկուն և համադրելի մասնագիտական դաշտում առկա հարափոփոխ մոտեցումներին: Կարելի է հետևություն անել այն մասին, որ սույն հանգամանքով է պայմանավորված *Գործարարական անգլերեն* դասընթացի ծրագրային հայեցակարգի անընդմեջ մշակումն ու համալրումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Крупченко А.К., Кузнецов А.Н. Основы профессиональной лингводидактики. М.: АПКИППРО, 2015.
2. Breen M.P. Syllabus design // *The Cambridge Guide to Teaching English to Speakers of Other Languages*. Cambridge: Cambridge University Press, 2002.
3. Donna S. Teach Business English. Cambridge: Cambridge University Press, 2000.
4. Dudley-Evans T., St. John M. J. Developments in English for Specific Purposes: A Multi-Disciplinary Approach. Cambridge: Cambridge University Press, 1998.
5. Dudley-Evans T. English for Specific Purposes // *The Cambridge Guide to Teaching English to Speakers of Other Languages*. Cambridge: Cambridge University Press, 2002.
6. Ellis M., Johnson C. Teaching Business English. Oxford: Oxford University Press, 2005.
7. Frendo E. How to Teach Business English. Harlow: Pearson Education Ltd, 2009.
8. Hutchinson T., Waters A. English for Specific Purposes. Cambridge: Cambridge University Press, 2006.
9. Johns A.M., Price-Machado D. English for Specific Purposes (ESP): Tailoring Courses to Student Needs – and to the Outside World // M. Celce-Murcia (ed.) *Teaching English as a Second or Foreign Language*. Boston, MA: Heinle & Heinle, 2001.
10. Long M. Second Language Needs Analysis. Cambridge: Cambridge University Press, 2005.

11. Robinson P. ESP Today: A Practitioner's Guide. London: Prentice Hall, 1991.
12. Swales J. M., Feak C. S. Academic Writing for Graduate Students (2nd ed.). Ann Arbor: University of Michigan Press, 2012.

А. ОГАНЕСЯН, Л. ОВАКИМЯН – *Аспекты преподавания делового английского в ВУЗЕ.* – В статье рассматриваются аспекты преподавания курса «Деловой английский» в рамках подхода английского для специальных целей в системе высшего образования на современном этапе. В статье обозначены отличительные особенности курса, которые направлены на развитие академических навыков будущих специалистов и формирование профессионально-ориентированных коммуникативных компетенций.

Ключевые слова: английский для специальных целей (АСЦ), деловой английский, профессиональная лексика, коммуникативные навыки, компетенция, грамматика делового английского

A. HOVHANNISYAN, L. HOVAKIMYAN – *On Some Aspects of Teaching Business English in Higher Education.* – The paper discusses some aspects of teaching the course of Business English in the framework of necessary changes to foreign language teaching practices in higher education. The concept of Business English teaching is viewed within the English for Specific Purposes (ESP) approach. The specific features of the course are described with regard to both developing academic skills and shaping professional business communication competencies of the future specialists.

Key words: English for Specific Purposes (ESP), Business English, professional vocabulary, communication skills, competence, business grammar

Լիլիթ ՍԱՐՈՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՀԱՅԱԼԵԶՈՒ ԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ
ՀԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ**

Սույն հոդվածում քննվում են իսպաներենի հնչյունային առանձնահատկությունների դասավանդման այն մոտեցումները, որոնք առավելագույն արդյունավետություն կարող են ապահովել հայալեզու լսարանում: Հոդվածում դիտարկվում են ինչպես մեթոդական խնդիրներ, այնպես էլ սոցիալ-հոգեբանական այն անհրաժեշտ նախապայմանները, որոնց հենքի վրա կարելի է ստեղծել ուսանողակենտրոն մոտեցում և ապահովել լիարժեք դասալրոցես, որի ընթացքում ինտերակտիվ մեթոդի և ժամանակակից տեխնոլոգիաների ու դիդակտիկ նյութի կիրառման պայմաններում հնարավոր է ներգրավել բոլոր ուսանողներին և ստանալ առավելագույն արդյունք: Հնչյունային առանձնահատկությունների դասավանդման ժամանակ հաշվի առնելով հայալեզու լսարանի արտասանական ապարատի առանձնահատկությունները անհրաժեշտ է առավել մանրամասն անդրադարձ կատարել իսպաներենի ձայնավոր և բաղաձայն հնչյունների համակարգին ու դրանց միացություններին և այդ ամենն ամրապնդել վարժությունների ու շուտասելուկների միջոցով:

Բանալի բառեր. հնչյունային առանձնահատկություններ, ժամանակակից տեխնոլոգիաներ, ինտերակտիվ մեթոդ, հոգեբանական միջավայր, երկրաբառներ, սինալեֆա, եռարարբառներ, շուտասելուկներ, դիդակտիկ նյութեր, ձայնավոր/բաղաձայն

Ինչպես հայտնի է, Հայաստանի բուհական կրթության համակարգում վերջին տարիներին տեղի ունեցող արմատական փոփոխությունները, որոնք կապված են նոր համակարգի ինտեգրման հետ և միտված են առավել զարգացնելու մեր երկրի կրթական համակարգը, իրենց հետ բերում են նոր երևույթների և մեթոդների կիրառման անհրաժեշտություն: Բացի արտաքին աշխարհից եկող փոփոխություններից, որոնք նպատակ ունեն համապատասխանեցնելու մեր կրթական ոլորտը միջազգային չափանիշներին, այն է՝ Բոլոնիայի գործընթացը բարձրագույն կրթության ոլորտում և համապատասխան չափորոշիչների մշակումը, կան նաև այսպես կոչված ներքին փոփոխություններ:

Լսարանում ցանկացած նոր երևույթի կիրառման ժամանակ, որոնք հիմնականում արտաքին աշխարհից եկող փոփոխություններն են, կարող են առաջանալ սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ և խնդիրներ, որոնք ներքին բնույթի են և կարող են մեծ ազդեցություն թողնել դասավանդման արդյունավետության վրա: Հարկ է նշել, որ արդյունավետությունն իր հերթին պայմանավորված է այդ փոփոխությունները կրող անհատի՝ ուսանողի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով և դրանց նկատ-

մամբ նրա ունեցած պատրաստվածությամբ: Հոգեբանական մի շարք գործոնների կարևորությունն էլ ավելի է մեծանում օտար լեզվի դասավանդման գործընթացում հատկապես բանավոր խոսքի ժամանակ, որտեղ ի հայտ են գալիս արտասանական ապարատի հետ կապված մի շարք առանձնահատկություններ:

Ցանկացած օտար լեզվի դասավանդման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն սովորողների մայրենի լեզվի առանձնահատկությունները, որոնց համար նախատեսված է համապատասխան դասընթացը: Այստեղ հարկ է հատկապես կարևորել տվյալ լսարանի ոչ միայն մայրենի լեզվին ու, անշուշտ, արտասանական ապարատին և հնչյունային համակարգին բնորոշ առանձնահատկությունները, այլև տվյալ լեզուն կրող ժողովրդի աշխարհընկալումը, արժեքային համակարգը, մտածելակերպն ու ավանդույթները, որը դիպուկ նկարագրել է Լ.Վիգոտսկին.

“Cuando las dos lenguas (la primera o materna y la segunda) tienen valores afectivos, culturales y sociales, los niños construyen sus aprendizajes y desarrollan habilidades de comprensión en el diario vivir del aula, donde interactúan e intercambian experiencias y juicios” /Vygotsky, 1989: 17/:

Հայտնի է, որ մեր օրերում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը ցանկացած ոլորտում դարձել է ժամանակակից պահանջներից մեկը, և լեզվի դասավանդման գործընթացը ոչ միայն գերծ չէ այդ ամենից, այլև դրանց կիրառումը դասապրոցեստում դարձել է ժամանակի հրամայական: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումից զատ, ինչպես արդեն նշել ենք, կիրառվում են նոր մեթոդներ, որոնցից ներկայումս կարևորվում է այսպես կոչված ինտերակտիվ Ջիգսո մեթոդը (the Jigsaw technique), որը ենթադրում է դասապրոցեստին ուսանողի լիակատար ներգրավվածություն և դասախոսի բարձր պատրաստվածություն:

Վերոհիշյալ ինտերակտիվ մեթոդը և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը հատկապես կարևոր է հայալեզու լսարանում իսպաներենի՝ որպես օտար լեզվի, դասավանդման գործընթացում: Քանի որ հայերենն ու իսպաներենը պատկանում են տարբեր լեզվաընտանիքների, բնականաբար, ունեն բազմաթիվ տարբերություններ, ինչպես կառուցվածքային, այնպես էլ հնչյունային: Հայերենով խոսելիս մենք հետևում ենք հայերենին բնորոշ որոշակի լեզվական օրենքների և նորմերի:

Ինչպես նշում է Պ. Պողոսյանը, որևէ միտք արտահայտելու համար խոսում ենք, այսինքն՝ արտասանում ենք մեր լեզվի օրենքներով միմյանց կապակցված բառեր /Պողոսյան, 1969: 13/: Հայերենը, ինչպես գիտենք, ունի հնչյունային բավականին հարուստ, կուռ և ճկուն համակարգ, և հայալեզու լսարանին իսպաներեն դասավանդելիս կարելի է ստանալ առավելագույն արդյունք, եթե դասախոսը կիրառի ժամանակակից ինտերակտիվ մեթոդը և օգտվի որոշակի տեխնիկական սարքավորումներից:

Այդուհանդերձ, կան որոշակի դրույթներ, որոնք պետք է կարևորել հայալեզու լսարանին իսպաներենի արտասանական և հնչյունային առանձնա-

հատկությունները բացատրելիս, ինչը կապահովի իսպաներենի հնչյունների ճշգրիտ և մաքուր արտաբերում, հղկված և սահուն արտասանություն ու կապահովի իսպաներենին բնորոշ արագություն:

Այսպիսով, ինչպե՞ս ճիշտ դասավանդել իսպաներենի հնչյունային առանձնահատկությունները: Առաջին հերթին համապատասխան հայալեզու լսարանում անհրաժեշտ է ստեղծել բարոյահոգեբանական համապատասխան միջավայր, որտեղ գերիշխեն ազատ, անմիջական և վստահելի հարաբերություններ, դասընկերների բարյացակամ և պատրաստակամ վերաբերմունք, որոնց առկայության պայմաններում միայն ուսանողները կարող են միանգամայն անկաշկանդ կարդալ և հղկել իրենց արտասանությունը: Նշված նախապայմանների առկայության անհրաժեշտությունը անգլերենի ուսուցման գործընթացի օրինակով ներկայացրել են Մ. Կ. Ռ. Կատանյոն և Մ. Վ. Դիեստեն՝

Con base en los hallazgos y corrientes educativas enfocadas a la eficacia en la enseñanza de una segunda lengua, retomamos las principales ideas que nos han sido útiles para una mejora en el aprendizaje y dominio del inglés:

- Conocer el desarrollo psico-evolutivo en el que se encuentra el alumno, con el fin de acercarlo al conocimiento en las diferentes etapas de su vida de manera confiable y segura.

- Conocer a profundidad las metodologías y enfoques para la enseñanza de un segundo idioma que dé una perspectiva global del proceso enseñanza-aprendizaje y que involucre no sólo aspectos de la reflexión y uso comunicativo de la lengua, sino también el aspecto humano que comprende su parte afectiva, emocional y social.

- Conocer las diferencias entre las dos lenguas, así como su cultura e ideologías, con el fin de profundizar en la inmersión y comprensión de la misma.

- Que las actividades sean significativas y progresivas, lo cual hace que el alumno encuentre sentido y aplicación a lo que aprende /Cataño, Dieste, 2014: 34/.

Գործնական հնչյունաբանությունը, առավել քան որևէ այլ առարկա, ենթադրում է ինտերակտիվ մեթոդի կիրառում: Անհրաժեշտ է նախ հայալեզու լսարանին համառոտ ներկայացնել տեսական այն կանոնները, որոնց պետք է խստորեն հետևել իսպաներենի արտասանության ընթացքում, հատկապես այն կանոնները որոնք առկա չեն մայրենի լեզվում՝ տվյալ դեպքում հայերենում: Այստեղ հարկ է նշել, որ ինտերակտիվ մեթոդը, որը այս պարագայում կապահովի ուսանողների անմիջական և անընդմեջ մասնակցությունը և նրանց ներգրավվածությունը ողջ դասաժամի ընթացքում, մեծ արհեստավարժություն է պահանջում նաև դասախոսից: Վերջինից պահանջվում է բավականին պատրաստվածություն և արհեստավարժություն, քանի որ դասի ընթացքը բավականին արագ է, ինչը ենթադրում է, որ դասախոսը պետք է առավելագույնս հստակ և դինամիկ ձևակերպի հարցադրումները, մեծ վարպետությամբ և ճշգրտությամբ ուրվագծի ուսանողների անելիքները, առանց ավելորդ խոսքերի սահուն ղեկավարի ուսանողներին, ներքաշի նրանց երկխոսու-

թյունների մեջ, կազմակերպի խմբակային մասնակցություն, ապահովի դիդակտիկ, տեսալսողական և լսողական նյութերով: Խմբակային այս ողջ գործունեության ընթացքում միևնույն ժամանակ դասախոսը պետք է կարողանա նկատել նրանցից յուրաքանչյուրի անհատական գործունեությունը, անհրաժեշտության դեպքում անի հուշումներ առանց ակնհայտ հուշման, մղի ինքնուրույն աշխատանքի, ուղղորդի նրանց ակտիվ գործունեությունն ու ապահովի ակտիվ ունկնդրում սոցիալականացման նշված գործընթացում և գրագետ կառավարի լսարանը:


Այսպիսով, հայալեզու լսարանում իսպաներենի հնչյունային առանձնահատկությունների դասավանդումը լիարժեք իրականացնելու և հղկված արտասանություն ապահովելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հայ ուսանողներին համառոտ ներկայացնել մայրենի լեզվի՝ հայերենի այբուբենի հնչյունային կազմը, ձայնավոր և բաղաձայն հնչյունների համակարգը՝ անդրադարձ կատարելով դրանց արտասանական առանձնահատկություններին, ներկայացնել հայերենի շեշտի, պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունների հնչերանգի հետ կապված այն դրույթները, որոնք բնորոշ են հայոց լեզվին, քանզի միմիայն մայրենի լեզվի կատարյալ իմացությունը կարող է հենք հաղիսանալ ցանկացած օտար լեզվի լիարժեք տիրապետման համար: Այս ամենից հետո պետք է անդրադարձ կատարել այն առանձնահատկություններին, որոնք որոշակի ընդհանրություն ունեն իսպաներենի հետ և վերոհիշյալը անպայմանորեն պետք է հաստատվի և հիմնավորվի համապատասխան օրինակներով: Օրինակների հիմնավորումը առավել հավաստի դարձնելու և ուսանողների արտասանական հմտությունները առավելագույնս զարգացնելու նպատակով լսարանում հարկ է կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ՝ օգտագործելով լսողական և տեսալսողական սարքավորումներ: Այնուհետև, անհրաժեշտ է մանրամասն ներկայացնել իսպաներենի հնչյունային համակարգը՝

CORRESPONDENCIA ENTRE FONEMAS Y GRAFÍAS

Fonema	Letra	Nombre	Pronunciación	Ejemplo
/a/	A	A	[a]	C asa
/b/	B, v, w	be, uve,uve doble	[b], [β]	b eso, v ida, w hisky
/θ/	C (ante e, i) z (ante a, o, u)	Ce	[k], [θ], [s]	c recer, c ielo, z apato, z oo, z umo
/ch/	Ch	Che	[tʃ]	Ch imenea
/d/	D	De	[d], [ð]	D edo
/e/	E	E	[e]	E lefante
/f/	F	Efe	[f]	F echa
/g/	G (ante a, o, u ó consonante) gu (ante e, i)	Ge	[g], [ɣ]	G ato, g uerra, g uitarra

/ /	H	Hache	[no se pronuncia]	h acha, h umo
/i/	i, y	I (latina), y (griega)	[i]	mi , rey, muy
/j/	G (ante e, i) j (a, e, i, o, u)	Jota	[X]	jamón , jefe, j inete, j oroba, j udío
/k/	C (ante a, o, u o consonante) qu (ante e, i) k	Ca	[k]	c aballo, c ocodrilo, c ueva, q ueso, k ilo
/l/	L	Ele	[l], [l̞],[l̝]	L abio
/ll/	Ll	Elle	[λ], [j]	ll ave, ella
/m/	M	Eme	[m]	m ama, m esa, m illa, m osca, m usa
/n/	N	Ene	[n],[ŋ],[ɲ]	N iño
/ñ/	Ñ	Eñe	[ɲ]	Ñ iño, año
/o/	O	O	[o]	O so
/p/	P	Pe	[p]	p elota, p ipa
/r/, /r̄/	R	ere, erre	[r], [r̄]	A rena, a rriba, r adio
/s/	S	Ese	[s], [z]	S ol
/t/	T	Te	[t]	T ortuga
/u/	U	U	[u]	U na, u va
/ks/, /gs/	X	Equis	[ks], [x], [s]	e xamen , taxi, x enofobia
/y/	Y	I griega	[i], [j], [λ]	y o, y erno

Վերոհիշյալը ներկայացնելուց հետո պետք է հանգամանալից խոսել իսպաներենի ձայնավորների համակարգի մասին: Նախ անհրաժեշտ է ներկայացնել իսպաներենի ձայնավորների համակարգը եռանկյան տեսքով՝ խոսելով ձայնավոր հնչյունների արտաբերման նրբությունների մասին, որից հետո ներկայացնել նշված հնչյունների դասակարգումն ըստ դրանց արտաբերման տեղի և ձևի:



Ձայնավորների համակարգը լիարժեք ներկայացնելուց հետո անհրաժեշտություն է առաջանում է ուսանողին ներկայացնել իսպաներենի ձայնավորների կապակցման համակարգը. **երկարքառներ (diptongos)**՝ **ai-** (baille, **fai**-sán, **ai**-re, **vai**-vén), **au-** (au-to, cau-sa, pau-sa, pau-ta, lau-rel), **ei**, **ey** - (peine, rey, ley), **eu-** (deu-da, **Eu**-ro-pa, feu-dal, neu-ró-lo-go), **oi**, **oy** – (oi-go, boi-na, soy, voy), **ou-** (Sou-sa, bou ('ou' es raro)), **ia-** (lim-pia, fe-ria, glo-ria, dia-blo, piano), **ua-** (gua-gua, ag-ua, cuan-to, guan-te), **ie-** (pien-so, sie-te, vie-ne, pied-ra, mie-do), **ue-** (fuer-za, sue-na, grue-so, sueg-ra, pues, fue-go, bue-no), **io-** (lim-pio, pa-tio, ac-ción, ex - cur-sión, es-tu-dio, no-vio, dio, vio), **uo-** (ar-duo, con-ti-nuo, cuo-ta), **iu-** (ciu-dad, viu-da, triun-fo), **ui-** (cui-da-do, Lui-sa, rui-do),

եռաբարբառներ (triptongos)` envidiáis, asociáis, Paraguay, Uruguay, semiautomático, buey, **հրաանջի (hiato)**` al-de-a, le-ón, ba-hí-a, o-í-do, fan-ta-sí-a, ինչպես նաև խոսքային շղթայում ձայնավորների միաձուլված արտասանության դրույթները, որը իսպանացի լեզվաբանները այն կոչում են **սինալեֆա (sinalefa)**` **Reducción: se enciende; para Alfonso. Alargamiento: no lo oye; para Ana. Diptongación: bailando en la calle; vivo allí.**

Չայնավորների համակարգը ներկայացնելուց հետո այն կարելի է ամփոփել հետևյալ իսպանական հանրահայտ երգով, որը կամրապնդի արդեն ստացված գիտելիքները`

A;E;I;O;U.

A;E;I;O;U

Los niños en la escuela dan su lección

Un angelito vela en un rincón

A;E;I;O;U.

A;E;I;O;U

La “a”, la “a”,

La “a” es como un perrito, que dice “gua”

“gua,” “gua”,

La “e”, la “e”,

La “e” es un borreguito, que dice “me-e-e-e”

La “i”, la “i”,

La “i” es una muñeca, que llora “iiiiiiiiiiii”,

La “o”, la “o”,

La “o” es una rosquilla, la quiero yo,

La “u”, la “u”,

La “u” es de caña verde, caña bambú.

Padre nuestro, maestra y maestro

Ave María, la noche con el día.

El burro tiene orejas y cuatro patas

La niña que no estudia, va al cuarto de las ratas.

A;E;I;O;U.

A;E;I;O;U

Չայնավոր հնչյուններից հետո անհրաժեշտ է համապարփակ ներկայացնել իսպաներենի բաղաձայն հնչյունների արտասանական առանձնահատկությունները`

/p/ bilabial, no líquida, oral, grave, difusa, oclusiva, sorda.

/b/ bilabial, no líquida, oral, grave, difusa, sonora.

/f/ labiodental, no líquida, oral, grave, difusa, fricativa, sorda.

/t/ dental, no líquida, oral, grave, difusa, oclusiva, sorda.

/d/ dental, no líquida, oral, aguda, difusa, sonora.

/θ/ interdental, no líquida, oral, aguda, difusa, fricativa, sorda.

- /c/ palatal, no líquida, oral, aguda, difusa, oclusiva, sorda.
- /y/ palatal, no líquida, oral, aguda, densa, sonora.
- /s/ alveolar, no líquida, oral, aguda, densa, fricativa.
- /k/ velar, no líquida, oral, grave, densa, oclusiva, sorda.
- /g/ velar, no líquida, oral, grave, densa, sonora.
- /x/ velar, no líquida, oral, grave, densa, fricativa, sorda.
- /m/ bilabial, nasal, grave, difusa.
- /n/ alveolar, nasal, aguda, difusa.
- /ɲ/ palatal, nasal, densa.
- /l/ alveolar, líquida, oral lateral, difus.
- /r/ alveolar, líquida, oral vibrante, floja.
- /rr/ alveolar, líquida, oral vibrante, tensa.

Վերոհիշյալ դասակարգումը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է բացատրել իսպաներենի բաղաձայն-բաղաձայն և բաղաձայն-ձայնավոր հնչյունների կապակցված արտասանության դեպքերն ու առանձնահատկությունները, որ կոչվում է **էնկադենամիենտո (encadenamiento)** reducción : /s+s/ los sabores, alargamiento : /r+r/ color rojo /l+l/ el loco /n+n/ con nada, modificación en la articulación : /d+d/= [ð] El Madrid de mi niñez, resilabificación : consonante + vocal los amigos.

Հնչյունային, ինչպես նաև շեշտի և հնչերանգի առանձնահատկությունների, լիակատար տիրապետումն, այնուհետև, պետք է իր գործնական դրսևորումը ստանա կենդանի խոսքում, որը հղկվում է բանավոր վարժությունների միջոցով, որտեղ կարևոր դեր են խաղում շուտասելուկները, ինչպես օրինակ՝

Siete han sido sentenciados
 Por Santiago y Sebastian
 Y a la hora de la siesta
 Sentados los siete están.
 Serios sentados los siete
 Se dicen con gran pesar
 Por no pronunciar la S
 Sentadidos han de estar.
 El amor es una locura que
 solo el cura lo cura,
 pero el cura que lo cura,
 comete una gran locura.

Այսպիսով, հայալեզու լսարանին իսպաներենի հնչյունային առանձնահատկությունները դասավանդելիս անհրաժեշտ է լսարանում կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, ապահովել հոգեբանական լիարժեք հենք, որը կստեղծի համապատասխան միջավայր՝ ինտերակտիվ մեթոդի կիրառմամբ, բոլոր ուսանողներին ողջ դասապրոցեսի մեջ ակտիվորեն ներգրավելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պողոսյան Պ. Մ. Հայոց լեզու, Երևան, 1969:
2. Alcón S. E. Bases lingüísticas y metodológicas para la enseñanza de la lengua inglesa. Castellón de la Plana, 2002.
3. Cataño M. C. R, Dieste M. W. Enfoques teóricos para la adquisición de una segunda lengua desde el horizonte de la práctica educativa. México, 2014.
4. Deprez Ch. Les enfants bilingües, langues et familles. Paris, 1994.
5. Krashen St. The natural approach: Language acquisition in the classroom. Michigan, 1983.
6. Vygostky L. El desarrollo de los procesos psicológicos superiores. Barcelona, 1989.
7. Vygostky L. Pensamiento y lenguaje. Buenos Aires, 2010.
8. Saroyán L. Fonética teórica de la lengua española. Ereván, 2014.
9. URL: http://www.educationworld.com/a_curr/strategy/strategy036.shtml

Լ. ՏԱՐՕՅԱՆ – Կ ՎՈՐՍՅՈՒ Օ ՊՐԵՊՈՎԱԴԱՆԻ ՓՈՆԵՏԻԿԵՍԻ ԿՍԵՍԵՆՈՍՏԵՅ
испанского языка в армянской аудитории. – Статья посвящена различным подходам преподавания фонетических особенностей испанского языка в армянской аудитории. Во время преподавания фонетических особенностей в первую очередь необходимо обеспечить социально-психологический климат в аудитории. Применение как интерактивного метода, так и новейших технологий наряду с соответствующим дидактическим материалом дают возможность более углубленного изучения системы гласных и согласных испанского языка, формирования дифтонгов и трифтонгов, а также особенностей слитного произношения вышеуказанных единиц.

Կլյուչևե յևա: фонетические особенности, психологический настрой, дифтонг, трифтонг, синалефа, скороговорки, новейшие технологии, интерактивный метод, гласный/согласный, дидактический материал, студентоцентричный подход

L. SAROYAN – On Some Ways of Introducing Specific Features of Spanish Phonetics in the Armenian Classroom. – The paper studies the ways of teaching some phonetic peculiarities of Spanish, particularly the pronunciation of Spanish sounds, diphthongs, triptongs, synalefs, etc., which can cause difficulties for the Armenian native speakers. The interactive Jigsaw technique is an effective tool for obtaining the desired results in the teaching process. The use of didactic material (listening materials, video materials) is a necessary condition for creating an effective classroom. In order to organize a student-oriented classroom it is of great importance to guarantee a free psychological atmosphere in which students will be incited to participate actively in the learning process.

7. Kramer J. E. *The American College Novel: An Annotated Bibliography*, 2nd ed. Lanham: Scarecrow, 2004.

8. Showalter E. Faculty Towers: The Academic Novel and Its Discontents. Philadelphia: University of Pennsylvania Press, 2005.
9. Williams J.J. The Rise of the Academic Novel // *American Literary History*, vol. 24, no. 3, 2007.

А. БАБАДЖАНИЯН – Академический роман в современной американской и европейской литературе. – В данной статье представлены основные особенности академической прозы в современной американской и британской литературе. Подтипы и поджанры академической прозы представлены вместе с основными направлениями и тематическими особенностями. Рассмотрены такие вопросы, как гендерное и расовое равноправие в академической прозе и культурная война.

Ключевые слова: академический роман, университетский роман, кампус, академия, культурная война, кризисная литература, постмодернизм

A. BABAJANYAN – Academic Novel in Modern American and European Literature. – The present paper discusses the typical features of academic novel in modern American and European, specifically British literatures referring to the works published in the last two decades. Subtypes and subgenres of academic novel are discussed together with specific thematic features of American and British academic novels. Issues such as gender and racial discrimination in academic novels and cultural wars are also under consideration.

Key words: academic novel, university novel, campus, academia, culture wars, crisis literature, postmodernism

Նարինե ԶԱԲԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԱՄԵՐԻԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՊԻ ԺԱՆՐԸ ԵՎ
ՄԻՆՔԼԵՐ ԼՈՒԻՍԸ

Հողվածում ուսումնասիրվում է քսաներորդ դարի սկզբի ամերիկյան գրականությունը: Քննվում է այդ տարիներին երկրում տարածում գտած քննադատական ռեալիզմի ուղղությունը, ինչպես նաև սոցիալական վեպի ժանրը: Ժանրի ներկայացումը սկսելով 'Գրայգերից'՝ ապա առանձնահատուկ անդրադարձ է կատարվում Մինքլեր Լուիսին, որից հետո էլ ուսումնասիրությունը եզրափակվում է Սթայնբեքով: Նյութը կառուցված է նշված երեք գրողների համեմատության վրա, սակայն ուսումնասիրության նպատակադրումից ելնելով՝ համեմատության առանցքում միշտ Մինքլեր Լուիսն է:

Քանալի քառեր. քսաներորդ դարի գրականություն, քննադատական ռեալիզմ, սոցիալական վեպի ժանր, ամերիկյան սոցիալական վեպ, տարբերակիչ հատկանիշ, ինքնատիպ ոճ

Գրականությունը՝ իբրև արվեստի ինքնուրույն ճյուղ, չի կարող անտարբեր անցնել այն ամենի կողքով, որ կատարվում է կյանքում: Ընդհակառակը, ի սկզբանե ստեղծված լինելով բանահյուսության հիմքի վրա՝ գրականությունը, ի թիվս այլ գործառույթների, իր առջև նպատակ է դրել արձագանքել և հարմարվել այն բոլոր կարևոր փոփոխություններին և իրադարձություններին, որ կատարվում են հասարակության մեջ: Այն մի անտեսանելի և կախարդական հայելու նման իր խորքերում պատկերում և արտացոլում է մարդու կյանքը: Ուստի զարմանալի չէ այն, որ կարդալով որևէ երկրի որևէ ժամանակահատված ներկայացնող գրականության մի պատառիկ՝ կարող ես կարծիք կազմել այդ նույն երկրի տվյալ ժամանակաշրջանի մասին:

Վերոնշյալ միտքը ճշմարիտ է նաև քսաներորդ դարի սկզբի ամերիկյան գրականության պարագայում: Երկրում կատարվող ցանկացած իրադարձություն իր անմիջական ազդեցությունն է թղնում գրականության վրա ևս: Քսաներորդ դարի քսանական թվականներին դասակարգային պայքարի թեժացումը, տնտեսական ճգնաժամի բերած համընդհանուր գործազրկությունը, 1922-ի զանգվածային գործադուլը և այդ տարիներին տեղի ունեցող նմանատիպ այլ իրադարձություններ զարկ են տալիս առաջընթաց և հեղափոխական գրականությանը: Արդյունքում քննադատական ռեալիզմը, որ ճգնաժամ էր ապրել 19-րդ դարի 50-60-ական թվականների բուրժուազյան հեղափոխության հետևանքով, վերստին ծաղկում է ապրում /Гражданский, 1973: 5/: Ինչ վերաբերում է դարի առաջին կեսին բռնկված երկու համաշխարհային կործանիչ պատերազմներին, ապա դրանք հզոր նյութ և խթան են հանդիսանում երկրի գրականության համար:

Արևմտյան գրաքննադատությունը քննադատական ռեալիզմի ծագումը կապում է անգլիացի փիլիսոփա Ռոյ Բասկարի անվան հետ: Այսպես, շվեդ հասարակագետ, պրոֆեսոր Դաներմարքը և ընկերները «Քննադատական ռեալիզմը հասարակական գիտություննրում» վերնագրով իրենց ուսումնասիրությունում վստահաբար նշում են, որ «քննադատական ռեալիզմը գնալով ավելի ու ավելի է զուգորդվում բրիտանացի փիլիսոփա Ռոյ Բասկարի անվան հետ: Սա շատ տեղին է, քանզի նա այն գիտնականն է, ով քննադատական ռեալիզմին տվել է կապակցված փիլիսոփայական լեզու և զարգացրել փիլիսոփայական ավանդույթի բաժինները» /Danermark, 2002: 4/:

Այսպիսով, ճակատագրի բերումով Սինքլեր Լուիսին վիճակված էր ապրելու պատմականորեն հետաքրքիր և իրադարձություններով հարուստ մի ժամանակաշրջանում, այն է՝ քսաներորդ դարի առաջին կեսին: Սակայն այն փաստը, որ Լուիսը քննադատական ռեալիզմի տիպիկ ներկայացուցիչ էր, գրական այդ ուղղության հիմնադրներից մեկը, դեռ բավական չէ խնդրո առարկա գրողի տեղն ու դերը ամերիկյան գրականության մեջ բացահայտված համարելու համար:

Ընդհանուր առմամբ, համաշխարհային գրականությունը բարդ ու բազմաճյուղ համակարգ է, որի բաղադրիչ մասերի, այն է՝ առանձին ազգային գրականությունների և նույնիսկ անհատ գրողների միջև աղերսները սերտ են և անխուսափելի: Այդ իմաստով բացառություն չէ և Սինքլեր Լուիս – հեղինակը, ում կապն իր ժամանակակից գրողների և իր ազգի գրականության հետ, առհասարակ, պայմանավորված է նմանությունների և յուրահատկությունների այն ամբողջությամբ, որով Լուիսն առանձնանում է մյուսներից և կարևորություն ու հետաքրքրություն ներկայացնում մեզ համար:

Հիրավի, ցանկացած գրողի համար դժվար է պահել ինքնուրույն ձեռագիրն ու նկարագիրը այնպիսի պայմաններում, երբ շրջապատված է տաղանդաշատ գրողների մի իսկական աստղաբույլով: Լուիսին դա հաջողվում է: Նա ոչ միայն իր արժանի ու ինքնատիպ տեղն է հաստատում ամերիկյան գրականության մեջ, այլև ճանաչում ձեռք բերում նաև երկրի սահմաններից դուրս՝ դառնալով, առաջին ամերիկացի գրողը, որ արժանանում է Նոբելյան մրցանակի:

Բայց ո՞րն է Լուիսի ինքնատիպության բանալին: Դա պարզելու համար պետք է նախ և առաջ հասկանալ նրա գործընկեր-գրողների տեղն ու դերը ամերիկյան և, ինչու՞ չէ, նաև համաշխարհային գրականության պատմության մեջ, զուգարդել ու համեմատել նրանց և Սինքլեր Լուիսի ստեղծագործ ուղիները:

Ստեղծագործական կյանքի ընթացքում Սինքլեր Լուիսն իր ուժերը փորձեց և՛ վեպի, և՛ դրամատիկական ստեղծագործության, և՛ պատմվածքի ժանրերում: Բայց նրա մոտ առավելապես հաջողված դարձավ առաջինը: Սինքլեր Լուիսն իր ներդրումն ունեցավ հատկապես սոցիալական վեպի ժանրում՝ շարունակելով իրեն նախորդած Դրայզերի ավանդույթները և ինքն էլ օրինակ հանդիսանալով իրենից հետո եկող Սթայնբեքի համար:

Ամերիկացի պատմաբան և գրականության տեսաբան Աբրամսը իր «Գրական տերմինների բառարանում» սոցիալական վեպը սահմանում է

այսպես. «Սոցիալական վեպը շեշտում է դարի հասարակական և տնտեսական պայմանների ազդեցությունը կերպարների ձևավորման և երևույթների հստակեցման վրա. հաճախ այն նաև ներառում է ենթադրելի կամ ճշգրիտ դրույթ, որ առաջադրում է քաղաքական կամ տնտեսական բարեփոխում» /Abrams, 1999: 193/: Փաստորեն, սոցիալական վեպի ժանրը ստեղծված էր ներկայացնելու հասարակության առջև ծառայած սոցիալական որևէ խնդիր, լինի դա ռասայական, դասակարգային, թե նմանատիպ այլ տեսակի: Սոցիալական վեպում հեղինակը փորձ էր անում ոչ միայն պատկերել ու պարզաբանել ստեղծված իրավիճակը, այլև, եթե դա հնարավոր է, որևէ լուծում գտնել:

Ինչևէ, վերադառնալով Լուիսին, մեկ անգամ ևս փաստենք, որ երբ նա գրական ասպարեզ մտավ, Դրայզերն արդեն հասցրել էր գրել իր լավագույն վեպերի մեծ մասը: 1900 թվականին լույս էր տեսել «Քույր Քերին», իսկ հետագա տարիներին էլ մեկը մյուսի հետևից գրական ասպարեզ էին դուրս եկել «Ջեննի Գերհարդը», «Ֆինանսիստը», «Տիտանը», «Հանճարը» և նրա մյուս գործերը:

Ինքը՝ Սինքլեր Լուիսը, բարձր գնահատելով Դրայզերի կատարած ներդրումը թե՛ ամերիկյան գրականության մեջ, առհասարակ, և թե՛ հենց իր ստեղծագործական կյանքում՝ 1930 թվականին նշում է. «Ընթանալով իր միայնակ ուղով՝ Դրայզերը, ում, որպես կանոն, չեն հասկանում և մասամբ ատում են, ամենից շատն է արել իմ և շատ ուրիշ ամերիկյան գրողների համար՝ ազատելով ամերիկյան գրականությունը վիկտորիանյան և հուլիսյան ստրկությունից ու հպատակությունից և ուղղորդելով նրան արդար, խիզախ ու կյանքի բուռն պատկերման ուղիով» /Dreiser, 1976 : 15/: Եվ հիրավի, Դրայզերի արվեստում հանդիպում են տարրեր, որոնք հետագայում ի հայտ են գալիս և նորովի մեկնաբանվում Լուիսի մոտ ևս:

Այսպես, ներկայացնելով իր հերոսներին՝ Դրայզերը նրանցից շատերի վարքագիծն ու ճակատագիրը պայմանավորում է նրանց ծնունդ տված սոցիալական կարգերով և հասարակության մեջ արմատացած կարծրատիպերով: Ի հաստատումն ասվածի՝ մեջբերենք ռուս գրականագետ Բոգոսլովսկու հետևյալ մինքը. «Կլայդ Գրիֆիտսի կերպարը կազմավորվում է սոցիալական պայմանների ազդեցության տակ» /Богословский, 1984: 193/:

Փաստորեն, եթե մինչ «Ամերիկյան ողբերգությունը» Դրայզերն ամերիկյան հասարակության մեջ անհատի կործանման ակունքները, հասարակական ազդակներից բացի, փնտրում էր նաև տվյալ մարդու անհատականության, տրամադրվածության և, ինչու՞ չէ, գենետիկ կոդի մեջ, ապա Կլայդ Գրիֆիտսից սկսած գրողն իր ժամանակներում անհատի կործանման ամբողջ մեղքը ծանրացնում էր նրան ծնունդ տված հասարակության ուսերին:

Արժեքավոր դասեր քաղելով իր նախորդից՝ Դրայզերից, Լուիսը հետագայում այնքան էլ չի ուշացնում համանման եզրահանգման գալը: Ներկայացնելով գործարար Բեբիթին և իր մյուս կերպարներին՝ Լուիսն իրականում

ստակ մեկ անհատին և նրա առջև կանգնած խնդիրները նկատի չունի: Բերիթն իր կերպարով մարմնավորում է այն ամբողջ դասակարգը, որտեղից սերում է ինքը: Այսպիսով, անհատի խնդիրը համաժողովրդական դարձնելու և, ընդհակառակը, մի ամբողջ ժողովրդին հուզող հարցը մեկ անհատի ուսերին դնելու տեխնիկան ընդհանուր է Դրայզեր – Լուիս գույզի մոտ:

Դրայզերյան արվեստի բնորոշ գծերից է նաև փաստերի վրա հիմնված լինելը: Այլ կերպ ասած՝ «Դրայզեր – նկարչի յուրահատկություններից մեկը մանրուքների, փաստերի նկատմամբ հակվածությունն է» /Богословский, 1989: 395/: Տարիներ անց Լուիսը ևս իր ստեղծագործությունների առանցքում պետք է դնել փաստագրականը:

Սա չի նշանակում, սակայն, թե Դրայզերից հետո Լուիսը նոր խոսք չունի ասելու, թե նա ամբողջովին կրկնում է իր նախորդին: Դրայզերյան որոշ մոտեցումներ բացակայում են Լուիսի մոտ: Վերջինս էլ իր հերթին երևան է հանում ստեղծագործական մտքի այնպիսի լուծումներ, որ նորույթ էին իր ժամանակի համար:

Հենց Դրայզերի գրչին է բնորոշ ոսկու և հարստություն տենդի պախարակումը, ինչը բացակայում է Լուիսի մոտ: Ռուս գրականագետ Բատուրինի խոսքերով՝ «Դրայզերն իր վեպերով ասում է, որ հարստության ու ճոխության մասին «ամերիկյան երազանքը» ժանգ է, որ կրծում է նույնիսկ ամենատաղանդավոր և ուժեղ անհատների հոգիները, այն ահավոր կրակ է, որի բոցերում դեռ երիտասարդ ժամանակ զոհվում են անօգնական ու թույլ մարդիկ» /Dreiser, 1976: 10/: Ճիշտ է՝ թե՛ Լուիսը, և թե՛ Դրայզերը պախարակում են շքեղ կյանքի պայմաններում մարդու մեջ անհատի բացակայությունը, հասարակական կյանքին ու նրա անիմաստ պահանջներին կուրորեն ենթարկվելը, բայց միայն Դրայզերն է շեշտը դնում հենց ոսկու ու փողատենչության կործանարար հետևանքների վրա: Դրայզերի ֆինանսիստի նման Լուիսի Բերիթը ևս հասարակության սանդուղքի վերին աստիճանին է կանգնած և ոչնչի կարիք չունի: Բայց եթե Կաուպերվուդի ամբողջ ուշադրությունը գամված էր արագ հարստանալու հնարավոր եղանակներին, ապա Բերիթի համար փողը, ըստ էության, այնքան էլ կարևոր չէ: Լուիսյան հերոսի համար առավել առանցքային են իր հասարակության սահմանած նորմերին հնարավորինս համապատասխանելն ու խամաճիկի նման իրեն վատահված գործարարի կերպարը պատվով մարմնավորելը:

Դատապարտելով փողի իշխանությունը՝ Դրայզերը վեր է հանում և մեկ այլ կարևոր հիմնահարց: Դա հասարակության մեջ մարդու միայնակության խնդիրն էր: «Մարդու միայնակությունը ֆինանսական Ամերիկայում,- նշում է Բատուրինը,- նրա ամբողջ կախումը մարդկային հարաբերությունների բոլոր ոլորտներ ներխուժած փողի իշխանությունից կարելի է նկատել Դրայզերի ցանկացած ստեղծագործության մեջ» /Dreiser, 1976: 9/: Դրայզերը սիրում է նաև, ի թիվս իր անհատական հերոսների, ամբոխին կամ մարդկանց որոշակի խմբին ստեղծագործության հերոս դարձնել, մի բան, որ Սինքլեր Լուիսի մոտ չես հանդիպի:

Շարունակելով Դրայգերին՝ Սինքլեր Լուիսը դարձավ այն մարդը, ով իր թարմ խոսքը բերեց սոցիալական վեպի ժանր: Հավատարիմ մնալով ժանրի՝ արդեն խորը հիմքեր գցած սկզբունքներին՝ Լուիսը, այդուհանդերձ, կարողացավ գտնել իր ինքնատիպ և ուրույն ուղին, ինչն էլ նրան թույլ տվեց տեղ գրադեցնել քսաներորդ դարի ամերիկյան գրականության խոշոր գրողների շարքում:

Ամենից առաջ Լուիսն իր մեծ ներդրումն ունեցավ ամերիկյան անգլերենի առանձնահատկությունների վերհանման ասպարեզում: Գրողը վարպետորեն ցույց է տալիս անգլերենի այն վիճակը, որով խոսում էին քսաներորդ դարի սկզբի ԱՄՆ-ում: Դա անելու համար Սինքլեր Լուիսը դիմում է խորամանկ մի հնարի: Նա ստիպում է իր հերոսներին խոսել իրենց ժամանակի խոսվածքով: Բերքիքը դարասկզբի գործարար ամերիկացու տիպիկ կերպար է ոչ միայն նրա համար, որ մտածում և գործում է ձևավորված ստանդարտներին համապատասխան, այլև նրա համար, որ խոսում է իր շրջապատի համար ընդունելի լեզվով: Փաստորեն, մտքերից, աշխարհայացքից բացի հերոսն իր խոսքը ևս հարմարեցնում է գործարարի կերպարի կերտման գործընթացին: Եվ քանի որ Բերքիքը, ինչպես արդեն նշվեց, իր ժամանակի միջին ամերիկացու տիպիկ ներկայացուցիչ է, հետևաբար Լուիսի կարևոր ներդրումն ամերիկյան գրականության մեջ համարձակորեն կարելի է համարել մեկ կերպարի միջոցով քսաներորդ դարի սկզբի ամերիկյան անգլերենի յուրահատկությունների վերհանումը:

Սինքլեր Լուիսի կարևոր ավանդն ամերիկյան գրականության մեջ, սակայն, սոսկ լեզվի մակարդակով չի սահմանափակվում: Հեղինակը լեզվից բացի վարպետորեն ներկայացնում է նաև իր ժամանակի ազգային գիտակցությունը: Այդ նույն կարծիքին է և ռուս գրականագետ Մուլյարչիկը, որ նշում է հետևյալը. «Չուրկ չլինելով, ինչպես և Լուիսի շատ ուրիշ գործեր, լրագրային հրապարակախոսության և հոգեբանական լուծումների հայտնի ճկունության առկայությունից՝ այդ ստեղծագործությունը («Ազնվագարն Քինգզբլադը» – Ն. Չ.) այդուհանդերձ մատնացույց էր անում հետպատերազմական Ամերիկայի պայմաններում քննադատական ռեալիզմի գրականության կարևորագույն յուրահատկության կենսականությունը՝ կենտրոնացումն ազգային գիտակցության և հասարակական հարաբերությունների «ցավոտ կետերի» վրա» /Мулярчик, 1985: 266/:

Արևմտյան գրաքննադատությունը ևս մեծապես կարևորում է Սինքլեր Լուիսի գրական ներդրումն իր արվեստով ամերիկյան կենսակերպի ներկայացման գործում: Ամերիկացի հեղինակ և գրաքննադատ Կոնստանս Ռուրկն անգամ զուգահեռներ է անցկացնում Լուիսի և Դանիել Դեֆոյի միջև՝ նշելով. «Ինչ-որ իմաստով Լուիսը կարող է համարվել առաջին ամերիկացի վիպասանը: Մանրութների իր հաղթական կլանմամբ և կյանքի յուրովի ընկալմամբ նա նմանվում է Դեֆոյին: Եվ կարող է այնպես ստացվել, որ ինչպես Դեֆոն Անգլիայում, նա կապացուցի, որ մի նոր ուղի է բացել վեպի զարգացման համար» /Schorer, 1962: 31/:

Այսպիսով, Սինքլեր Լուիսի արվեստն ամերիկյան գրականության մեջ կարևորվում է նաև նրանով, որ նա՝ «պարոն Սինքլեր Լուիսը», իսկապես ամերիկյան կյանքի ու կենցաղի մեծագույն գիտակ է: Նա իր արվեստով անդրադարձել է ամենատարբեր մասնագիտության տեր ամերիկացիների՝ կամենալով ստեղծել իր ժամանակի ամերիկացու ամենաընդգրկուն պատկերը: Սա չի նշանակում, սակայն, թե Լուիսը գրել է ամենքի մասին, մի բան, որ ցանկացած գրողի համար, թերևս, անհնար կլիներ: Այդուհանդերձ, միայն այնքանով էլ, որքանով հասցրել է գրողն անդրադառնալ քսաներորդ դարի սկզբի ամերիկյան կյանքին, կարելի է վստահաբար Լուիսին դասել իր երկրի ու իր ժամանակի կենսակերպի մեծագույն գիտակների թվին:

Լուիսի կենսագրագիր Մարկ Շուրերը Սինքլեր Լուիսի իրականացրած կարևորագույն գործառնությունների և ներդրումների թվին ավելացնում է ևս մեկը՝ նշելով. «Միևնույն ժամանակ, ամերիկյան վեպը, թվում է, գրվում էր երկու խիստ հակադիր եղանակներով՝ մի կողմից, Թեոդոր Դրայզերի պես մարդու ճշացող նատուրալիզմով, մյուս կողմից՝ «Հուսիեր դայրոցի» սենտիմենտալ նրբությամբ, հատկապես Բուր Թարկլինգթոնի և Մերեդիթ Նիկոլսոնի կողմից: Լուիսի վաղ վեպերը կարևոր էին համարվում, քանզի, թվում է, լրացնում էին այդ բացը» /Schorer, 1962: 2/: Փաստորեն, ի թիվս գրականագետի, հասարակագետի, լեզվաբանի և այլ գործառնությունների՝ Լուիսն իրականացնում է նաև մի տեսակ կամրջողի գործառնություն: Նա հարթում է այն խոր անջրպետը, որ ընկած էր իրենից առաջ և հետո գտնվող սերունդների միջև:

Հատկանշական է, որ լինելով ռեալիստ գրող՝ Սինքլեր Լուիսն այնքան էլ հեռու չէր ռոմանտիկական մտածելակերպից: Դարաշրջանն ու համընդհանուր մտածելակերպը, գրական տենդենցներն ու հենց իր անհատական ոճը ստիպում էին նրան թղթին հանձնել ռեալիստական կաղապարներին համապատասխան ստեղծագործություն, բայց չէին արգելում նրան երազել ռոմանտիկների նման: Այսպիսով, Սինքլեր Լուիսը ռեալիստ էր, ով ոչ միայն չէր փնտվում և հերքում ռոմանտիկներին, այլև ինչ-որ առումով մտածում էր նրանց նման, քանզի, ինչպես ամերիկացի գրաքննադատ, գրականագետ Հարոլդ Բլումն է գրում, «Լուիսը ծնվել է իբրև ռոմանտիկ և ազատասեր գաղափարախոս» /Bloom, 1988: 7/:

Անդրադառնալով Դրայզերին՝ մենք արդեն նշեցինք, որ Լուիսի կարևոր ներդրումներից մեկն ամերիկյան գրականության մեջ դարձավ հավաքական կերպարի ստեղծման արվեստի ամրապնդումը: Ներկայացնելով մեկ հերոսին՝ գրողն իրականում նրան ծնունդ տված ողջ դասակարգը նկատի ունի: Լուիսյան հերոսներն այնքան են ստանդարտեցված, որ որոշ կերպարներ և տեղանուններ վերածվել են հասարակ անունների և դարձել ամերիկյան անգլերենի բաղկացուցիչ մասը: Այդպիսի անուններ են «բեբի» և «գլխավոր փողոց» բառերը:

Ավելորդ չենք համարում անդրադառնալ նաև լուիսյան հերոսներին իրար միացնող կապերին: Այդ կապերը տարբեր գրողների մոտ ամենատարբեր լուծումներ են ստանում: Մի դեպքում միևնույն հեղինակի կերտած կերպար-

ները կարող են իրար կապված լինել արյունակցական կապերով, մեկ այլ դեպքում՝ ընդհանուր բնակության վայրով և այլն: Որոշ գրողներ էլ կարող են բացարձակապես չմտահոգվել նման հարցերով և ստեղծել իրար հետ ընդհանրապես կապ չունեցող կերպարներ: Լուիսի մոտ այս հարցը բավականին հետաքրքիր լուծումներ է ստանում: Ստեղծելով ստանդարտացված կերպարներ՝ գրողը դրան զուգահեռ ստեղծում է նաև միանման հերոսների խմբեր, տիպաժային տարատեսակներ, ինչը միանգամայն տրամաբանական է: Այսպիսով, ինչպես վկայում է ռուս գրականագետ Գիլենսոնը՝ խոսելով լուիսյան կերպարների մասին, «այդ հերոսները կապված են միմյանց ոչ թե արյունակցական, ընտանեկան կապերով, ինչպես, ասենք, Ֆոլքների մոտ է, այլ ընդհանուր սոցիալ-դասակարգային, մասնագիտական բնութագրումներով: Լուիսի ստեղծագործություններում ձևավորվում են նրա կերպարների «դինամատիաներ», նրանց տիպագրական շարքեր (բեքիթներ, գործարար կանայք, քաղաքական գործիչներ և այլն)» /Гиленсон, 1987: 115/:

Լուիսի տարբերակիչ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ, ի տարբերություն շատուշատ այլ գրողների, նա առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերում ոչ միայն իր հերոսների նկատմամբ, այլև նրանց անունների ընտրության հարցում: Ավելորդ չի նշել նաև, որ լուիսյան վեպերի մեծ մասը կրում են այդ վեպերի գլխավոր հերոսների անունները:

Լուիսյան հետաքրքիր նորամուծություններից մեկն էլ սոցիալական վեպի ժանր դարձավ իր վեպերում հավաստիության պատրանքի ստեղծումը: Բանն այն է, որ Լուիսը սիրում է իր վեպերում կերպարների ու իրադարձությունների հավաստիության պատրանք ստեղծել: Գրական այս հնարով հեղինակին հաջողվում է ընթերցողին վստահեցնել իր գրածի իսկության մեջ՝ ստիպելով հավատալ ծավալվող իրադարձություններին ու սպասվելիք հնարավոր վտանգներին: Իրականության պատրանքի ստեղծումը, սակայն, Լուիսի մոտ մեկ հնարով չէ կատարվում: Կախված վեպից՝ հեղինակը կարողանում է որսալ ճիշտ պահն ու որևէ կերպ հասնել հեղինակային իր նպատակադրմանը:

Մինքլեր Լուիսն ամերիկյան գրականություն բերեց նաև կերպարի ու գործողությունների կառուցման մի յուրօրինակ մեթոդ: Ի տարբերություն Դրայզերի, ով իր ստեղծագործություններում գործողությունն է առաջ տանում՝ Լուիսի մոտ սյուժե և դրանից բխող գործողություններ, ըստ էության, չկան: Լուիսը, փաստորեն, սոցիալական վեպի ժանր մտցրեց մեկ հերոսի առանցքի շուրջ ստեղծագործություն կառուցելու արվեստը:

Խոսելով Լուիսի ոճի մասին՝ Գիլենսոնն ամերիկացի այդ գրողի գրական-ստեղծագործական մեթոդն անվանում է «պարզ» /Гиленсон, 1985: 14/: Եվ իրոք, Լուիսն ունի կերպարի և ընդհանուր նյութի կառուցման իր ուրույն ոճը, որը թեև պարզ է, բայց ոչ պարզունակ: Բանն այն է, որ ստեղծագործելիս հեղինակը հազվադեպ է հեռանում քննարկվող խնդրից՝ դիտարկելով այն հեռվից: Լուիսին նաև բնորոշ չէ հերոսի հիշողության ու մտածողության խորքերը թափանցելն ու գործողությունն այդ կերպ առաջ տանելը:

Հեղինակը պարզապես ամենայն մանրամասնությամբ նկարագրում է հերոսին և նրա շրջապատը, տալիս առաջին հայացքից ավելորդ թվացող մանրամասներ: Այդ նույն Գիլենսոնի խոսքերով՝ «Լուիսը, լուսանկարչի նման զինված տեսախցիկով, հստակ կադրեր է անում և այդ կադրերով ցույց տալիս ու ամբողջացնում իրերի ու երևույթների արտաքին կողմը» /Гиленсон, 1985: 14/: Այդ ամենը, սակայն, ինքնանպատակ չի արվում: Արտաքին պարզունակության տակ հեղինակային նրա նկարագրություններում թաքնված է այն միտքը, որ գրողն ուզում է արտահայտել:

Մինքլեր Լուիսը սոցիալական վեպի ժանրում ունեցավ ևս մեկ կարևոր ներդրում: Դա հրապարակախոսական տարրերի ներմուծումն էր գեղարվեստական ստեղծագործության մեջ: «Իր հայրենակիցներից շատերի նման, որոնց թվում են Ուիթմենն ու Տվենը, Դրայզերն ու Քեյնը, Հեմինգուեյն ու Շերվուդ Անդերսոնը, Սենդերգն ու Սթայնբեքը, նա պրոֆեսիոնալ գրող դառնալուց առաջ անցել է թերթա-լրագրային և խմբագրական աշխատանքի տարաբնույթ, երբեմն անկանոն դպրոց», - գրում է Գիլենսոնը /Гиленсон, 1985: 8/: Փաստորեն, Լուիսը միակ գրողը չէ, որ ունեցել է լրագրողի անցյալ: Բայց հենց Մինքլեր Լուիսը դարձավ այն հեղինակը, ով վարպետորեն օգտվելով այդ փաստից՝ ապացուցեց, որ կարելի է համադրել լրագրային և գրական- գեղարվեստական ոճերը:

Եվ վերջապես, Մինքլեր Լուիսի յուրօրինակությունն ու տարբերությունն իր նախորդ և հաջորդ շատուշատ գրողներից կայանում է նրանում, որ ամերիկացի այս գրողը, ի թիվս վերոնշյալ նորամուծությունների, իր ստեղծագործության հիմքում դրեց երգիծանքը: Միջին խավի ամերիկացու կերպարը նրա կողմից ներկայացվեց միայն իրեն բնորոշ հումորով, հատկապես՝ սատիրայով:

Մինքլեր Լուիսը ոչ առաջին գրողն էր, ոչ էլ վերջինը, որ անդրադարձավ իր ժամանակի ամերիկացու կյանքին ու կենցաղին: Ավելին, ամբողջ սոցիալական վեպի ժանրը հենց այդ խնդրի ներկայացմանն է նվիրված: Միայն թե, եթե այլ գրողներ ներկայացնում էին ամերիկացու կերպարը համակողմանիորեն, ապա Լուիսը նախընտրում էր գնալ մարդու՝ իբրև կերպարի, դասակարգային և տիպաբանական մասնատման՝ յուրաքանչյուր դեպքում ներկայացնելով այն մի նոր դիտանկյունից: Մի դեպքում լուիսյան հերոսը դառնում է համարձակ արկածախնդիր, երկրորդ դեպքում՝ բժիշկ ու գիտնական, երրորդ դեպքում՝ հայրենիքից տարագիր, չորրորդ դեպքում պարզապես հոգևորականի սքեմ է հագնում՝ դրա տակ կնքելով իր չարանենգ սրտի աշխարհիկ մեղքերը: Յուրաքանչյուր նման մանրացում թույլ է տալիս խնդրո առարկա գրողին ավելի հանգամանալից ուսումնասիրել մարդու տվյալ տեսակը, որն էլ գալիս է լրացնելու քսաներորդ դարի սկզբի ամերիկյան հասարակության համահավաք կերպարը:

Ելնելով վերոնշյալ դիտարկումներից ու դատողություններից՝ սխալված չենք լինի, թերևս, եթե նշենք, որ Մինքլեր Լուիսի հասցեին հնչեցրած ամենադիպուկ դատողություններից մեկն արել է ամերիկացի գրող և քաղաքական գործիչ Ռոբերտ Մորս Լովեթը՝ գրելով. «Պն. Մինքլեր Լուիսը,

ինչպես պն. Հ. Լ. Մենկենը, պարադոքս է այսօրվա Միացյալ Նահանգներում» /Schorer, 1962: 32/: Եվ իրոք, Լուիսը հակասությունների ամբողջություն է շատուշատ հարցերում: Լինելով երգիծանքի վարպետ՝ նա միևնույն ժամանակ աչքի էր ընկնում իր լրջությամբ՝ այնպես, որ «ոչ ոք այն զգացողությունը չուներ, թե Լուիսը երբևէ ծիծաղում է, թե նա տարօրինակ կերպով չափազանց լուրջ է ինչ – որ բանի վրա ծիծաղելու համար» /Schorer, 1962: 27/:

Ինքը՝ Սինքլեր Լուիսը, խոսելով ամերիկյան գրականության մեջ իր ունեցած դերի և ներդրումի մասին, շեշտը դնում է հենց իր կողմից հումորային տարրերի կիրառման տեխնիկայի վրա՝ ասելով. «Եթե իմ գրքերը այս պահից սկսած դեռ հիսուն տարի հետո էլ կարդացվեն, դա կլինի նրա համար, որ ես Ամերիկայի համար արել եմ այն, ինչ Գիկկենսն է արել Անգլիայի համար» /Schornhorst, 2012: 311/:

Լուիսից հետո սոցիալական վեպի ժանրը ընդունվեց և իր ուրույն ձևակերպումը ստացավ մեկ այլ ամերիկացի գրողի՝ Ջոն Սթայնբեքի կողմից: Խոսելով «Գլխավոր փողոցի» մասին՝ Մուլյարչիկը նշում է. «Քառասուն տարի անց այլ և միևնույն ժամանակ շատ բաներում զարմանալիորեն նման պատմական պայմաններում նմանատիպ դիրքորոշում է ձգտում զբաղեցնել Լուիսի կրտսեր ժամանակակից Ջոն Սթայնբեքը» /Мулярчик, 1968: 20/: Խոսքը վերջինիս «Մեր տագնապի ձմեռը» վեպի մասին է:

Սա չի նշանակում, սակայն, թե Սթայնբեքը նույնությամբ կրկնեց իր նախորդների գրական փորձն ու ներդրումը: Ուժերը փորձելով թե՛ ընդարձակ, և թե՛ փոքր պատմողական ստեղծագործություններում՝ նա, ըստ մի շարք գրաքննադատների, առավելապես հաջողվեց վիպակի ժանրում: Փաստորեն, ի տարբերություն Լուիսի, ով կերտեց ընդարձակ վեպերի մի ամբողջ շարք, Սթայնբեքը, ի թիվս իր վեպերի, երկնեց բազմաթիվ վիպակներ և հաջողվեց առավելապես այդ ժանրում:

Սթայնբեքը Լուիսից տարբերվեց նաև ռեալիստական ստեղծագործություններում ժամանակ առ ժամանակ առասպելական կամ ֆանտաստիկ տարրերի ներմուծմամբ: Սթայնբեքի կենսագրագիր Բենսոնի խոսքերով՝ «նրա արձակի մեծ մասն իրական տեսք ունի, բայց նա այն գրողը չէր, որ կարծում էր, թե ռեալիզմն ինքն իրենով որևէ հատուկ արժանիք ունի, այլ որ այն հաճախ ավելի քիչ է ունակ ճշմարտությունը հաղորդելու, քան առասպելականը կամ ֆանտաստիկը» /Benson, 1990: 5/:

Եթե Սինքլեր Լուիսի ստեղծագործություններում հանդիպում էին հասարակական գույգ բևեռներն էլ, այն է՝ չարն ու բարին, դրականն ու բացասականը, ապա Ջոն Սթայնբեքը նախընտրեց առավելապես հասարակ ու կեղեքված մարդկանց ճակատագրի պատկերմամբ ի ցույց դնել քսաներորդ դարի առաջին կեսի ամերիկյան իրականության մութ կողմերը: Միևնույն կարծիքին է և ամերիկացի գրականագետ, փիլիսոփա Ստեֆան Ջորջը, ով նշում է. «Կարճ ասած՝ «Ցասման պտուղների» բարոյական հաղորդագրությունը զորացվում է հասարակ, պարկեշտ մարդկանց մեծահոգության բազմաթիվ դրսևորումներով» /George, 2005: 11/: Սթայնբեքի արվեստով հե-

տաքրքրվող մեկ այլ ամերիկացի գրականագետ՝ Պատրիկ Դուլին, մեծահոգության կողքին սթայնբեքյան հերոսների մեջ տեսնում է մեկ այլ կարևոր մարդկային արժանիք: Դա անսպառ կարեկցանքն է մարդու հանդեպ: Նրա պնդմամբ՝ «զարմանալիորեն, մինչ մեծահոգությունը նշվում է իբրև դասական արժանիք, կարեկցանքը սովորաբար փայլատակում է իբրև ակունք Սթայնբեքի բարոյական սխեմայում, մասնավորապես երբ այն վերաբերում է արդարությանը» /Hart, 1983: 1/:

Սթայնբեքն իր նախորդից՝ Սինքլեր Լուիսից, տարբերվեց նաև նրանով, որ իր կերպարներին տվեց հոգեբանական խորություն: Եթե Լուիսը շեշտը դնում էր կերպարի կառուցման հումորային մեթոդի վրա, որին գումարվում էր փաստագրական հարուստ նյութ, ապա սթայնբեքյան կերպարներն առանձնանում էին իրավիճակի խորը գիտակցմամբ և վերապրումով:

Սթայնբեքն իր նախորդներից առանձնացավ նաև մարդ – բնություն փոխհարաբերությունների ուրույն անդրադարձով և մեկնաբանմամբ: Ինչպես նշում է Սթեվեն Կելմանը՝ «Կարմիր պոնին» վիպակի սկզբունքային թեման մարդու և բնության բազմակողմանի հարաբերությունների բացատրությունն է, ինչը ներկայացված է Ջոդիի կրթությամբ: Սթայնբեքի համար ամբողջ բնությունը, ներառյալ մարդը, փոխկապակցված է» /Kellman, 2000: 2079/: Եվ իսկապես, բնության հրաշագործ և անկոտրում ուժի նկատմամբ սթայնբեքյան հավատն այն նորույթներից մեկն էր, որ առանձնացրեց նրան սոցիալական վեպի ժանրում ստեղծագործող մյուս գրողներից: Մարդը, ըստ Սթայնբեքի, որքան էլ խելացի և գորեղ լինի, եղել է և կմնա չնչին և աննշան բնության ուժի համեմատությամբ: Իբրև բնության մի մասնիկը՝ սթայնբեքյան հերոսը կարող է հաղթանակի հասնել կամ, ավելի ճիշտ, չպարտվել բնության հետ պայքարում սոսկ նրա հետ համընթաց քայլելու և բնության չգրված օրենքներին հպատակվելու պարագայում: Հակառակ դեպքում մարդ – բնություն անհավասար պայքարը կավարտվի մարդու անխուսափելի պարտությամբ:

Այսպիսով, ամերիկյան սոցիալական վեպի ժանրում Լուիսին նախորդել էր Թեոդոր Դրայզերը, ով իր ստեղծագործություններով դրեց սոցիալական վեպի ժանրի ամուր հիմքերը: Դրայզերյան վեպերն ու պատմվածքները դարձան ժամանակի լավագույն ցուցիչներն ու մեկնաբանները՝ ճշմարիտ պատասխաններ տալով հասարակությանը հուզող շատուշատ հարցերի: Արժեքավոր դասեր քաղելով Դրայզերից՝ Լուիսը, այդուհանդերձ, ամերիկյան գրականություն մտավ իր ուրույն գրելատճով ու աշխարհայացքով: Դրայզերի օրինակն աչքի առաջ ունենալով՝ Սինքլեր Լուիսին հաջողվեց գտնել իր ուրույն ստեղծագործական ուղին, ժամանակի խնդիրներին անդրադարձի այն դիտանկյունը, որով նա դարձավ առանձնահատուկ և տարբերվող իր ժամանակակից և ոչ ժամանակակից մյուս գրողներից: Սինքլեր Լուիսից հետո գրական ասպարեզ մտավ Ջոն Սթայնբեքը, ով, գրելով մի շարք հաջողված վեպեր, այդուհանդերձ, իրեն գտավ վիպակի ժանրում, որով էլ տարբերվեց իր նախորդներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Abrams M. H. A Glossary of Literary Terms. United States: Heinle & Heinle, 1999.
2. Benson J. J. (ed.) The Short Novels of John Steinbeck. Durham and London: Duke University Press, 1990.
3. Bloom H. Sinclair Lewis's Arrowsmith. New York: Chelsea House Publishers, 1988.
4. Danermark B. et al. Explaining Society: Critical realism in the social sciences. London and New York, 2002.
5. Dreiser Th. Life, Art and America. Moscow: Progress Publishers, 1976.
6. George S. K. (ed.) The moral philosophy of John Steinbeck. The USA: Scarecrow Press, 2005.
7. Hart J. D. (ed.) The Oxford Companion to American Literature. New York. Oxford: Oxford University Press, 1983.
8. Kellman S. G. (ed.) Masterplots II. Pasadena, California: Salem Press, 2000.
9. Schorer M. (ed.) Sinclair Lewis: A collection of critical essays. N. J.: Englwood Cliffs, 1962.
10. Schornhorst G., Hofer M. (eds.) Sinclair Lewis Remembered. The USA: The University of Alabama Press, 2012.
11. Гражданский З. Т. Зарубежная литература XX века. Москва: Просвещение, 1973.
12. Гиленсон Б. А. В поисках «другой Америки». Москва: Худож. лит., 1987.
13. Гиленсон Б. А. Синклер Льюис (100 лет со дня рождения). Москва: Знание, 1985.
14. Богословский В. Н., Гражданский З. Т. (ред.) История зарубежной литературы XX века: 1871-1917. Москва: Просвещение, 1989.
15. Богословский В. Н., Гражданский З. Т. (ред.) История зарубежной литературы XX века: 1917-1945. Москва: Просвещение, 1984.
16. Мулярчик А. С. Спор идет о человеке. Москва: Советский писатель, 1985.
17. Мулярчик А. С. Американский роман в 20-е годы XX века. Москва: Изд. МГУ, 1968.

Н. ЗАКАРЯН – Жанр американского социального романа и Синклер Льюис. – В статье исследуется американская литература начала двадцатого века. Рассматриваются процветающее в эти годы направление критического реализма и жанр социального романа. Статья построена на сравнении творчества трех авторов – Теодора Драйзера, Джона Стейнбека и Синклера Льюиса. Как обозначено в заглавии статьи, в центре внимания настоящего исследования творчество Синклера Льюиса.

Ключевые слова: литература двадцатого века, критический реализм, социальный роман, американский социальный роман, отличительная черта, уникальный стиль

N. ZAKARYAN – *The American Social Novel and Sinclair Lewis.* – The paper is devoted to the American literature at the beginning of the 20th century. The trend of critical realism and the genre of social novel are studied here. The paper is organized on the basis of comparison between the three authors – Theodore Dreiser, John Steinbeck and Sinclair Lewis. The latter is always in the centre of the analysis as highlighted in the title.

Key words: literature of the 20th century, critical realism, social novel, American social novel, differentiating feature, unique style

Անահիտ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԽՂՈՒ ԽԱՅԹԻ ՊՐՈՒԼԵՄԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՍԵԹՈՂԸ
«ԱՄԵՐԻԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ ԿՈՒՐՏ
ՎՈՆԵԳՈՒՏԻ «ԱՍՏՎԱԾ ՉԵՉ ԱՌՈՂՁՈՒԹՅՈՒՆ ՏԱ,
ՊՐՆ. ՌՈՉՈՒՈՒԹԵՐ» ՎԵՊՈՒՄ

Կուրտ Վոնեգուտի այս վեպի հերոսը մի մարդ է, ով վատատեսական տրամադրվածություն ունի «ամերիկյան երազանք» գաղափարի և առհասարակ Ամերիկայի ապագայի նկատմամբ: Այս հոդվածով փորձ ենք արել բացահայտելու, թե ինչու են համընդհանուր ընդունված արժեքները հակասում հերոսի բարոյական արժեհամակարգին ու սկզբունքներին: Պատճառահետևանքային հետադարձ կապով բացահայտել ենք հերոսի վարքագծի, կարեկցանքի ու սիրո անօրինաչափ դրսևորումների բուն շարժառիթը: Էլիոթը դեռևս պատերազմի տարիներին է կորցրել իր հոգեկան անդորրը. պատերազմ, ինչն ըստ հեղինակի չարիք է, համամարդկային աղետ և կորուստների պատճառ: Էլիոթը այսպիսով փորձում է վճարել իր և իր նախնիների սխալների համար:

Բանալի բառեր. «ամերիկյան երազանք», մարդասիրություն, խղճի խայթ, արժեհամակարգ, արժեքներ, պատերազմ, չարիք, խեղաթյուրված, հիշողություններ, կորուստ, ինքնասպանություն, գումար, մեղք, սեր, կարեկցանք

Այս հոդվածով փորձ է արված ուսանողին օգնել բացահայտելու վոնեգուտյան հերոսի վատատեսական տրամադրվածության պատճառն արդի արժեհամակարգի և Ամերիկայի հեռանկարի նկատմամբ:

20-րդ դարի ամերիկացի մի շարք գրողներ անդրադարձել են «ամերիկյան երազանք» հասկացությանը քննադատական տեսանկյունից: Նրանց ստեղծագործություններում մարդը ներկայացվում է որպես «ամերիկյան երազանքի» մի գոհ, որի իրականացման ճանապարհին մարդկային խիղճը հաճախ հանդիսանում է թիրախ: Այդ հասկացությունն իրենց վեպերում տարբեր տեսանկյուններից դիտարկել են Թեոդոր Դրայզերը, Ֆրենսիս Սքոտ Ֆիցջեյրալդը, Ջոն Սթայնբեքը, Թոմաս Վուլֆը և շատ ուրիշներ:

1. Փորձենք սահմանել, թե ինչ է իրենից ներկայացնում «ամերիկյան երազանքը» 20-րդ դարի ամերիկյան վիպասան, արձակագիր Կուրտ Վոնեգուտի տեսանկյունից:

Վոնեգուտյան վեպերում կարելի է տեսնել, թե ինչպես «ամերիկյան երազանք» գաղափարի թյուրըմբռնումը խաղասեղանի վրա է դնում մարդկային առաքինությունն ու պարկեշտությունը: Նրա «Աստված ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուոթեր» վեպում հանդիպում ենք հետևյալ արտահայտությանը. «Ամերիկյան երազանքը շրջված ստամոքսն ի վեր, կանաչեց՝ թեքված դեպի անսահման ազահության փրփրակալած մակերեսը, գազով լցված, պայթեց միջօրեին»: (Vonnegut, Jr., Kurt (1965). *God Bless You, Mr. Rosewater*. Holt,

Rinehart and Winston. “The American dream turned belly up, turned green, bobbed to the scummy surface of cupidity unlimited, filled with gas, went bang in the noonday sun”)

Այս վեպում արտացոլված են 20-րդ դարի ամերիկյան քաղաքացու խղճի տարատեսակ դրսևորումները: Հետպատերազմյան Ամերիկայի քաղաքացին ծառանում է ընթերցողի առջև իր խաթարված էությանը՝ ապրելով խաթարված արժեհամակարգում: Նույն ժամանակահատվածում ստեղծագործող ամերիկացի մեկ այլ գրող՝ Ջոն Սթայնբեքի ստեղծագործություններում տեսնում ենք միևնույն խնդիրների արծարծում, որոնց դիտարկման տեսանկյունը բավական մոտ է նրա գրչընկեր Կուրտ Վոնեգուտի մտածելակերպին: Սթայնբեքի վեպերում առկա է «ամերիկյան երազանքի» նմանատիպ դիտարկում՝ որպես մարդկանց մոլորեցման մի պատճառ, ինչը ի վերջո հանգեցնում է մարդկային արժեհամակարգի աղճատմանը: Սակայն, եթե, օրինակ, «Մեր հոգսերի ձմեռը» վեպի հերոս Իտեն Ալլեն Հոուլին փորձում է պայքարել այդ խաթարված հասարակության արժեհամակարգի դեմ՝ չընդունելով նրա պայմանները բոլորից հնարավորինս հեռու մնալու միջոցով, ապա «Աստված ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուոթերե վեպի հերոս Էլիոթ Ռոզուոթերը փորձում է հարցին լուծում տալ ներսից՝ ամբողջությամբ ընկղմվելով առաջադրված խնդիրների մեջ:

Թերևս Էլիոթ Ռոզուոթերը քաջ գիտակցում է, որ հասարակությունը հիվանդ է մեծից մինչև փոքր, աղքատից մինչև հարուստ, սակայն, միևնույնն է, **շարունակում է սեր և կարեկցանք բաշխել անխտիր բոլորին՝ փորձելով լռեցնել իրեն տանջող խղճի ձայնը:** Նա շարունակում է շահագործել իր մարդասիրության պաշարները՝ ձգտելով օրինակ ծառայել մյուսների համար: Իր կյանքը զոհաբերելով այդ հասարակության ցածր խավի կարիքների բավարարմանը՝ նա այդպես փորձում է առաջարկել մի ուտոպիստական լուծում ամերիկյան ժամանակակից չարիքների՝ խաբեության, փողամոլության, անբարոյականության, ազահության դեմ՝ ինքն էլ գիտակցելով, որ **այնուամենայնիվ ի գորու չէ ոչինչ փոխելու, որ չարիքը հաճախ ծնվում է հենց այդ մարդկանցից, որ իր արարքը արդյունքում չի գնահատվելու:** Կարծես հերոսը հայտնվում է մի անլուծելի պարադոքսալ իրավիճակում: Իզուր չէ, որ վեպի ամբողջական վերնագրի մեջ ակնարկվում է «Նոր Կտակարանից» մի հայտնի հորդոր, որը պարունակում է երկիմաստ նախազգուշացում. «Մի՛ տվեք սրբությունը շներին. և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չանեն և դառնալով ձեզ չպատառոտեն»: (Նոր Կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, «Մի՛ դատիր», Է: 6) Նշենք, որ վեպի ամբողջական վերնագիրը հետևյալն է՝ **«Աստված ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուոթեր, կամ մարգարիտներ խոզերի առջև»:** (God Bless You, Mr. Rosewater; or, Pearls before Swine – **Vonnegut, Kurt.** Published by Jonathan Cape, London 1965)

Ահա և Էլիոթի գործողությունների անհեթեթության ակնարկը թվում է, թե նա գոնե բարիք է գործում հանուն զուտ բարիքի, սակայն դա այդպես չէ:

2. Եթե վոնեգուտյան հերոսը գիտակցում է իր ընտրության անհեթեթությունը, ապա անհրաժեշտություն է առաջանում հասկանալ, թե որն է նրա մարդասիրական գործողությունների բուն դրդապատճառը:

Այս հարցին ճիշտ մեկնաբանություն տալու համար անհրաժեշտ է անդրադառնալ կրտսեր Ռոզուտերի անցյալի հիշողություններին և հատկապես առանձնացնել պատերազմի մասին պատմող տեսարանները: Պատերազմի ժամանակ առերեսելով անողորմ մահը՝ Էլիոթը գիտակցում է, որ բոլորն են հավասար մահվան առջև: Նա փորձում է ընթանալ գետի հոսանքին հակառակ՝ կոտրելով սահմանված կարծրատիպերը, որոնք մարդուն բաժանում են մարդուց: Իր անխտրական մարդասիրությամբ Էլիոթը հույս ունի, որ կփոխի ինչ-որ մի բան՝ գուցե օրինակ դառնա նրանց համար, ովքեր իշխանություն ունեն մյուսների վրա: Նշենք, որ, Էլիոթի մարդասիրական առաջընթացի տեսանկյունը լիովին տարբերվում է կյանքի ստորոտում հայտնված մարդկանց մասին իր հոր կարծիքից: **Սա նորի ու հնի, սերունդների միջև եղած տեսակետների այն մշտնջենական բախումն է, որը խանգարում է հասարակության առաջընթացին:**

Ակնհայտորեն մարդկանց օգնելը այն միակ կյանքի իմաստն է, որը ստիպում է նրան շարունակել ապրել: Պետք է հասկանալ, թե ինչից և ինչպես ծագեց Էլիոթ Ռոզուտերի հոգեկան դատարկությունը: Հետադարձ հայացք ձգելով Էլիոթի անցյալի վրա և ուսումնասիրելով նրա հիշողությունների պատառիկները՝ հասկանում ենք, որ նա այդ կերպ վարվելով փորձում է հատուցել անցյալում իր կատարած մեղքի, մարդասպանության համար: **Պատերազմն է իր անջնջելի դրոշմը դրել Էլիոթի կյանքի վրա, այժմ նա կորուսյալ սերնդից մեկն է, ով այլևս ի գորու չէ վերադառնալ նախկին կյանքին:** Էլիոթը շատ լավ գիտակցում է, որ փորձում է օգնել խաբեբաների և ավազակների, որ ինչ էլ անի կամ չանի, այդպիսիք միշտ էլ ապրելու և բազմանալու են երկրի երեսին, սակայն նա իր պարտքն էր համարում վերադարձնել նրանց կորցրած երազանքի գոնե մի մասը: **Պատերազմի ժամանակ սպանելով տասնչորսամյա երիտասարդին՝ նա այդպես էլ չի վերագտնում իր հոգեկան անդորրը:** Իսկ ինչքան երազանքներ դեռ ուներ այդ երիտասարդը... Էլիոթն այդ դեպքից հետո պարզապես հետաձգում է իր ինքնասպանությունը: Չմոռանանք այն չհաջողված ինքնասպանության փորձը, որը անմիջապես հետևեց իր ճակատագրական դարձած հերոսական մղմանը: Հեղինակն առաջարկում է մտածել, թե ինչ է իրենից ներկայացնում այդ հերոսությունը. իհարկե՝ նորից սպանություն, պարզապես թիրախը պետք է լինեին այլ մարդիկ, որպեսզի պատերազմն օրինականացներ այն ու պարզևատրեր մարդասպանին: Հերոսության միանման «բացահայտում» տեսնում ենք նաև «Մեր հոգսերի ձմեռում», որտեղ գրքի հերոսն այն կոչում է իր իրական անունով՝ **մարդասպանություն:**

3. Որո՞նք են հեղինակին հուզող հիմնական խնդիրները, որոնք արտացոլված են այս վեպում:

2003 թվականին, Կուրտ Վոնեգուտը երրորդ Հումանիստական մանիֆեստի («*Humanism and Its Aspirations*», *Humanist Manifesto III*) հիմնադիրներից մեկն էր: Նա մարդասիրությունը համարում էր ազատ մտածողության ժամանակակից մի ձև, ինչը արտահայտվել է նրա տարբեր գրվածքներում, ելույթներում և հարցազրույցներում: Նա իր գործունեությամբ կապված էր հումանիստական կազմակերպված շարժման հետ, «մարդասիրության դափնեկիր» էր: 1992 թվականին Ամերիկյան հումանիստների կազմակերպությունը /ԱՀԿ/ նրան անվանեց տարվա մարդասեր: Այս կազմակերպության անդամներին ուղղված իր նամակում նա գրում է. "I am a humanist, which means, in part, that I have tried to behave decently without expectations of rewards or punishments after I am dead." (Humanist President, Kurt Vonnegut, Mourned American Humanists Association Press Release, April 12, 2007, թարգմ. «Ես մարդասեր եմ, ինչը մասամբ նշանակում է, որ ես աշխատել եմ քաղաքավարի լինել առանց հետմահու պարգևատրումների կամ պատիժների ակնկալիքների»)

Հեղինակը «Աստված ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուտեր» վեպում ամերիկյան արժեհամակարգի խարխվման կոնտեքստում արժարժում է ևս մի խնդիր՝ **մարդու ռեալիզացման խնդիրը**: Այտեղ ներկայացված հարուստ մի շարք ընտանիքների ժառանգներից և ոչ մեկը երջանիկ չէ, նրանք կարծես ինչ-որ բանից խորապես հիասթափվել են, կորցրել իրենց կյանքի իմաստը՝ հայտնվելով նույնիսկ ինքնասպանության շեմին: Պատճառն այն է, որ **այս մարդիկ խորապես գիտակցում են, որ իրենք չեն վաստակել այն գումարները, որ այսօր վայելում են, և մյուսների համեմատությամբ իրենց առավելությունը թվացյալ է, նրանք ապրելու համար ոչինչ չեն անում, պարզապես գոյատևում են**: Վեպում հանգամանորեն պատմվում է, թե ինչպես են այդ ժառանգների նախնիները ժամանակին չարաշահել մյուսների վատահոլությունը և հասել հարստության: 20-րդ դարի ամերիկացի շատ հեղինակների, ինչպես, օրինակ, հենց Ջոն Սթայնբեքի ստեղծագործություններում («Դրախտից արևելք», «Մեր հոգսերի ձմեռը», «Յասման ողկույզներ» և այլն) նույնպես բազմիցս կարելի է հանդիպել այն մտքին, որ հսկայական կարողությունները հենց այնպես չեն ստեղծվում: Դրանք ժամանակին ինչ-որ մութ գործի, ինչ-որ մեկին վնասելու արդյունք են: **Վոնեգուտը այս վեպում բացահայտում է ամերիկյան երազանքի «փտած հիմքը»**՝ ընթերցողին ներկայացնելով Նոյ Ռոզուտերի խաբեությանը հարստություն դիզելու պատմությունը, ով պատրաստ էր նույնիսկ իր հարազատ եղբորից խլել նրա հասանելիք ժառանգությունը: Հեղինակն ակնարկում է, որ այդ ճանապարհով դիզված հարստությունը երբեք չի կարող սերունդներին ի բարօրություն ծառայել, կգա մի օր, և այն ըստ արժանվույն կգտնի իր իսկական տերերին. Դրանք ամերիկացիներն են, ովքեր ոչ մի բանով վատը չեն և թերևս և ոչ էլ լավն են Ռոզուտերներից կամ Ռոկֆելլերներից: Գրքի շատ հատվածներում Վոնեգուտը պարզ կերպով տալիս է իրեն անհանգստացնող թեմաների նկարագիրը, անդրադառնում այնպիսի հարցերի, ինչպիսիք են **ռասիզմն ու անհավասարությունը** Ամերիկայում:

4. Ո՞րն է մարդկանց հիմնական շարժառիթն ու խթանը, նաև՝ «Ամերիկյան երազանքի» խորհրդանիշը վեպում:

Վստահորեն կարելի է ասել, որ **գլխավոր կերպարը այս վեպում փողոն է**, այն ներկայացվում է որպես հակամարդասիրական մի միջոց, մի ուժ, ինչպիսին դրա կրողներն են՝ Ռոզուտթերներն ու Ռոկֆելլերները, չնայած ակնհայտ է, որ գրեթե ցանկացած մարդու այն կարող է փոխել դեպի վատը, դրդել անմարդկային արարքների: Այդպիսին է «ամերիկյան երազանքի» ձգտողների ասպազան, ովքեր չեն կարողանում իրատեսորեն ընկալել իրավիճակն ու ըստ արժանվույն գնահատել իրենց կարողություններն ու հնարավորությունները:

«Ամերիկյան երազանք» տերմինն առաջին անգամ կիրառել է ամերիկացի պատմաբան Ջեյմս Թրուսլոու Ադամսը իր 1931 թ. Հրատարակված «Ամերիկայի դյուցազներգությունը» գրքում՝ նկարագրելով Ամերիկայում գոյություն ունեցող բարդ համոզմունքները, կրոնական խոստումներն ու քաղաքական-սոցիալական ակնկալիքները: Իր աշխատության մեջ նա սահմանում է, թե ինչ է իրենից ներկայացնում «ամերիկյան երազանքը», և շեշտում է, որ այն պարզապես հարստության կամ նյութական առատության ձգտումը չէ, այլ ինքնակայացման մի հեռանկար է: Ցավոք, ինչպես պատկերված է վեպում, սոցիալ-տնտեսական իրականությունը թույլ չի տալիս շատ ամերիկացիների հասնելու իրենց երջանկությանը, ինչի իրավունքը նրանք բոլորն էլ ունեն, ինչպես նշված է ԱՄՆ-ի անկախության դեկլարացիայում (The Declaration of Independence: A Transcription. “The unanimous Declaration of the thirteen united States of America”, IN CONGRESS, July 4, 1776. “We hold these truths to be self-evident, that all men are created equal, that they are endowed by their Creator with certain unalienable Rights, that among these are Life, Liberty and the pursuit of Happiness”):

5. Վեպի գլխավոր հերոսի նախատիպը:

Նշենք, որ վեպում ներկայացված հերոսի ընկճախտը ունի ինքնակենսագրական հիմքեր: Այդտեղ ներկայացված հերոսի վերապրումները իրական են եղել հեղինակի համար. թե՛ մեղքի զգացողությունից տառապող Էլիոթը, թե՛ ինքնասպանության մասին մտածող Ֆրեդը, թե՛ միայն ճիշտը պատմող Թրատթը՝ երեքն էլ հեղինակի ես-ի տարբեր դրսևորումներն են, կյանքի խնդիրներին տարբեր տեսանկյունից դիտող ամերիկացիների նախատիպեր, ովքեր չգիտեն, թե ինչպես ինքնառեալիզացվեն ամերիկյան արդի հակամարդասիրական պայմաններում: **Էլիոթի տառապանքի հիմնական պատճառը սեփական մեղքի գիտակցումն է**, ինչը նա տարածում է նաև իր նախնիների վրա, կարծես մեղադրում նրանց այսօրվա Ամերիկայի համար: Վեպում հնչում է մի կարծիք. խղճի խայթը «չարիք» է, ինչից պետք է ձերբազատվել: Օրինակ՝ հերթական ժառանգ Սթյուարթ Բանթլայնը ևս տառապում էր այդ հիվանդությունից: Երիտասարդ տարիքում գիտակցելով, որ ինքը ժառանգել է մեծ գումար և հասկանալով, որ այդքան գումար իրեն հարկավոր չէ, որոշում է

մարդասիրաբար տնօրինել այն, սակայն, «աչալուրջ» փաստաբանը ժամանակին «կանխում» է խղճի այդ դրսևորումը:

6. Որո՞նք են հեղինակի առաջարկած լուծումները, ո՞րն է հասարակության «բուժման» տարբերակը:

Անհրաժեշտ է, մի նոր բարեփոխված «ամերիկյան երազանք», որը կշեշտադրի ոչ նյութական արժեքների կարևորությունը: Սրան են ձգտում վոնեգուտյան շատ հերոսներ: Մինչև վերջ վեպի հերոսը՝ Էլիոթ Ռոզուոթերը, հույս է տածում, որ վստահությամբ ու սիրով պատասխանելով Ռոզուոթեր քաղաքի բնակիչների հերթական ստին ու ստոր արարքին՝ կարող է ինչ որ բան փոխել: Գուցե կարող է: Կիլգոր Թրաուֆի շուրթերով խոսում է հեղինակը՝ ասելով, որ անկեղծ սերն ու կարեկցանքը կփրկեն բոլորին, դրա կարիքն ունեն մարդիկ: Մինչ այս վերջին եզրակացությունը այն խղճի զգացողությունը, որ արթնացել էր Էլիոթի մեջ, բոլորի կողմից դիտարկվում էր որպես հիվանդություն, վարակ, ինչը հարկավոր էր բուժել. դա մի հիվանդություն է, որը ծագում է հսկայական կարողություն ժառանգած երիտասարդների մոտ, ում խիղճը դեռ արթուն է, և ովքեր քաջ գիտակցում են, որ ժառանգել են շատ ավելին, քան կարող են ծախսել իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Այդ հիվանդության բուժման մի քանի եղանակ կա, սակայն երբ այն արդեն խորացել է, մնում է միայն մի վերջին հանգրվան՝ հոգեբուժարանը: Եվ Էլիոթը քաջ գիտակցում է այդ մասին, նա գիտի, թե որն է փոխհատուցման արժեքը: Իսկ իրական հերոսներն ըստ Էլիոթի, հրշեջներն են, ովքեր նետվում են կրակների մեջ՝ փրկելու մարդկային կյանքեր՝ առանց խտրականության: Այդ կրակների միջոցով է, որ հերոսը ապարդյուն փորձում է մաքրվել իր մեղքից, ուզում լռեցնել իր խղճի ձայնը աշխատելով նաև որպես հրշեջ. հուրն է, որ պիտի լափիլզի մեղքը, մեղսավորներին, ...ամբողջ Ինդիանապոլիսը.

-Ավտոբուսի աթոռից վեր բարձրանալով՝ Էլիոթը դիտում էր Ինդիանապոլիսը լափող կրակի տարափը...Նրա ներսում վառվող կարմիր մոխրե մանր կտորները հաղթանակած ու սահուն պտտվում էին կուրացնող-սպիտակ հիմքի շուրջ (Vonnegut, Jr., Kurt (1965). *God Bless You, Mr. Rosewater*. Published by Holt, Rinehart New York, 1965):

Ամփոփելով նշենք, որ թեև մեղքի գիտակցումն է, որը ստիպում է Էլիոթին իր արարքներով տարբերվել ուրիշներից, ձգտել սոցիալական հավասարության, այնուամենայնիվ ոչ բոլորին է դա տրված: Էլիոթը հասկանում է, որ Ռոզուոթեր քաղաքի բնակիչները բոլորն էլ ժամանակին ինչ-որ կերպ մասնակցել են իր նախահայր Նոյի հարստության ստեղծման գործընթացին, ուրեմն արդարացիորեն պիտի կիսեն այդ հարստությունը: Վեպի վերջում այս որոշումը ներկայանում է որպես լիակատար հաղթանակ «ամերիկյան երազանքի» մոլուցքի նկատմամբ, երազանք, որը խեղաթյուրում է մարդկային արժեքները՝ ստիպելով թալանել, ստել, կործանել:

Կիլգոր Թրաուֆի հետևյալ խոսքերը ամերիկյան հասարակության փրկության Վոնեգուտյան բանալին են.

-...*Էլիոթ Ռոզուտերի օրինակի շնորհիվ միլիոնավորներ գուցե կտվորեն սիրել մերձավորներին, օգնել բոլորին, ովքեր այնքան զգում են այդ օգնության կարիքը* (Vonnegut, Jr., Kurt (1965). *God Bless You, Mr. Rosewater*. Published by Holt, Rinehart New York, 1965):

Նշենք նաև, որ **Էլիոթի արարքով վեպում բացահայտվում է առաքինության, խղճի արթնացման ժառանգականության թեման**։ Էլիոթն այդ վեհ գիծը ժառանգել էր իր նախնի, պատերազմի վետերան Նոյ Ռոզուտերի եղբայր Ջորջ Ռոզուտերից, ով լինելով լիիրավ ժառանգորդ հրաժարվեց պայքարել հարստության համար՝ թողնելով ամեն ինչ եղբորը, կամ գուցե՝ այն վաղեմի նախահայր Ջոն Գրեհեմից, ով սերում էր հարուստ անգլիական արիստոկրատ ընտանիքից, սակայն իր գաղափարների համար թողեց ամեն ինչ, նույնիսկ՝ հայրենի Անգլիան և սկսեց մի նոր կյանք։

Արյունը ջուր չի դառնում, մի օր այն խոսում է: Ուրեմն դեռ հույս կա վերականգնելու մարդկային արժեհամակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Vonnegut Jr. K. *God Bless You, Mr. Rosewater*. New York: Holt, Rinehart and Winston, 1965.
2. Նոր Կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, «Մի դասիր», է : 6:
3. Vonnegut Jr. K. *God Bless You, Mr. Rosewater; or, Pearls before Swine*. London: Published by Jonathan Cape, 1965.
4. Vonnegut Jr. K. *Humanism and Its Aspirations // Humanist Manifesto III*, 2003.
5. Vonnegut K. *Mourned American Humanists Association Press Release* 04.12, 2007.
6. *The Declaration of Independence: A Transcription*. “The unanimous Declaration of the thirteen united States of America”, IN CONGRESS, July 4, 1776.

А. ШАХМУРАДЯН – Методика раскрытия проблемы угрызения совести в контексте «американской мечты» в романе Курта Воннегута «Дай вам бог здоровья, мистер Розуотер». – Герой романа Элиот Розуотер превращается в человека, скептически настроенного против «Американской мечты» и будущего Америки. В статье автор пытается выяснить, почему общепринятые человеческие ценности противоречат моральным ценностям и принципам героя. Путем ретроспективного анализа причин и последствий, выясняется истинная мотивация поведения героя, проявления его сочувствия и любви к окружающим.

Ключевые слова: «Американская мечта», раскаяние, система ценностей, война, зло, искаженная психика, воспоминания, потеря, самоубийство, деньги, грех, любовь, сочувствие

A. SHAHMURADYAN – *The Method of Revealing the Problem of Remorse in the Context of the “American Dream” in “God Bless You, Mr. Rosewater, or Pearls before Swine” by Kurt Vonnegut.* – In the novel “God Bless You, Mr. Rosewater” the protagonist turns into a person skeptically predetermined for the “American Dream” and the future of America. In this paper, an attempt is made to reveal the reason why the moral values and principles of the protagonist are to collide with the generally accepted system of values. By means of a retrospective study of cause and consequences, we try to reveal the real motivation of Eliot’s behavior, the unprecedented expiration of love and compassion towards others.

Key words: “American Dream”, humanism, remorse, values, consequences, war, evil, distorted psychic condition, memories, loss, suicide, money, sin, love, compassion

Արշալույս ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԻՆ Վ. ՍԱՐՈՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Գրական ասպարեզ իջնելով անցյալ դարի 30-ական թվականներին՝ Վիլյամ Սարոյանը նոր և յուրօրինակ մոտեցում դրսևորեց իր ժամանակի ամերիկյան իրականությունն ու առհասարակ մարդու ներաշխարհը բացահայտելու գործում: Խիստ անձնական կամ մանրուք թվացող շեշտերի միջոցով նա կարողանում է հասնել նշանակալի ընդհանրացումների: Սարոյանի ստեղծագործության մեջ տարբեր ժանրերը ժամանակագրական իմաստով խիստ սահմանազատված չեն, սակայն միշտ առկա է ինքնակենսագրական տարրը թե՛ միջնորդավորված և թե՛ ակնհայտ, թափանցիկ ձևով: Որպես բնորոշ օրինակ դիտարկվում է «Իմ անունը Արամ է» ժողովածուն: Ստեղծագործական ավելի ուշ շրջանում ինքնակենսագրական տարրը առավել ամբողջական ձևով արտահայտվել է նրա ինքնակենսագրական տարաբնույթ արձակում:

Բանալի բառեր. Վ. Սարոյան, մարդու ներաշխարհ, ինքնակենսագրական տարր, Ես-ը վերագտնելու ճանապարհ, անձնականը և գեղարվեստականը, հուշագրություններ

20-րդ դարի անգլալեզու գրականության ամենաինքնատիպ դեմքերից մեկը՝ Վիլյամ Սարոյանը, ասպարեզ մտավ անցյալ դարի 30-ականներին՝ դրսևորելով միանգամայն նոր, յուրօրինակ մոտեցում իր ժամանակի ամերիկյան իրականությունը, անհատի և հասարակության հարաբերությունները և առհասարակ մարդու ներաշխարհը բացահայտելու գործում: 1934 թվականին լույս տեսավ նրա պատմվածքների ժողովածուն՝ «Խիզախ պատանին թռչող ճոճածողի վրա» վերնագրով: Ժամանակի քննադատությունը չկարողացավ միանգամից գնահատել գրքի բերած նորությունն ու թարմությունը:

1930-ական թվականները ԱՄՆ-ի համար դժվար սոցիալ-քաղաքական ժամանակներ էին. հասարակական գիտակցությունը ներթափանցված էր մռայլ գույներով, գրականությունը հիմնականում միտված էր խոշոր, մասշտաբային կտավների ու հարցադրումների, փորձում էին պարզաբանել սոցիալական, քաղաքական կյանքի ընդերքում տեղի ունեցող տեղաշարժերը, տեղատվություններն ու մակընթացությունները: Հանդես էին գալիս Թոմաս Վուլֆը, Ջոն Դոու Պաստալը, Հեմինգուեյը, Ջոն Սթայնբեքը, Ֆոլքները, Շերվուդ Անդերսոնը. անուններն արդեն խոսում են իրենց մասին: Եվ ահա հայտնվում է 26-ամյա մի երիտասարդ հեղինակ, որը մի կողմ դնելով իր վաստակաշատ գրական նախորդների և ժամանակակիցների փորձը՝ բերում է նոր աձակ: Շրջանցելով կարծես մարդկանց գիտակցությունը ճնշող ծանր խնդիրների գորդյան հանգույցը՝ նա միանգամայն պարզ հնչերանգով սկսում է պատմել իր տարեկից ինչ-որ երիտասարդների, իր պես սկսնակ գրողների, ամենատվորական կենցաղով ապրող մարդկանց առօրյալի մասին: Թեթևորեն, կարծես առանց

ճիգի, մակերեսորեն ու հպանցիկ, նրա գրչի տակ բացվում են մարդկային ճակատագրեր, նաև ողբերգական, ինչպես, օրինակ, ժողովածուի վերնագիրը դարձած պատմվածքի հերոսի դեպքում, զծագրվում են դեմքեր, որ խիստ ծանոթ են, նկարագրվում են իրավիճակներ, իրադարձություններ, որ պատահել ու պատահում են միլիոնավոր ամերիկացիների հետ: Կարդալով Սարոյանի պատմվածքները՝ մարդիկ ճանաչում են իրենք իրենց և շրջապատող իրականությունը, բայց դա ճգնաժամային, հոռետես տրամադրություններ չի ստեղծում վերջ ի վերջո, այլ արթնացնում, արմատավորում է զարմանալի զգացողություններ ու մտքեր, որոնց շնորհիվ մարդիկ ապրում են: Թող որ դրանք «աննշան» են, «անհարիր իրականությանը», «ոչ ճշմարտացի», բայց դրանք փաստորեն կան մարդկային էության խորքերում պահված, և Սարոյանը հիշեցնում, ապացուցում ու համոզում է, որ արևը միշտ էլ փայլում է, ուղղակի երբեմն ամպերն են ծածկում նրան: Խիստ անձնականի, ոչ բնորոշի կամ մանրուք թվացող շեշտերի ու մանրամասների միջոցով նա կարողանում է հասնել նույնքան նշանակալի ընդհանրացումների ու համամարդկայինը վերծանելու բանալիների:

Հետաքրքիր է, որ թե՛ այս ժողովածուի և թե՛ դրան հաջորդած մյուս պատմվածքների հերոսների մեջ և՛ ժամանակի և՛ հետագայի գրաքննադատները շատ բան են տեսել անձամբ հեղինակի կյանքից: (Այդ մասին ասված է Հ. Ֆլուանի 1966 թ. հրատարակված «Վ. Սարոյան» մենագրության մեջ, ռուս գրականագետ Ա. Չվերևի 1982թ. «Սարոյանի արևոտ, տխուր աշխարհը» գրքում, էջ 32 և այլն):

Ուշագրավ է նաև այն փաստը, որ 1936թ. հրատարակված իր “Inhale and exhale” («Ներշնչում և արտաշնչում») խորագրով ժողովածուին Սարոյանը տվել է “an autobiographical interlude” ենթավերնագիրը:

1930-ական թվականների վերջերից Սարոյանի ստեղծագործության մեջ գերակշռում է թատերգությունը, նրա պիեսները արժանանում են թատերական քննադատների ուշադրությանն ու հավանությանը: Այստեղ ևս, ինչպես պատմվածքի ժանրում, նա եղել է նորարար, «կռահել» շատ ու շատ սկզբունքներ ու միտումներ, որ այն ժամանակ դեռևս սաղմնային վիճակում էին և սպասում էին իրենց լիարյուն մարմնավորմանը: 40-ական թթ. գրում է կինոսցենարներ, համագործակցում է Հոլիվուդի հետ, հետագայում՝ գրում նաև վեպեր: 1952-ից սկսած հիմնականում գրել է հուշեր և ինքնակենսագրություններ: Ընդհանրապես, Սարոյանի ստեղծագործության մեջ տարբեր ժանրերը ժամանակագրական իմաստով խիստ սահմանազատված չեն, սակայն նրա բոլոր ստեղծագործություններում, ինչ ժանրի էլ որ պատկանեն, միշտ առկա է ինքնակենսագրական տարրը ոչ միայն անուղղակի, միջնորդավորված ձևով, ինչպես շատ գրողների երկերում, այլև որոշակի, ակնհայտ ու թափանցիկ: Այս իմաստով դժվար է գտնել մեկ այլ օրինակ:

20-րդ դարի 80-ական թվականներից սկսած՝ Սարոյանի և՛ անձի, և՛ ստեղծագործության նկատմամբ առաջանում է նշանակալի հետաքրքրություն: Գրվում և բեմադրվում է անգամ պիես Սարոյանի մասին: (1996թ. կոնֆերանսի նյութերից): Լույս են տեսնում մի շարք գրքեր, այդ թվում երկուսը Սարոյանի

որդու՝ Արամ Սարոյանի հեղինակությամբ: («Վերջին ծեսերը. Վ. Սարոյանի մահը» 1992 և «Վ. Սարոյան» 1983):

1983թ. լույս է տեսնում Դևիդ Քալոնի «Վիլյամ Սարոյան. իմ իսկական գործը լինելն է» գիրքը, 1984թ. Լոուրենս Լիի և Բարրի Գիֆորդի «Սարոյանի կենսագրությունը» և նույն 1984-ին Էդուարդ Ֆոսթերի «Վիլյամ Սարոյան» մենագրությունը: Գրականագիտական մոտեցման առումով առավել հետաքրքիր են վերջին երկուսը: Տվյալ հոդվածում արծարծվող հարցերի տեսանկյունից՝ կիսատակենք միայն Դևիդ Քալոնի գրքի իններորդ՝ «Հիշողության ճանապարհը» գլուխը: Ըստ Քալոնի՝ Սարոյանի ողջ ստեղծագործությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մասնատված ես-ը վերագտնելու, դեպի հոգեկան առողջացում ու վերականգնում տանող ճանապարհ: Հոգու ու տիեզերքի միաձուլման խոր տենչանքը առհասարակ առաջնահերթ թեմաներից է եղել ամերիկյան գրականության մեջ՝ սկսած Ուիթմենից և Տորոյից մինչև Ջեյ Բերուաք և Հենրի Միլլեր: Սարոյանի ստեղծագործությունը Քալոնը դիտարկում է որպես այդ խորընթաց միտումի ևս մի արտահայտություն. «Ինչպես Ուիթմենը...», - ասում է նա, - Սարոյանը փնտրում է լինելությունը (experience of being), նա ուզում է գնալ ուղիղ դեպի իրերի սիրտը, փութեռանդորեն, անմիջականորեն և կրքոտ» /Calonne, 1983: 8/:

Անդրադառնալով Սարոյանի հուշագրությանը՝ նա նշել է, որ այն ոչ միայն կենսագրական տվյալների աղբյուր է, այլև գրողի արձակի լավագույն մասերից մեկը: Այդ գործերի ամենաբնորոշ մոտիվը Սարոյանի օտարվածության մշտատև զգացողությունն է, նրա անձի երկփեղկվածությունը: Նա մտասկեռված է դեպի իր անձնական զգացմունքներն ու կենսափորձը՝ որոնելով իր անհատականության ու պահվածքի հոգեբանական, այսպես կոչված, նախանյութը, ատաղձը: Այդպիսի մոտեցումը Քալոնը նմանեցնում է հոգեվերլուծության:

Համառոտ անդրադառնալով նաև Էդուարդ Հալսի Ֆոսթերի՝ 1984-ին լույս տեսած «Վ. Սարոյան» գրքին: Իր իսկ խոստովանությամբ խորագնիմ ուսումնասիրության չհավակնող այս գրքով նա փորձ է արել պարզել, թե ո՞րն է Սարոյանի սիրվածության և անվերապահորեն հեղինակությունների շարքում դասվելու գաղտնիքը: Քննելով նրա ստեղծագործությունը՝ Ֆոսթերը նույնպես գնում է դեպի նրա անձը, ծագումը, ընտանիքը՝ անընդհատ կապելով այդ ամենը կոնկրետ ստեղծագործությունների հետ: Խոսելով բուն ինքնակենսագրական գործերի մասին՝ Ֆոսթերը մի կողմից դիտում է դրանք որպես գեղարվեստական արժեք չներկայացնող օժանդակ նյութեր, մյուս կողմից՝ շարունակ քննում է Սարոյանի անցյալը (background) հենց այդ գործերի մեջ՝ պարզելու համար նրա ժառանգության այդչափ կենսունակ լինելու հարցը: Ֆոսթերը արել է մի ուշագրավ դիտարկում, ըստ որի Սարոյանը կարողացել է գտնել և արտահայտել իր մշակութային անցյալից կենսափորձի այնպիսի ըմբռնում, որը շատ մոտ է ամերիկյան գրականության մեջ արդեն հաստատված մտահայեցողությանը: Ինչևէ:

Վ. Սարոյանի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ է գրավում նրա՝ թերևս ամենահայտնի և ամենասիրված գրքերից մեկը՝ «Իմ անունը Արամ է»

ժողովածուն, որը լույս է տեսել 1940 թվականին: Շարքի 14 պատմվածքները ընթերցելիս առաջին հայացքից կարող է թվալ, թե դրանցից յուրաքանչյուրը Սարոյանի պատանեկան կյանքի այս կամ այն դրվագը պատկերող հուշեր են: Եվ, իսկապես, ընտանեկան ալբոմի լուսանկարներից և կենսագրությունից մեզ հայտնի մարդկանց մենք հանդիպում ենք այստեղ. լինի դա մայրիկը կամ քեռի Խոսրովը «Խեղճուկրակ արաբը» պատմվածքից, Ղարոլանյանների պապը «Ուղևորություն դեպի Հանֆորդ» և այլն: Իրական են նաև քաղաքի փողոցներն ու եկեղեցիները, քաղաքից դուրս գտնվող բլուրներն ու գետերը, փշածածկ չոր հողերը, որտեղ քեռի Սելիքը փորձում է նռնենիներ աճեցնել: Բնականաբար մեծ է գայթակությունը՝ նույնացնել պատմվածքի հերոսներին ու նրանց նախատիպերին և, այնուամենայնիվ, ոչինչ նույնական չէ: «Իմ անունը Արամ է» գիրքը իրականի ու անիրականի հազվագյուտ մի համաձուլվածք է, գեղարվեստականի և վավերագրականի մի բացառիկ փոխներթափանցում և համադրում:

Ահավասիկ «Հնաոճ սիրավեպ սիրային ոտանավորներով ու այլևայլ բաներով» և «Կրկեսը» պատմվածքները: Գլխավոր հերոսը՝ Արամ Ղարոլանյանը, իր չարածճիությամբ, սրամտությամբ և աշխուժությամբ հիշեցնում է պատանի Սարոյանի ճշգրիտ դիմապատկերը: 20-րդ դարասկզբի ամերիկյան փոքրիկ քաղաքի դպրոցում, իհարկե, կարող էին իրական միսս Դաֆններ և միստր Դերրինգոներ կամ Դոուսըններ լինել, այնքան իրական, որքան տաղտկալի դպրոցական ծրագրերն ու դաստիարակության միակ հուսալի միջոցը համարվող «տեր-թողիկյան» ծեծը, բայց ահա Արամի և իր ընկերոջ՝ դպրոցի տնօրենի հետ ողջ խոսակցությունը խիստ երգիծական, նույնիսկ սարկաստիկ հնչերանգով թերևս՝ ոչ:

Կամ, օրինակ, պատանի հերոսի և Լոկոմոտիվ 38-օջիքվեյ կոչվող «ցնդած» հնդկացու արկածները «Լոկոմոտիվ 38» պատմվածքում: Եթե անգամ պատկերացնենք, որ իրական է սատկած էշի փոխարեն թանկարժեք «պակկարդ» գնող միլիոնատեր մի հնդկացի բնիկ, որը անշահախնդիր կարող է ուրախանալ իր նոր կրտսեր ընկերոջ՝ մեքենա վարելու հաջողությամբ, ապա աննկատելիորեն, ինչ-որ մի պահի վերհուշ-իրականությունը արագորեն վերածվում է կյանքում առաջին անգամ մեքենա նստած, բայց փողոցներով անվեհեր սլացող պատանի հերոսի մասին տղայական հրճվանքով ու հպարտությամբ լեցուն մի լեզենդի:

Կամ վերցնենք պատանի Ղարոլանյանի պապի կերպարը «Ուղևորություն դեպի Հանֆորդ», «Իմ զարմիկ հռետոր Տիգրանը» և այլ պատմվածքներից: Մի քիչ տարօրինակ, Սարոյանի խոսքերով, մի քիչ խենթուխելառ ծերունի է կարծես: Միևնույն ժամանակ քեզ բռնում ես այն զգացողության վրա, որ խիստ տիպական մի հայ պապ է քո առջև, իր խստությամբ, իր ծիծաղով և իմաստությամբ, բեղերով կամ առանց բեղերի, բայց հենց այնպիսին, ինչպիսին են շատերը:

Ահա այսպես կարելի է քննել պատմվածաշարի բոլոր հերոսների կերպարներն ու դրվագները, դեպ առ դեպ, անուն առ անուն: 40-ական թվականներից սկսած Սարոյանը շատ է ստեղծագործել նաև վեպի և թատերգական ժանրերում և դրանք ևս շռայլորեն ներթափանցված են ինքնակենսագրական մոտիվներով:

Ինքնակենսագրական տարրը ժանրային առումով առավել ինքնուրույն և ամբողջական դրսևորում է ստանում Սարոյանի ստեղծագործության ուշ և հատկապես վերջին շրջանում: Առաջին ինքնակենսագրությունը՝ «Հեծանվորդը Բևերլի Հիլսից», լույս է տեսել 1952-ին: 1960-ական թվականներից սկսած՝ մեկը մյուսին են ինքնակենսագրական, հուշագրական բնույթի հետևյալ գրքերը. «Ահա եկավ, ահա գնում է ինքդ գիտես, թե ով» (1961), “Here Comes, There goes you know Who”, “Short drive, sweet chariot” (1966), “Letters from 74rue Taitbout” (1969), “Day of Life and Death and Escape to the Moon” (1970), “Places where I’ve done time” (1972), “Sons come and go, mothers hang in forever” (1976), “Chance meetings” (1978), “Obituaries” (1979), “Births” (1983): Վերջինս, ինչպես նաև համապատասխանաբար 1984 և 1986թթ. լույս տեսած “My name is Saroyan” և “An Armenian Trilogy” գրքերը լույս տեսան գրողի մահվանից հետո: Արժե նշել, որ այս գործերը բարձր են գնահատվել նաև քննադատության կողմից: “Obituaries” գիրքը «Նյու Յորք Թայմս»-ի տվյալներով համարվել է լավագույնը 1979 թ. ինքնակենսագրությունների մեջ: Սարոյանի գրական ժառանգության մի զգալի մասը կազմող այս ստեղծագործությունները նպատակահարմար ենք գտնում դիտարկել ինքնակենսագրական-հուշագրական արձակ անվանումով: Այստեղ և՛ հուշեր են, և՛ ինքնակենսագրություն, և՛ ակնարկներ, և՛ ուղեգրություններ, և՛ նամականի, և՛ անգամ մահախոսականների և ծնունդների մասին հայտարարություններից ծնված խոհերի գրառումներ: (“Obituaries” և “Births” գրքերը):

Փաստորեն, ինքնակենսագրական տարրը, որով շռայլորեն հագեցած է նրա ամբողջ գեղարվեստական ստեղծագործությունը, այս գրքերում ձեռք բերեց իր զարգացման օրինաչափ արդյունքը և ավելի բյուրեղացավ: Ի դեպ, ինքը Սարոյանը չէր տարբերակում իր ստեղծագործությունները գեղարվեստականի և ոչ գեղարվեստականի:

Սարոյանի ինքնակենսագրական-հուշագրական արձակը առավել ուշագրավ է դառնում, երբ այն դիտարկում ենք 20-րդ դարի 50-70-ական թթ. գրականության, մասնավորապես ամերիկյան գրականության զարգացման համատեքստում, որովհետև այն համընկնում է, այսպես կոչված, վավերագրական ժանրի բուռն ծաղկման տարիներին: Վավերագրականի և գեղարվեստականի միահյուսման «սարոյանական» մոտեցումը հետագա ուսումնասիրության և առանձին հոդվածի նյութ է հանդիսանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարոյան Վ. Ընտիր երկեր 4 հատորով, Երևան, 1986:
2. Callone D. My real work is being. London, 1983.
3. Foster E. William Saroyan. Boise, Idaho, 1984.
4. Lee Lawrence and Gifford Barry Saroyan: A biography. New York, 1984.
5. Saroyan A. Last Rites: The Death of William Saroyan. New York, 1982.
6. Saroyan A. W. Saroyan. San Diego: A Harvest Book, 1983.

7. Saroyan W. Inhale and Exhale. New York, 1936.
8. Saroyan W. The Bicycle Rider in Beverly Hills. New York, 1952.
9. Saroyan W. Here comes, there goes you know who. New York, 1961.
10. Saroyan W. Short drive sweet chariot. New York, 1966.
11. Saroyan W. Letters from 74 rue Taitbout. New York, 1969.
12. Saroyan W. Days of life and death and escape to the Moon. New York: Dial Press, 1970.
13. Saroyan W. Places where I've done time. London, 1972.
14. Saroyan W. Sons come and go, mothers hang in forever. New York, 1976.
15. Saroyan W. Chance meetings. New York. 1978.
16. Saroyan W. Obituaries. Berkeley Creative Art Book, 1979.
17. Saroyan W. Births. Berkeley California, 1983.
18. Saroyan W. My name is Saroyan. San Diego: A Harvest Book, 1984.
19. Saroyan W. An Armenian Trilogy. Fresno, 1986.
20. Зверев А. М. Грустный солнечный мир Сарояна. Ереван, 1982.

А. ПЕТРОСЯН – Автобиографический элемент в произведениях В. Сарояна. – Вильям Сароян вошел в литературный мир в 30-х годах прошлого века и проявил новый и своеобразный подход в изображении американской действительности своего времени и внутреннего мира человека. Через сугубо личное и на первых взгляд несущественное он приходит к значительным обобщениям. В творчестве Сарояна разные жанры хронологически строго не ограничены, но везде как опосредованно, так и прозрачно присутствует автобиографический элемент. В статье как типичный пример рассматривается сборник рассказов «Меня зовут Арам». В более позднем периоде творчества Сарояна автобиографический элемент более целостно проявился в его разнородной автобиографической прозе.

Ключевые слова: В. Сароян, внутренний мир, автобиографический элемент, дорога к приобретению идентичности, личное и художественное, мемуаристика

A. PETROSYAN – The Autobiographical Element in the Works of William Saroyan. – Appearing in the literary world in the 30-s of the 20th century W. Saroyan demonstrated a new and original approach in revealing the American reality of his time and generally the inner world of the man. He succeeded to make profound observations and come to significant conclusions through something very personal and seemingly unimportant. Chronologically there are no strict demarcations of different genres in his works but the autobiographical element is always present both implicitly and explicitly. The collection of stories “My name is Aram” is viewed in the paper. In comparatively later period of Saroyan’s writing career the autobiographical element gained its more complete reflection in his diverse authobiographical prose.

Key words: W. Saroyan, inner world, authobiographical prose, a way to identity, the personal and the fictional, memoirs

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՍԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ON THE CONTRIBUTORS

1. ԱՅՈՒՆՑ ԱՆՈՒՇ – ք.գ.թ., ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտ
АЮНЦ АНУШ – к.ф.н., ассистент кафедры межкультурной коммуникации ЕГУ
AYUNTS ANUSH – PhD, YSU Chair of English for Cross-Cultural Communication, Assistant Professor
2. ԱՍԼԱՆԱԲԱԴԻ ՀՈՒՍԵԻՆ – «Ազադ» իսլամական համալսարանի դասախոս
АСЛАНАБАДИ ХУСЕИН – преподаватель Исламского университета «Азад»
ASLANABADI HOSSEIN – Islamic Azad University, lecturer
3. ԲԱԲԱԺՅԱՆՅԱՆ ԱՆՆԱ – Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողուհի
БАБАДЖАНЫН АННА – студентка Американского университета в Армении
BABAJANYAN ANNA – student of American University in Armenia
4. ԲԱԳՈՒՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, հայցորդ
БАГУМЯН ЛУСИНЕ – преподаватель кафедры теории и практики перевода ЕГУ, соискатель
BAGUMYAN LUSINE – YSU Chair of Translation Studies, lecturer, PhD student
5. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼՈՒԻԶԱ – ք.գ.թ., ԵՊՀ անգլիական քանասիրության ամբիոնի ասիստենտ
ГАСПАРЯН ЛУИЗА – к.ф.н., ассистент кафедры английской филологии ЕГУ
GASPARYAN LUIZA – PhD, YSU Chair of English Philology, Assistant Professor
6. ԳԱՐԳԱԼՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ – ք.գ.թ., ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի ասիստենտ
ГАРГАЛОЯН РУЗАННА – к.ф.н., ассистент кафедры английского языка № 2 ЕГУ
GARGALOYAN RUZANNA – PhD, YSU Chair of the English Language № 2, Assistant Professor
7. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆՆԱ – ԵՊՀ ռոմանական քանասիրության ամբիոնի դասախոս
ГЕВОРГЯН АННА – преподаватель кафедры романской филологии ЕГУ
GEVORGYAN ANNA – YSU Chair of Romance Philology, lecturer
8. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ – ք.գ.թ., ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ
ГЕВОРГЯН ГУРГЕН – к.ф.н., доцент кафедры теории и практики перевода ЕГУ
GEVORGYAN GURGEN – PhD, YSU Chair of Translation Studies, Associate Professor
9. ԳՅՈՒՐԺՅԱՆ ՏԱԹԵՎ – ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի ասպիրանտ
ГЮРДЖЯН ТАТЕВ – аспирант кафедры английского языка № 2 ЕГУ
GYURJYAN TATEV – YSU Chair of the English Language № 2, PhD student
10. ԵՐԶԻՆԿՅԱՆ ԵԼԵՆԱ – ք.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի վարիչ
ЕРЗИНКЯН ЕЛЕНА – д.ф.н., профессор, зав. кафедрой английского языка № 2 ЕГУ
YERZINKYAN YELENA – Doctor of Philology, Professor, YSU Head of the Chair of English Language № 2
11. ԵՓՐԵՄՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ – ԵՊՀ ռոմանական լեզուների ամբիոնի դասախոս
ЕПРЕМЯН МАРИАННА – преподаватель кафедры романских языков ЕГУ
YEPREMYAN MARIANNA – YSU Chair of the Romance Languages, lecturer
12. ԶԱԿԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հայցորդ
ЗАКАРЯН НАРИНЕ – соискатель кафедры теории и практики перевода ЕГУ
ZAKARYAN NARINE – YSU Chair of Translation Studies, PhD student

13. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ – ր.գ.թ., ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտ
 ХАЧАТРЯН АРМИНЕ – к.ф.н., ассистент кафедры межкультурной коммуникации ЕГУ
 KHACHATRYAN ARMINE – PhD, YSU Chair of English for Cross-Cultural Communication, Assistant Professor
14. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ – ր.գ.թ., ՀՊՏՀ լեզուների ամբիոնի ասիստենտ
 ХАЧАТРЯН АНУШ – к.ф.н., ассистент кафедры языков АГЭУ
 KHACHATRYAN ANUSH – PhD, ASUE Chair of Languages, Assistant Professor
15. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐՈ – մ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ
 КАРАПЕТЯН КАРО – к.п.н., профессор, зав. кафедрой теории и практики перевода ЕГУ
 KARAPETYAN KARO – PhD, Professor, YSU Head of the Chair of Translation Studies
16. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԻԼԻԹ – ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս
 КАРАПЕТЯН ЛИЛИТ – преподаватель кафедры французской филологии ЕГУ
 KARAPETYAN LILIT – YSU Chair of French Philology, lecturer
17. ԿԻՐԱՎՈՍՅԱՆ ՍԱՐԻԱՍ – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
 КИРАКОСЯН МАРИАМ – ассистент кафедры армянского языка ЕГУ
 KIRAKOSYAN MARIAM – YSU Chair of the Armenian Language, Assistant Professor
18. ԿԻՐԱՎՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ – ր.գ.թ., ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
 КИРАКОСЯН ТАТЕВИК – к.ф.н., преподаватель кафедры английской филологии ЕГУ
 KIRAKOSYAN TATEVIK – PhD, YSU Chair of English Philology, lecturer
19. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՆՈՒՆԵ – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
 АЙРАПЕТЯН НУНЕ – преподаватель кафедры английской филологии ЕГУ
 HAYRAPETYAN NUNE – YSU Chair of English Philology, lecturer
20. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ – ր.գ.թ., ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս
 АРУТЮНЯН АМАЛИЯ – к.ф.н., преподаватель кафедры французской филологии ЕГУ
 HARUTYUNYAN AMALYA – PhD, YSU Chair of French Philology, lecturer
21. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԱՆՆԱ – ԵՊՀ անգլերենի № 1 ամբիոնի դասախոս
 АРУТЮНЯН ЛИАННА – преподаватель кафедры английского языка № 1 ЕГУ
 HARUTYUNYAN LIANNA – YSU Chair of the English Language № 1, lecturer
22. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ – ր.գ.թ., ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դոցենտ
 АРУТЮНЯН НАРИНЕ – д.ф.н., доцент кафедры межкультурной коммуникации ЕГУ
 HARUTYUNYAN NARINE – Doctor of Philology, YSU Chair of English for Cross-Cultural Communication, Associate Professor
23. ՀԱՋԻ-ՀԱՎՈԲՅԱՆ ԱՆՆԱ – ր.գ.թ., ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի ասիստենտ
 АДЖИ-АКОПЯН АННА – к.ф.н., ассистент кафедры английского языка № 2 ЕГУ
 HAJI-HAKOBYAN ANNA – PhD, YSU Chair of the English Language № 2, Assistant Professor

24. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՍՏԳԻԿ – ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դասախոս
 ОГАНЕСЯН АСТХИК – преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
 HOVNANNISYAN ASTGHİK – YSU Chair of the English Language № 2, lecturer
25. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ – ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դասախոս
 ОВАНЕСЯН ГАЯНЕ – преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
 HOVNANNISYAN GAYANE – YSU Chair of the English Language № 2, lecturer
26. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԼՈՒՍԻԿ – ք.գ.թ., ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դոցենտ
 ОВАКИМЯН ЛУСИК – к.ф.н., доцент кафедры английского языка № 2 ЕГУ
 HOVAKIMYAN LUSIK – PhD, YSU Chair of the English Language № 2, Associate
 Professor
27. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԻՆԱ – ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դասախոս
 МАТЕВОСЯН КАРИНА – преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
 MATEVOSYAN KARINA – YSU Chair of the English Language № 2, lecturer
28. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ – ԵՊՀ անգլերենի բառագիտության և ոճաբանության
 ամբիոնի հայցորդ
 МАКАРЯН АНАИТ – соискатель кафедры лексикологии и стилистики
 английского языка ЕГЛУ
 MAKARYAN ANAHIT – YSLU Chair of English Lexicology and Stylistics, PhD student
29. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ – ք.գ.թ., ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի
 МАНУКЯН НАРИНЕ – к.ф.н., кафедра английского языка № 2 ЕГУ
 MANUKYAN NARINE – PhD, YSU Chair of the English Language № 2
30. ՄԻԴՅԱՆ ԺԱՆՆԱ – ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոս
 МИДОЯН ЖАННА – преподаватель кафедры языков АГЭУ
 MIDOYAN ZHANNA – ASUE Chair of Languages, lecturer
31. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ – ՀՊՄՀ դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնի
 դասախոս
 МХИТАРЯН НАИРА – преподаватель кафедры декоративно-прикладного
 искусства АГПУ
 MKHITARYAN NAIRA – ASPU Chair of Applied Decorative Art, lecturer
32. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԻԱՆԱ – Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի
 դասախոս, ասպիրանտ
 МОВСИСЯН ДИАНА – преподаватель университета «Месроп Маштоц» г.
 Степанакерта, аспирант
 MOVSISYAN DIANA – “Mesrop Mashtoc” University of Stepanakert, lecturer, PhD
 student
33. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՅԱՆԵ – ք.գ.թ., ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի
 դոցենտ
 МУРАДЯН ГАЯНЕ – к.ф.н., доцент кафедры английской филологии ЕГУ
 MURADYAN GAYANE – PhD, YSU Chair of English Philology, Associate
 Professor
34. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՆԵԼԼԻ – ԳՊՄԻ անգլերեն լեզվի և նրա դասավանդման
 մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
 НАЛБАНДЯН НЕЛЛИ – соискатель кафедры английского языка и методики
 преподавания ГГПИ
 NALBANDYAN NELLY – GSPI Chair of the English Language and its teaching
 methodology, PhD student
35. ՆԻԿՈԳՈՍՅԱՆ ՀՈՒՓՄԻՍԵ – ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դասախոս
 НИКОГОСЯН РИПСИМЕ – преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
 NIKOGHOSYAN HRIPSIME – YSU Chair of the English Language № 2, lecturer

36. ՆԻԿՈԳՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ – ԵՊՀ անգլերենի № 1 ամբիոնի դասախոս
 НИКОГОСЯН НАРИНЕ – преподаватель кафедры английского языка № 1 ЕГУ
 NIKOGHOSYAN NARINE – YSU Chair of the English Language № 1, lecturer
37. ՇԱՀՍՈՒՐԱԳՅԱՆ ԱՆԱՀԻՏ – ք.գ.թ., ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ
 ШАХМУРАДЯН АНАИТ – к.ф.н., доцент кафедры зарубежной литературы ЕГУ
 SHAHMURADYAN ANAHIT – PhD, YSU Chair of Foreign Literature, Associate Professor
38. ՉԱՓԱՐԵԱՆ ՎԻՊԻ – ք.գ.թ., Լիբանանի ռազմական ակադեմիայի դասախոս
 ЧАПАРЯН ВИКИ – к.ф.н., преподаватель Ливанской военной академии
 TCHAPARIAN VICKY – PhD, Military Academy of Lebanon, lecturer
39. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՇԱՀԱՆԵ – «Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամի դասախոս, ԵՊՀ ֆրանսերենի ամբիոնի հայցորդ
 ПЕТРОСЯН ШАГАНЕ – преподаватель фонда «Французский лицей в Армении», соискатель кафедры французского языка ЕГЛУ
 PETROSYAN SHAHANE – Foundation “French college in Armenia”, lecturer; YSLU Chair of French, PhD student
40. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ – ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի ասիստենտ
 ПЕТРОСЯН АРШАЛУЙС – ассистент кафедры английского языка № 2 ЕГУ
 PETROSYAN ARSHALUYS – YSU Chair of the English Language № 2, Assistant Professor
41. ՍԱՐՈՅԱՆ ԼԻԼԻԹ – ք.գ.թ., ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի դոցենտ
 САРОЯН ЛИЛИТ – к.ф.н., доцент кафедры романской филологии ЕГУ
 SAROYAN LILIT – PhD, YSU Chair of Romance Philology, Associate Professor
42. ՍԱՐՈՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ – ք.գ.թ., ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դասախոս
 САРОЯН САТЕНИК – к.ф.н., преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
 SAROYAN SATENIK – PhD, YSU Chair of the English Language № 2, lecturer
43. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ԲԵԼԼԱ – ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դասախոս
 САРУХАНЯН БЕЛЛА – преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
 SARUKHANYAN BELLA – YSU Chair of the English Language № 2, lecturer
44. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ – ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս
 СТЕПАНЯН АРАКСЯ – преподаватель кафедры романской филологии ЕГУ
 STEPANYAN ARAKSYA – YSU Chair of Romance Philology, lecturer
45. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՐՎԱՆԴ – ք.գ.թ., ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ
 ВАРДАНЯН ЕРВАНД – к.ф.н., ассистент кафедры английской филологии ЕГУ
 VARDANYAN YERVAND – PhD, YSU Chair of English Philology, Assistant Professor
46. ՏՈՆՈՅԱՆ ԳՈՀԱՐ – ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս, հայցորդ
 ТОНОЯН ГОАР – преподаватель кафедры романской филологии ЕГУ, соискатель
 TONOYAN GOHAR – YSU Chair of Romance Philology, lecturer, PhD student

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/ Лингвистика/ Linguistics

AYUNTS A. Applying contrastive analysis for elucidating certain features of cultural foreign words	3
ԱՅՈՒՆՅ Ա. Զուգադրական վերլուծության կիրառումը «մշակութային» օտար բառերի առանձնահատկությունները լուսաբանելիս	
АЮНЦ А. Применение сопоставительного анализа с точки зрения выявления характеристик культурных иноязычных слов	
GYURJYAN T. The notion of definition: a philosophical approach	10
ԳՅՈՒՐՋՅԱՆ Տ. Սահմանում հասկացությունը փիլիսոփայության դիտանկյունից	
ГЮРДЖЯН Т. Философский подход к определению	
KNASHATRYAN A. Verbal synaesthesia in a literary poetic text	19
ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Խոսքային սինեսթեզիան չափածո խոսքում	
ХАЧАТРЯН А. Вербальная синестезия в литературном тексте	
MANUKYAN N., NIKOGHOSYAN H. On some issues of synonymy	26
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ն., ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Հ. Հոմանիշ հասկացության որոշ հարցերի շուրջ	
МАНУКЯН Н., НИКОГОСЯН Р. О некоторых подходах к проблеме синонимии	
TCHARARIAN V. A critical analysis of speeches by President Vladimir Putin and President Barack Obama concerning the Crimean events	31
ՉԱՓԱՐԵԱՆ Վ. Նախագահներ Վ. Պուտինի և Բ. Օբամայի՝ Ղրիմի իրադարձություններին առնչվող ելույթների քննական վերլուծություն	
ЧАПАРЯН В. Критический анализ выступлений президента В. Путина и президента Б. Обамы о событиях в Крыму	
ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ. Ուայլդի լեզվաոճական միջոցների գաղափարագեղագիտական արժեքը	39
ГЕВОРГЯН Г. Идеино-эстетическая значимость некоторых лингвостилистических приемов в произведениях Оскара Уайлда	
GEVORGYAN G. Ideological-aesthetic value of certain linguostylistic devices in the works by Oscar Wilde	
ԵՐԶՆԿՅԱՆ Ե., ՄՈՎՍԻՍՅԱՆ Դ. Հասկացում, մտավոր շարժում, ցուցայնություն	48
ЕРЗИНКЯН Е., МОВСИСЯН Д. Понимание, ментальное движение, дейксис	
YERZNKYAN Y., MOVSISYAN D. Understanding, mental movement and deixis	
ԵՐԶՆԿՅԱՆ Ե., ՄՈՎՍԻՍՅԱՆ Դ. Հասկացումը որպես ճշմարտության բացահայտում	62
ЕРЗИНКЯН Е., МОВСИСЯН Д. Понимание как постижение истины	
YERZNKYAN Y., MOVSISYAN D. Understanding as revealing the truth	

ԵՓՐԵՍՅԱՆ Մ. Մակդիրի տարբեր մեկնարանությունների շուրջ	70
ЕПРЕМЯН М. О различных интерпретациях эпитета	
YEPREMYAN M. On some interpretations of epithet	
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Լ. Համեմատությունը որպես միջգիտակարգային ուսումնասիրության առարկա	81
КАРАПЕТЯН Л. Сравнение как предмет междисциплинарного исследования	
KARAPETYAN L. Simile as a subject of interdisciplinary research	
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Պատկերապատումը (կոմիքս) և նրա թարգմանությունը	90
КИРАКОСЯН М. Комикс и его перевод	
KIRAKOSYAN M. Comic books and their translation	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. Գունընկալման և գունանվանման փոխհարաբերության խնդիրը լեզվաբանական տեսություններում	100
АРУТЮНЯН А. Проблема взаимоотношений цветовосприятия и цветоименования в лингвистических теориях	
HAROUTYUNYAN A. On the problem of the relationship between colour perception and colour names	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Միջմշակութային հաղորդակցության տեսության զարգացման համառոտ պատմությունը	111
АРУТЮНЯН Н. Краткий обзор истории становления теории межкультурной коммуникации	
HARUTYUNYAN N. A brief review of the development of intercultural communication theory	
ՄԱԿԱՐՅԱՆ Ա. «Ազատություն» հասկացության առկայացման միջոցները Ջ. Ֆաուլզի հեղինակային ոճում («Ֆրանսիացի լեյտենանտի սիրուհին» վեպի հիման վրա)	127
МАКАРЯН А. Способы актуализации концепта «свобода» в идиостиле Дж. Фаулза (на материале романа «Любовница французского лейтенанта»)	
MAKARYAN A. Means of actualization of the concept of “freedom” in the individual style of John Fowles (based on the novel “The French Lieutenant’s Woman”)	
ՄԻԴՅԱՆ Ժ., ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Համացանցային հաղորդակցման տարբերությունները գրավոր և բանավոր հաղորդակցման այլ ձևերից	134
МИДОЯН Ж., ХАЧАТРЯН А. Различия между интернет-общением и другими видами устной и письменной речи	
MIDOYAN Zh., KHACHATRYAN A. The differences between netspeak and other forms of written and oral communication	
ՄԻԴՅԱՆ Ժ., ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Համացանցային հաղորդակցման լեզվական առանձնահատկությունները	143
МИДОЯН Ж., ХАЧАТРЯН А. Языковые особенности интернет-коммуникации	
MIDOYAN Zh., KHACHATRYAN A. Linguistic features of Internet communication	
ՍՈՒՐԱԴՅԱՆ Գ. Փոփոխության գաղափարախոսությունը գիտաֆանտաստիկ դիսկուրսում	150
МУРАДЯН Г. Идеология изменения в дискурсе научной фантастики	
MURADIAN G. The ideology of change in science fiction	

ՊԵՏՐՈՍՅԱՆ Շ. Խոսակցական ֆրասերենի ենթաոճերը և դրանց արտացոլումը դարձվածաբանական միավորներում	158
ПЕТРОСЯН Ш. Стилиевые регистры разговорного французского языка и их отражение во фразеологических единицах	
PETROSYAN Sh. The substyles of colloquial French and their reflection in the phraseological units	
ՍԱՐՈՅԱՆ Լ. Լռության գործարանական նշանակությունը հաղորդակցական գործընթացում	163
САРОЯН Л. Прагматическое значение молчания в процессе коммуникации	
SAROYAN L. The pragmatic function of silence in the process of communication	
ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Բ. Համառոտ անդրադարձ 20-րդ դարի հայերեն-անգլերեն բառարանագրությանը	172
САРУХАНЯН Б. Краткий очерк армяно-английской лексикографии XX века	
SARUKHANYAN B. A concise review of the 20 th century Armenian-English lexicography	
ՎԱՐԴԱՆՅԱՆ Ե. Աստվածաշնչյան լեզվաշերտերը Ջ. Գ. Բայրոնի «Կայեն» միստերիայում և նրանց լեզվաոճական առանձնահատկությունները՝ հայերեն թարգմանությամբ	178
ВАРДАНЯН Е. Библийские языковые пласты в мистерии «Каин» Дж. Г. Байрона и их лингвостилистические особенности в переводе на армянский язык	
VARDANYAN Y. Biblical language layers in G. G. Byron's mystery "Cain" and their linguostylistic peculiarities in the Armenian translation	
ՏՈՆՈՅԱՆ Գ. Հուզայնության կարգի ուսումնասիրության հիմնական ուղղությունները ժամանակակից էմոտիոլոգիայում	189
ТОНОЯН Г. Основные направления изучения категории эмотивности в современной эмотиологии	
TONOYAN G. Main approaches to the study of the category of emotivity in modern emotionology	

ՄԵԹՈԴԻԿԱ/ Методика/ Methodology

ASLANABADI H. Development of cultural awareness in Iranian English classes.....	197
ԱՍԼԱՆԱԲԱԴԻ Հ. Մշակութային իրազեկության զարգացումը Իրանի ավագ դպրոցի անգլերենի դասընթացում	
АСЛАНАБАДИ Х. Развитие культурной компетенции на занятиях по английскому языку в старшей школе Ирана	
HAYRAPETYAN N. Teaching listening: problems and solutions	204
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ն. Լսելով ընկալելու հմտություններ. խնդիրներ և լուծումներ	
АЙРАПЕТЯН Н. Обучение слушанию: задачи и их решение	
HOVHANNISYAN G., PETROSYAN A. Developing learners' oral proficiency in various communicative contexts.....	215
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ., ՊԵՏՐՈՍՅԱՆ Ա. Բանավոր խոսքի կատարելագործում տարբեր կոմունիկատիվ իրավիճակներում	
ОВАНЕСЯН Г., ПЕТРОСЯН А. Совершенствование навыков устной речи в различных коммуникативных ситуациях	

MKHITARYAN N., GARGALOYAN R. The use of foreign languages and computer graphics in the artistic project	224
ՄԽԻԹԱՐՅԱՆ Ն., ԳԱՐԳԱԼՈՅԱՆ Ռ. Օտար լեզուների և համակարգչային գրաֆիկական ծրագրերի կիրառումը գեղարվեստական նախագծման մեջ	
МХИТАРЯН Н., ГАРГАЛОЯН Р. Использование иностранного языка и программ компьютерной графики в области художественного планирования	
SAROYAN S. How to teach vocabulary effectively.....	230
ՍԱՐՈՅԱՆ Ս. Լսարանում բառապաշարի մատուցման որոշ մեթոդների շուրջ	
САРОЯН С. О методах эффективного обучения лексике	
STEPANYAN A. La traduzione nell'insegnamento delle lingue straniere	236
ՍՏԵՓԱՆՅԱՆ Ա. Թարգմանությունը օտար լեզուների դասավանդման գործընթացում	
STEPANYAN A. Translation in foreign language teaching	
ԳԱՍՊԱՐՅԱՆ Լ., ԲԱԳՈՒՄՅԱՆ Լ. Թարգմանությունը որպես ուսուցման մեթոդ անգլերեն դասավանդելիս	246
ԴԱՍՊԱՐՅԱՆ Լ., ԲԱԳՈՒՄՅԱՆ Լ. Перевод как метод обучения в преподавании английского языка	
GASPARYAN L., BAGUMYAN L. Translation as a learning method in English language teaching	
ԳԵՎՈՐԳՅԱՆ Ա. Իտալերենի դասավանդման որոշ արդի մեթոդների շուրջ.....	256
ԴԵՎՈՐԳՅԱՆ Ա. О некоторых новых методах обучения итальянскому языку	
GEVORGYAN A. On some new methods of teaching Italian	
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Կ., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ն. Անգլերենի դասագրքերի ստեղծման հաղորդակցական սկզբունքները	264
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Կ., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ն. Коммуникативные принципы создания учебников английского языка	
KARAPETYAN K., NALBANDYAN N. Communicative principles of creating English textbooks	
ՀԱԶԻ-ՀԱԿՈՔՅԱՆ Ա., ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Կ. Գերային խաղի կիրառումը լսարանում՝ բանավոր խոսքի զարգացման նպատակով	270
ԱԴՋԻ-ԱԿՈՔՅԱՆ Ա., ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Կ. Применение ролевых игр в аудитории для развития устной речи	
НАЛ-НАКОВЯН А., МАТЕВОСЯН К. Practising role play in classroom for the development of oral speech	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ., ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Տ. Միջմշակութային հաղորդակցության ուսուցման մեթոդների շուրջ	279
ԱՐՄԵՆՅԱՆ Լ., ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Տ. О методах преподавания межкультурной коммуникации	
HARUTYUNYAN L., KIRAKOSYAN T. On the teaching methods of cross-cultural communication	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա., ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Լ. Գործարարական անգլերենի դասավանդման հայեցակետային բովանդակություն	284
ՕԳԱՆԵՅԱՆ Ա., ՕՎԱԿԻՄՅԱՆ Լ. Аспекты преподавания делового английского в ВУЗЕ	

HOVHANNISYAN A., HOVAKIMYAN L. On some aspects of teaching Business English in higher education	
ՍԱՐՈՅԱՆ Լ. Հայալեզու լսարանում իսպաներենի հնչյունային համակարգի դասավանդման խնդրի շուրջ	290
САРОЯН Л. К вопросу о преподавании фонетических особенностей испанского языка в армянской аудитории	
SAROYAN L. On some ways of introducing specific features of Spanish phonetics in the Armenian classroom	
НИКОГОСЯН Н. Диалог как метод развития навыков устной речи.....	298
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Ն. Երկխոսությունը որպես բանավոր խոսքի հմտությունների զարգացման միջոց	
NIKOGHOSYAN N. Dialogue as a means of developing speaking skills	
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/ Литературоведение/ Literary Criticism	
ԲԱԲԱԶՅԱՆՅԱՆ Ա. Ակադեմիական վեպի ժանրը ժամանակակից ամերիկյան և եվրոպական գրականության մեջ	305
БАБАДЖАНЫН А. Академический роман в современной американской и европейской литературе	
BABAJANYAN A. Academic novel in modern American and European literature	
ԶԱԲԱՐՅԱՆ Ն. Ամերիկյան սոցիալական վեպի ժանրը և Սինքլեր Լուիսը	317
ЗАКАРЯН Н. Жанр американского социального романа и Синклер Льюис	
ZAKARYAN N. The American social novel and Sinclair Lewis	
ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ Ա. Խղճի խայթի պրոբլեմի բացահայտման մեթոդը «Ամերիկյան երազանքի» կոնտեքստում Կուրտ Վոնեգուտի «Աստված Ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուոթեր» վեպում	329
ШАХМУРАДЯН А. Методика раскрытия проблемы угрызения совести в контексте «американской мечты» в романе Курта Воннегута «Дай вам бог здоровья, мистер Розуотер»	
SHAHMURADYAN A. The method of revealing the problem of remorse in the context of the “American dream” in “God Bless You, Mr. Rosewater, or Pearls before Swine” by Kurt Vonnegut	
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ա. Ինքնակենսագրական տարրը Վ. Սարոյանի ստեղծագործության մեջ	337
ПЕТРОСЯН А. Автобиографический элемент в произведениях В. Сарояна	
PETROSYAN A. The autobiographical element in the works of William Saroyan	
Տեղեկություններ հեղինակների մասին	343
Сведения об авторах	
Information on the contributors	

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով, մեկ տպագիր օրինակով համակարգչային շարվածքով (**Microsoft Word 97-2003 ծրագրով, Times Armenian, Times New Roman** տառատեսակներով): Հոդվածը պետք է ունենա հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր՝ 50-60 բառի սահմաններում, 6-8 բանալի-բառեր, հեղինակի մասին համառոտ տեղեկություն: Հոդվածի հետ անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի էլեկտրոնային տարբերակը մագնիսական կրիչով:

Հոդվածի առաջին էջի վերին տողի աջ անկյունում 12 pt տառաչափով, թավ (Bold) գրվում է հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը (ազգանունը՝ գլխատառերով, օրինակ՝ **Արմինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**), շեղատառ (Italic) բուհի կամ գիտահետազոտական կենտրոնի անվանումը, գլխատառերով, թավ (Bold) հոդվածի վերնագիրը:

Հոդվածում օգտագործված գրականության հղումները տրվում են փակագծերում. նշվում են հեղինակի ազգանունը, տպագրման տարեթիվը և համապատասխան էջերը, օրինակ՝ /Payne, 2000: 168-170/: Գրականության ցանկը տրվում է հոդվածի վերջում՝ այբբենական կարգով:

Հեղինակը պատասխանատվություն է կրում իր ներկայացրած տեղեկությունների համար: Հրապարակվող նյութերը պետք է գրախոսվեն և երաշխավորված լինեն տպագրության համապատասխան ամբիոնների կողմից. բոլոր կարծիքները, երաշխավորագրերը պահպանվում են խմբագրությունում: Հրապարակվող նյութերի բնագրերը չեն վերադարձվում:

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղում:

Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրների նմուշ

1. Արրահամյան Ս. Գ. Հայերենի կետադրություն, Երևան, «ԼՈՒՅՍ», 1999:
2. Austin J. L. How to do things with words. Oxford: Oxford University Press, 1962.
3. Langacker R.W. Foundations of cognitive grammar // *Theoretical prerequisites*, v. 1. Stanford: Stanford University Press, 1987.
4. Гинзбург Р.С. О взаимосвязи лингвистического и экстралингвистического в лексике // *Иностр. языки в школе*, 1972, № 5.
5. Иванов В.И. Язык, текст, речь // Электр. ресурс: <http://www.textum.ru/article/ivan/html>
6. Brin D. Contrary Brin, 2011 // URL: <http://davidbrin.wordpress.com/2011/04/08/> (Retrieved July 8, 2015)

Խմբագրության հասցեն. Երևան 0025, Ալ. Մանուկյան 1
Адрес редакции: Ереван, ул. Ал. Манукяна 1
Էլ. փոստ՝ englishdep2@ysu.am

Հանձնվել է տպագրության 19.05.2016թ.

Թուղթը՝ օֆսետ: Չափսը՝ 84x100¹/₁₆

Տպագրական 30.5 մամուլ:

Տպաքանակը՝ 100: